

491.99-5
—
7-14





Էնջ Հ. Կառավարչությ

Հայաստանի Հանրապետության Կոմիսարժություն
(Եղանակ. Միհայլոսկի պրօսպեկտ, № 101)

ԱՐԵՒԵԼԱՅԱՅ ԱՃԽԱՐՅԱԲԱՆԻ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԸՆԴՀԱՐՁՄԱՆ ՆԵԽԱԲԵՆՈՎ, ՈՐԻ ՄԵջ ԼԱԽԱԲԵՆՈՒՄ Է
ՈՒՂԱԾԴՐԵԿԸ ՀԱՐՑԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ա Պ Ա Բ Ե Գ
Օ. ԳԱՎԱՐԱԾԵՍԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տպարան «Էջապետական», Ելիզ. փողոց, № 17
1913

28 MAR 2013

6232

04 MAY 2010

3-131 195

ԱՐԵՒԵԼԱՎԱՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՆԻ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԸՆԴԵՐՉԵԿ ՆՅԱԾԲԵՆՈՎՎ, ՈՐԻ ՄԻԶ ԼՈՒԾԲԵՆՈՒՅՆԻ Է
195 ՈՒՂՂԱԳԻՐԵԿԱՆ ՀԱՐՑ

495
50 - 495



ՄԱՍՆ ԱՐԱՋԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

1.004
16364

ԱՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ

կազմեց
ՅԱՂԱՋԵԱԾ

Ե. ԴԱՎԻԹՅԱՆ

7/11., 1922

Հրատարակութիւն «Պետական պատմութեան» Կովկասեան Ընկերութեան
(Տիգլուս. Михаиловский проспектъ № 101)

**Տպարան «Էսպերանտո», Ելիզ. փողոց № 17
1913**

ՆԱԽԱԲԱՆ

Տասնունինգ տարի է, որ ես նուիրուած եմ բառարանագրական գործին և այս ժամանակամիջոցում առիթ եմ ունեցել իմօտոյ ծանօթանալու մեր աշխարհիկ լեզուի քերականական կազմի հետ։ Կարդալով հայ պարբերական մամուն և հայ հեղինակների գործերը, ես անընդհատ պատահում էի այնպիսի երևոյթների, որոնք ինձ ծանօթ լեզուներում գոյութիւն չունին (իսկ ինձ ծանօթ են, բացի ոսերէնից, գերմանէրէնը, ֆրանսէրէնը, յունարէնը, լատինէրէնն և երայեցերէնը)։

Ոչ միայն համբակների, այլև առաջնակարկ հայ հեղինակների գործերում մենք խախտուած ենք տեսնում աշխարհաբառի քերականութեան տարրական կանոնները։

Միւնոյն հեղինակի մօտ մենք յաճախ կարդում ենք. սուրբ —սուրբի և սրբի, թուփ—թուփի և թփի. միս—միսի և մսի. բիբ—բիբի և բբի, իղձ—իղձի և ըղձի, իղձեր և ըղձեր. սերունդ—սերունդի և սերնդի. կէս—կէսի և կիսի. սենեակ—սենեակի և սենեկի. կոյս—կոյսի և կուսի. համբոյր—համբոյրի և համբուրի. նա զրուել է և նա զրունել է¹⁾). մի անիր և մի արա. մի մոռանար և մի մոռացիր, մի մօտեցնիր և մի մօտեցրու, մի վշտացնիր և մի վշտացրու, մի հարցնիր և մի հարցրու, և այլն ևայլն։

1) «Ես ցերեկը թը եմ զրօմնել» (Շիրվանդադէ, Եւգինէ, եր. 349); «Մի ընդհատիր ինձ և մի ընկերացիր (sic!) ինձ» (Ահարոն. «Երկիր», 1906, № 48). Գաբր. Սունդ. «Ամուսիններ» հաւատա (եր. 131 և 136), հաւատացիր (եր. 122 և 160); «Մի արթնացրու (sic!) ինձ» (Ահար. «Իստալիայում» եր. 315); իսկ պ. Շիրվանզադէն ահա թէ ինչպէս է հոլովում ով հարցական դերանունը. «ումին (sic!) զրկեցի, ումից աւելորդ վերցրի, ումին (sic!) պակաս տուեցի» («Պատուի համար» եր. 23); Սրանք մի քանի նմուշներ են մեր առաջնակաբդ գրողների գործերից։ Սյս նախարանում աւելի օրինակներ առաջ բերելու հնարաւորութիւն չկայ։ Մեր լեզուի աղճաւատման պատկերը մենք կը տանք առանձին գրքուկով։

Ակամայ մարդ իրան հարց է տալիս, թէ ի՞նչն է այս այշանդակութեան պատճառը. արդեօք այն, որ աշխարհաբառը մի անանցեալ, յեղյեղուկ ժարգոն է, որն ամէն ոք կարող է զործ ածել, ինչպէս ուզենայ, թէ նա ունի իր անցեալը, հաստատուն հիմքերն ու կանոնները, բայց մենք ենք տգիտաբար մեղանչում այդ բոլորի դէմ:

Եթէ մենք միենոյն հեղինակի գրուածքում միօրինակութիւն տեսնէինք, կարող ենք խառնակ գրութիւնը լեզուի անկատար վիճակին վերագրել: Բայց քանի որ միենոյն հեղինակն ինքնին իրան արամագծօրէն հակասելով վերև յիշուած երկու ձեերն ևս գործ է ածում, հարկադրուած ենք հեղինակի գիտական հմտութիւնը կասկածի ենթարկել և հարցն անաշառ կերպով լուսաբանելու համար դիմել մեր լեզուի անցեալին և ներկային, որը պահպանուել է կենդանի ժողովրդի մէջ: Արդ, կասկած չէ կարող մինել, որ աշխարհաբառը գրաբառից աւելի հին է այն մտքով, որ երբ Մուրը Մեսրոպը հայ նշանագրերը հնարելով սկսեց հայերէն գրել, նա լոկ հայերէն նշանագրելով գրի անցրեց արդէն գոյութիւն ունեցող լեզուի բառամթերքը, ոճարանութիւնն և քերականութիւնը: Այս բոլորը Մեսրոպն ինքը չստեղծեց, այլ միայն գրի անցրեց: Դրանով ստացուեց մեր զրոց լեզուն, որի մէջ շեշտի կանոնները խստիւ պահպանուած ենք գտնում, և այս կողմից Մեսրոպեան գրաբառը սաստիկ նման է դասական յունարէնին: Իսկ շեշտի կանոնները կայանում են նրանում, որ երկրաբառը շեշտը կորցնելով փոխում է հասարակ ձայնաւորներից երկարը շեշտը կորցնելով փոխում է կարճ ձայնաւորի. Իսկ վերջինս նոյն պայմանում փոխում է կիսաձայնի, որը սովորաբար չէ գրում:

Գրաբառում մենք տեսնում ենք ճիշտ նոյն պատկերը. կո՛յս —կուսիք, լրյու—լրւահյ, ո՛յժ—ուժնյ ելն. մատեա՛ն—մատեսիք. աւտեա՛ն—ատենիք. սենեա՛կ—սենեկի և այլն. ծէ՛ս—ծիսիք, կէ՛ս—կիսնյ. է՛գ—իգիք. պարտէ՛զ—պարտիզիք և այլն. բի՛թ—բթիք. բի՛ծ—բծնյ. մի՛ւրը—մսնյ: ի՛ղձ—ըղձիք ելն. սո՛ւրը—սրբնյ. լո՛ւմբ—խմբիք. թուփ—թփնյ ելն:

Մեսրոպից մինչև մեր օրերը 1500 տարի է անցել, բայց լեզուի կանոնները մնացել են արխախառ: Այսօր ևս ժողովուրդն ասում է. սրբի և սրբել ուժի և ուժով, լուսաբաց, կուսածաղիկ և կուսածին, մսի և մսացու, կիսել և կիսու, կիսու, պարտիզ-

պանական և պարտիզպանութիւն, ծիսական և ծիսակատարութիւն ելն ելն: Պարզ է ուրեմն, որ մեր հեղինակները գրելով սուրբի, խումբի, թուփի, սկրունդի, կէսի, ծէսի, բիծի, միսի, իղձի, պարտէզի ելն ելն չարաչար մեղանչում են լեզուի կանոնների գէմ¹⁾:

Նոյնը պէտք է ասել նաև հրամայական-արգելականի կրկնակի ձեւերի մասին: Արդ, հրամայական-արգելականը կազմւում է բայի անորոշ եղանակից, անել—մի անիր. մոռանալ—մի մոռանար. մօտեցնել—մի մօտեցնիր. վշտացնել—մի վշտացնիր, հարցնել—մի հարցնիր ելն ելն (ասում են նաև մի անիր, մի մոռանալ ելն):

Իսկ մի արա, մի մոռացիր, մի մօտեցրու, մի վշտացրու, մի հարցրու ահոելի ձեերը արդիւնք են տգիտութեան: Նուիրուել ազգի մտաւոր շահերին ծառայելու վեհ գործին, բարերարուել ազգից և միենայն ժամանակ չուզենալ ուսումնականիրել մայրենի լեզուի քերականութեան տարերքը, այդ մեր կարծիքով անբարեխղնութիւն է: Ժամանակ է վերջ տալ ախարհիկ լեզուն ր զնաւատելու ախտին, նրա մարտիրոսագրութիւններին և մեր զրոյններին անհերքելի փաստերով ապացուցել, որ գոյութիւն ունի աշխարհիկ լեզուի քերականութիւն, որը նրանք պարտական են ուսումնասիրելու, եթէ չեն ուզում յետակայ սերնդի անէծքը վաստակել:

Ահա այս նպատակով եմ կազմել ներկայ ձեռնարկը: Այդ ձեռնարկը բարեխղնութէն ուսումնասիրողը հազիւ թէ ժխտէ այն հիմունքները, որոնց վերայ կառուցուած է նրա չէնքը:

Այժմ դառնանք աշխարհիկ լեզուի ուզզագրական խնդրին: Բոլոր ուզզագրական շփոթն առաջացաւ կրաւրական բայի սեռանշից, որ սկզբում, գրաբառի ազգեցութեան տակ արտայայտուեցաւ ու ձայնաւորով: Գրաբառում պատահում են միայն բայածականներ այս սեռանշով, օր. հերձուած, ստեղծուած, առեղծուած, յօրինուած ելն: Սակայն նոյն սեռանշով բայեր երբէք չեն պատահում, որովհետեւ գրաբառում կրաւրական բայը յատուկ սեռանիշ չունէր և արտաքին ձեռվ ներգործականից չէր զանագանում, ստեղծել, եղծանել, յօրինել, գրել ելն բայերը գրաբառում և ներգործական, և կրաւրական նշանակութիւն ունին:

1) Մեր խօսքը կովկասահայ գրական բարբառի մասին է, որն իր քերական կազմով գրաբառին շատ մօտիք է: Իսկ ասճկահայ գրական բարբառում շեշտի կանոնները հիմնովին խախտուած են:

Այս տարօինակ երևոյթի պատճառը, այսինքն որ գրաբառ բայց չունենալով յատուկ սեռանիշ, տուել է յատուկ սեռանշով բազմաթիւ բայածականներ, տակաւին պարզուած չէ: Բայց որ այդ բայածականները գրաբառում հնչուում էին ձիշտ այնպէս, ինչպէս գրում էին, այսինքն, հերձցած, ստեղծցած, առեղծցած, յօրինցած ևն, և ոչ թէ—հերձած, ստեղծած, առեղծած, յօրինցած¹⁾), այդ անտարակուսելի է:

Կրաւորական բայց յատուկ սեռանշով մեր աշխարհիկ լեզուի ծնունդն է և սկզբում բնականաբար այդ սեռանիշը արտայայտուեցաւ ու ձայնաւորով (սպանուել, ստեղծուել, յօրինուել, գրուել, ջնջուել ևն), քանի որ նոյն ձայնաւորով, ինչպէս ասացինք, գրաբառն արդէն տուել էր բազմաթիւ բայածականներ: Մեր նորագոյն գրականութեան ռահվիրանները, Խաչատուր Սբովիան, Գ. Օտեան, Ն. Ռուսինիան, բժ. Հախվերդան (Սայեաթ Նօվայի հրատարակիչը), կարդալով վերոյիշեալ կրաւորական ձեւերն և լսելով կենդանի ժողովրդի բարբառը, բնաղդմամբ նկատեցին այն վիճը, որ բացուած էր գրաբառի եւ արեւելանայ աշխարհաբարի մէջ, նկատեցին, որ վերջինիս մէջ գրաբառի արտասանութիւնը խախտուած էր: Այս զգալով (սակայն չգիտակցելով), նրանք սկսեցին խորշել գրաբառի արտասանութիւնից և իբրև ժողովրդի հարազատ գաւակներ, հնազանդուելով նրա ձայնին, ընդունեցին նրա արտասանութիւնն և սկսեցին գրել սպանվել, ստեղծվել, յօրինվել գրվել և այն²⁾: Սակայն սրանք այդ

1) Հերձօսած, հերձած ևն: Մենք ոսերէն ատաւղարձրինք, որովհետեւ ոսերէնը մեր ընթերցողների մեծամասնութեանն աելի ծանօթ է: Քանի երոպական լեզունները:

2) Այս բայորից երեսում է, թէ որքան անհիմն է պ. Ն. Աղոնցի (ա. „Բանքեր գրակ. և արւ.“ Բ. գիրք, եր. 135) և ուրիշների կարծիքը, իբր թէ ձայնաւորից նախաղաս ու-ն թէ գրաբառում և թէ աշխարհաբառում վ հնչուելիս լինէր: Երանէ թէ ու-ն ձայնաւորից առաջ հնարաւոր լինէր վ հնչել, երանէ թէ սուրբ Մերսոպը գրելով կատուի, ծուոյ, լուոյ կարդալիս լինէր կատվի, ձվոյ, լվոյ ևն: Եթէ այդպէս լինէր, ուղղագրական ծանրակշիռ ինսդիրը կը վերածուէր մի տղայական վէճի և վ-ի առաւելութեան մասին, ինչպէս այդ հասկացել են հիւնամուներն և վեւամոները: Բայց սուրբ Մերսոպը գրելով Աստուած, կատուի, ծուոյ, լուոյ, կարդում էր Աստցած, կատցի, ձցոյ, լցոյ: Եթէ նա ու-ն վ կարգալիս լինէր, պիտի վ էլ գրէր, քանի որ այդ տառը նրա հնարած այլբենում գոյութիւն ունէր: Նա պիտի գրէր: Աստցած, կատվի, ձվոյ, լվոյ կամ Աստուած, կատւի, ձուոյ, մենք Աստցած, կատվի, ձիվ լվի կամ Աստուած, կատվի լւի, ձուի, որովհետեւ նայ լեզուի ողուն հակառակ է և ոչ մի հնարաւորութիւն չկայ ու ձայնաւորին վ կամ և բաղաձանի հնչինը յատկացնելու Մրան կարող է իբրև անալոգիա ծառայել ոսերէնում ոլատիտ բայի հնչումը ներկայում և կրաւորական բայածականում: Որովհետեւ այս ձեւրում շեշտը ընկնում է նախավերջին վանկի վրայ, հրամայորաբար պահանջուում է «ոլատիտ», «ոլատյան», «ուլաշեն», «զալաշեն» ձևերն արտասանել «ոլոտիտ», ոլոտյան, զալուշեն, ինչպէս այդ առաջարկել է Գրօնն իր սերէնի ուղղագրութեան ձեռնարկում, եր. 23: Սակայն ոչ մի ոռու այսօր Գրօնն առաջարկած կանոնը չի կատարում, այլ բոլոր ոռուներն էլ այս ձեւրը կամ ուղիղ գրում և սիալ արտասանում են (ոլատիտ, ոլատյան և այլն) և կամ սիալ գրում և ուղիղ արտասանում են (ոլոտիտ, ոլոտյան, ոլուշեն):

Հընդհանրացին լեզուի ամբողջ բառամթերքի նկատմամբ, չգրեցին Աստված, նվաստ, նվէր, նվագ, կատվի ևն, Այդ անելը վերապահուած էր հանգուցեալ Ղազարոս Աղայեանին և իր հետեւրդներին:

Ղազարոս Աղայեանի արածն ամենևին նորութիւն չէր, այլ լոկ հնի կրկնութիւնը, այն զանազանութեամբ միայն, որ նա վ-ն փոխարինեց և-ով: Սակայն այս ևս նորութիւն չէր, որովհետեւ նրանից դարեր առաջ գրած ձեռագրերում պատահում էն նուսաստ, նւաստ և նվաստ գրութիւնները («Բանբեր», Բ., եր. 134):

Սակայն հմնգուցեալն իր հիւնագրութիւնը մի նորութիւն և պանծալի գիւտ կարծելով, կազմեց «նոր» ուղղագրութեամբ հայ ծիսական ուսումնարանների համար ձեռնարկներ և առանց նշանակութիւն տալու իր դէմ բարձրացած բողոքներին, տարածեց հիւնագրութիւնը հայ ուսումնարաններում: Ուստի և ներկայ սերնդի մի մասը, որը գրագիտութիւնը սովորել է հանգուցեալ Աղայեանի կազմած դասագրերով, հիւնագիր է: Հիւնագիրները «նորագիւտ» ուղղագրութիւնը տարածելով լեզուի ամբողջ բառամթերքի վերայ, նախ առանց ազգի հաւանութեան խախտեցին նրա նուիրական աւանդի, մայրենի լեզուի, աւանդական ուղղագրութիւնը, որը մեր կարծիքով աններելի սիալ էր: Երկրորդ, նրանք մեղանչեցին լեզուի և լեզուագիտութեան մի քանի հիմունքների դէմ և ահա թէ ինչու: Աստուածաշնչում յիշուած և բոլոր ազգերից էլ անփոփոխ կերպով տառագրածրած Սամուէլ (=Աստծուց լսուած), էմմանուէլ (=ընդ մեզ Աստուած), և Փաւատու Բիւզանդացու մօտ յիշուած Մանուէլ յատուկ անուններն

Աստուած, կատուի, ձուի, լուի, կարդում ենք Աստցած, կատցի, ձցի և ոչ թէ Աստված, կատվի, ձիվ լվի կամ Աստուած, կատվի լւի, ձուի, որովհետեւ նայ լեզուի ողուն հակառակ է և ոչ մի հնարաւորութիւն չկայ ու ձայնաւորին վ կամ և բաղաձանի հնչինը յատկացնելու Մրան կարող է իբրև անալոգիա ծառայել ոսերէնում ոլատիտ բայի հնչումը ներկայում և կրաւորական բայածականում: Որովհետեւ այս ձեւրում շեշտը ընկնում է նախավերջին վանկի վրայ, հրամայորաբար պահանջուում է «ոլատիտ», «ոլատյան», «ուլաշեն», «զալաշեն» ձևերն արտասանել «ոլոտիտ», ոլոտյան, զալուշեն, ինչպէս այդ առաջարկել է Գրօնն սերէնի ուղղագրութեան ձեռնարկում, եր. 23: Սակայն ոչ մի ոռու այսօր Գրօնն առաջարկած կանոնը չի կատարում, այլ բոլոր ոռուներն էլ այս ձեւրը կամ ուղիղ գրում և սիալ արտասանում են (ոլատիտ, ոլոտյան և այլն) և կամ սիալ գրում և ուղիղ արտասանում են (ոլոտիտ, ոլոտյան, ոլուշեն):

անգամ նրանք «ուղղագրեցին» Սամէլ, կմմանէլ և Մանէլ, առանց իրենց հաշիւ տալու, որ դրանով նրանք բոլոր ազգերի լեզուների դէմ են գնում: Ոչ մի կասկած չկայ, որ նոյն հիւնամոլները վաղը կամ միւս օրը Պուանկարէ ֆրանսիական հասարակապետութեան նորընտիլ նախագահին պիտի վերամկրտեն Պանկարէ, իսկ ալտրուիզմ բառը պիտի կարդան ալտրուիզմ, որովհետև հիւնամոլների լոգիկայով ուն ձայնաւորից առաջ միշտ էլ և է կարգացւում: Իսկ վեւամոլներն այս անունները այսուհետև կը գրեն. Սամէլ, Մանէլ, Պանկարէ, ալտրուիզմ (չէ որ ուն ձայնաւորից առաջ միշտ էլ վ է հնչում): Սակայն հիւնամոլներն և վեւամոլները ուն և կամ վ հնչելու կանոնը սահմանելիս պէտք է նաև մի միջոց հնարէին վերոյիշեալ թիւրիմացութեան առաջն առնելու: Ինչպէս յայտնի է, ց (գ) տառը ֆրանսիրէնում երբեմն ժ է արտասանում, որ. générale, génie, Géorge, Gille ևն: Ֆրանսիրէնն այս կանոնն ընդունելով, գտել է միջոց նաև ցոյց տալու, թէ երբ ց-ն զ է արտասանում որ. guerre, guérisson, Guillaume. Մեր անմահ Մեսրոպն ևս, հնարելով և նշանագիրը, որն և՛ բաղաձայնի, և՛ կիսաձայնի նշանակութիւն ունէր, հնարեց նաև վ-ն, որպէսզի ծով, կով, սով և նման բառերը չկարգացւեն ծու, կու, սու, ինչպէս այդ պընդում է հէնց ինքը պ. Ագոնցը: Իսկ մեր «նոր Մեսրոպները» իրենց բարեմիտ գիւտերով բարելոնեան խառնակութիւն են ձգել մեր լեզուի մէջ:

Բոնութեան արձագանգը բռնութիւնն է: Հիւնամոլները սկսեցին կամաց-կամաց վ տառի կիրառութիւնը այբբենից հանել, և հիւնագրութիւնը օրէցօր առաջադիմում էր շնորհիւ Զ. Աղայեանի և ուրիշների հիւնագիր գասագրերի: Հակառակորդների բողոքները զուր էին անցնում: Այն ժամանակ հրապարակ ելաւ հայագէտ պ. Ստ. Մալխասեանը, որը հիւնը ձայնաւոր տառ յայտարարելով, պահեց միմիայն իւ երկբարբառում, մնացած գէպքերում փոխարինեց վ-ով, գրելով. Աստված, ալար, աղնիվ, ավագ, գրլում է, գնլում է, կատվի ևն: Դրանից առաջ պ. Ստ. Մալխասեանը ուագիր էր, վերոյիշեալ բառերը զրում էր ու-ով, (զրուում է, գնուում է, կատուի ևն) և հետեւելով ընդհանրացած մոլար հայեացըին, իբր թէ ուն ձայնաւորներից առաջ վ լինէր կարգացուիլիս, վերոյիշեալ բառերը տողագարձնում էր, գըրուում է, գըն-ուում է, կատ-ուի և կարդում էր գըր-Յում է, զըն-

Յում է, կատ-Յի, մի խօսքով նա խնդրի էութիւնը միւսների պէս չէր ըմբռնել և կարծում էր, թէ հարցը ւ-ի և վ-ի կիրառութեան մասին է, այն ինչ, ինչպէս վերև տեսանք, հարցը ց (ՕԱ=Ու) և Յ (Վ=Վ=Վ=Վ) հնչիւնների մասին էր: Վերև մենք ասացինք, որ ու ձայնաւորը երբէք չէր կարող իր բնութիւնը փոխել և իրը բաղաձայն վ (ւ) արտասանուել, որ Մեսրոպը գրելով կատուի, արտասանում էր կատուի կամ կատուի:

Պ. Ստ. Մալխասեանը, ցանկանալով դեին Բեեղերուղի միջոցաւ հալածել—հիւնագիրների դէմ նրանց զէնքով, այսինքն բռնութեամբ, կառւել, զիտմամբ, առանց որևէ է գիտական հիմքի գիմհց վեւամոլութեան, ցանկանալով դրանով խոչընդուռ հանդիսանալ հիւնագիր ձեռնարկների տարածութելուն: Սակայն նա դրանով մեղանչեց պատմական ճշմարտութեան դէմ: Բանն այն է, որ ւ-ը գեռ հինգերորդ դարում ոչ միայն կիսաձայն, այլև բաղաձայն էր և իրքեւ բաղաձայն բառերի միջում և վերջում բացառիկ կիրառութիւն ունէր: Այս անհերքելի փաստերով ապացուցել էր պ. Ն. Աղոնցը: Սա իր հրատարակած «Բանքեր գիտութեան և արուեստի», Բ., Եր. 129—154 զետեղած հմտալից յօդուածում առաջ է բերում բազմաթիւ օտար բառեր, որոնց միջում և վերջում Յ (Վ=Վ) հնչիւնը տառագարձրած է հայերէն ւ-ով և ոչ թէ վ-ով: Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ շատ խեղճու կրակ հայ ուսուցիչներ պ. Ստ. Մալխասեանի միտումաւոր քարոզից մոլորուած ուզում էին «ակագեմիկոսներին» զիմել և իմանալ, թէ վ և նշանագրերից որն է իսկապէս արտայայտում Յ (Վ=Վ) հնչիւնը, մենք այստեղ առաջ ենք բերում պ. Աղոնցի յօդուածի մի մասը, ուր առաջ են բերուած օտար բառերը հայերէն տառագարձութեամբ հանգերձ. լտ. Խաճից (հյ. նաւ), պրս. Գրաթ (հյ. գրաւ), լտ. աօճից (հյ. նաւ), լտ. աօյց (հյ. նաւ), մնակ, մաթ (հյ. տիւ), ասոր, կսէսից (հյ. նաշիւ), գենդ. ծեսա (հյ. սեաւ): — Պհլ. օասար (հյ. վաւեր), պհլ. օասար (հյ. աւաշ), պհլ. օասար (հյ. աւար), պհլ. օասար (հյ. աւաշ), պհլ. օասար (հյ. գիւան), պրսկ. գաշազ (հյ. գաւազան), պհլ. Կաթար (հյ. Կաթատ), պրսկ. Արտաօզձան¹⁾ (հյ. Արտաւազդ) և այլն և այլն:

1) Նոյն բառերի լատիներէն տառագարձութիւնն է navis, girav, avis և այլն: Մենք մեր ընթերցողների յարմարութեան համար սահերէն տարագարձութիւնն առաջ բերինք:

Աչքի առաջ ունենալով նաև այսուհետեւ, հազիւ, արդարեւ, իբրեւ, կամաւ, վերեւ, ներքեւ, ազնիւ, արդեւք, թագաւոր, հոգեւոր, զօրաւոր, կարեւոր, շահաւէտ, գինեւէտ և նման բազմաթիւ հայերէն բառերի ուղղագրութիւնը, պ. Աղոնցն եկեւ էր այն ճիշտ եղբակացութեանը, որ տակաւին հինգերորդ դարում ւ-ը ոչ միայն կիսածայն, այլև բաղածայն էր և գրում էր բացառապէս բառերի միջում և վերջում, մինչդեռ վ-ն բառերի միջում և վերջում գրում էր միմիայն ո-ից յետոյ, թիւրիմացութեան տեղիք չտալու համար, օր. սովորեւ, բոլեւ, սով, կով ևն (որովհետև չէր կարելի գրել սուրեւ, բուեւ, սու, կու ևն):

Պ. Աղոնցի այս յօդրւածը յայտնի էր պ. Ստ. Մալխասեանին: Մակայն նա կանգնած լինելով կուսակցական հողի վերայ, կուսակցաբար էլ վարուեց, կամենալով զոռով հիւնը վտարել Մեսրոպեան այբբենից, որով և ուղղագրական շփոթն աւելի ևս սաստկացաւ: Հարկ չկայ բացատրելու, որ վ-ն կոշտ, իսկ ւ-նն իբրև բաղածայն փափուկ արտասանութիւն ունի և չպէտք է այս երկու տառերը միմեանց հետ շփոթել:

Ահա հիւնագրութեան և վեւագրութեան համառօտ պատմութիւնը:

Սյժմ կրկին դառնանք բուն խնդրեն: Որ Սուրբ Մեսրոպը գրելով ստեղծուած, կատուի, լուոյ, ձուոյ, այդպէս էլ կարգում էր, դրանում, ինչպէս ասացինը, ոչ մի կասկած չկայ: Եթէ այս և նման բառերում Մեսրոպն և իր ժամանակակիցները ու-ն վ կամ և լինէին արտահանելիս, այն ժամանակ պիտի գրած լինէին. ստեղծված, կատվի, լվոյ, ձվոյ և կամ ստեղծուած կատու և այլն: Զէ՞ որ թէ վ և թէ և տառն ինքը Մեսրոպը գտաւ: Ուրեմն քանի որ Յ (W—V) հնչիւնի համար Մեսրոպեան այբբենում երկու նշանագրեր կային, ինչ կարիք կար վ-ի կամ ւ-ի տեղ ու գրել և թիւրիմացութիւնների առիթ տալ:

Մակայն լիզուագէտ պ. Ն. Աղոնց այս ակսիօմայի դէմ աշքերը խփելով, պնդում է, որ զեռ հինգերորդ դարում հայերը վերոյիշեալ և նման բառերում ու-ն և են արտասանելիս եղել, հետեւեալ զարմանալի տրամաբանութեամբ. «Երբ նախադաս. ձայնաւորը սղուում է», զրում է պարոնը¹⁾, «հիւնը մնալով բաղածայնի առաջ, թէեւ պահում է իր հնչիւնը²⁾, բայց գրութեան

մէջ փոխւում է ու-ի»: Իբրև ապացոյց իր ասածի պարոնը ստորև առաջ է բերում մի շարք պարսկերէնից փոխ առած հայերէն բառեր, որոնք սակայն իր ասածը ոչ թէ հաստատում, այլ գլուխին հերքում են: Պ. Աղոնցի ասելով պահլաւ. պատիւատա բառի սկզբնական ձևը հայերէնում եղել է պատիւատ, յետոյ «ի-ի սըդմամբ» պատլւաստ և յետոյ պատուաստ: Այսպէս և պահլաւ. պատիւարա, հայ. պատիւար—պատլւար—պատւար—պատուար և այն. Բոլորովին չի հասկացւում, թէ ինչպէս, ինչ հիման վերայ այս բառերում ւ-ն փոխուելով ու-ի, այնուամենայնիւ իր ըսկը-նական հնչիւնը (և) պահպանում է:

Պարոն Աղոնցը նոյն անհասկանալի բացատրութիւնն է տալիս նաև իւ-ով վերջացող բառերի շեղ հոլովներում երևացող առեղծուածական ու-ին. հաշիւ—հաշու-ւի=հաշուի (որն ըստ պ. Աղոնցի կարգացուելիս է եղել հաշւի=հաշվի)

Յետոյ (եր. 143) պ. Աղոնցն ինքը կասկած է յայտնուած իր ենթագրութեան մասին: Այսաեղ հարկ ենք համարում յիշել, որ պ. Աղոնչի ուսուցիչ պ. պրօֆ. Մառը իւ-ով վերջացող բառերի շեղ հոլովներում երևացող ու-ի առեղծուածին բոլորովին ուրիշ բացատրութիւն է տուել, որը, չգիտեմ ինչնու, պ. Աղոնցի ուշագրութիւնից վրայի է: Վերջինս ենթագրում է¹⁾, որ իւ-ով վերջացող գոյականների սկզբնական ձևն իրը թէ եղել է նախապատմական հայերէնում ոյւ, որը շեշտի աղդեցութեամբ դարձել է ու, ապա ի, օր. թոյւ—թու—թիւ, կոռյւ—կոռւ—կոփիւ, հովոյւ—հովու—հովիւ և այլն: Իբրև անալօգիա պրօֆ. Մառն առաջ է բերել հայերէն լրյու—լրու—լիս բառը: Եթէ այս ենթագրութիւնն ուրիշ լինէր, իհարկէ սրանց սեռականում յայտնուող ու-ն հասկանալի կը լինէր (թուոյ, կոռոյ, հովոյ): Մակայն պ. պրօֆէսօրի ասածն է և կը մնայ լոկ ենթագրութիւն, որը նոյն իսկ իր աշակերտին ընդունելի չէ:

Ուրեմն իւ վերջացող գոյականների շեղ հոլովներում երևացող ու-ի առեղծուածը տակաւին պարզուած չէ:

Սյժմ ներեկի լինի նոյն խնդրի մասին մեր կարծիքն ևս յայտնել: Երդ, մեր գասական լեզուում յ (օւ=ու) փափուկ և Յ (W=V=L) կոշտ հնչիւնները միմեանց հետ շփոթւում էին,

1) Բանքեր, եր. 140:
2) Մասրագծումը մերն է:

1) Грамматика древне-армянского языка. Этимология. С. П. Б.-стр. 28 и 41

և առաջին փափուկ հնչիւնը միշտ գերադասւում էր ի վեաս երկրորդի¹⁾. ու-ով վերջացող գոյականների²⁾ շեղ հոլովերը, որոնց մէջ գրում էին ով, ուա, ուո, ուօ (և նչ թէ վի, վա, վո, վօ կամ վի, աւ աօ) են ձերը, ու-ի գերադասութեան համար արդէն հաստատուն հող էին պատրաստել: Հետևելով այս կանոնին, մեր նախնիները նաև իւ վերջացող բառերի շեղ հոլովերում երեացող ւ-ն դարձին ու և սկսեցին այդպէս էլ կարդալ, որով հովիւ, հաշիւ, թիւ, կովիւ, պատիւ և նման բառերից ստացուեցան հովուի, հաշուի, թուոյ, կուոյ, պատուի ձերը, այնինչ սրանք շեշտի կորստից և ի ձայնաւորի սղումից յետոյ պիտի գրուէին և հնչուէին հովլիւ, հաշըլիւ, թլոյ, կուրոյ պատըւոյ=հովլիւ հաշւի, թւոյ, կուոյ, պատոյ: Որ մեր նախնիները յաճախ վ (ւ) կոշտ բաղաձայնը կամայօրէն տառադարձնում էին փափուկ ու ձայնաւորով, դրա համար մենք ունինք բազմաթիւ անհերքելի փաստեր: Այսպէս նրանք Ալբանիա (Ալբանիա) կամայօրէն տառադարձել են Աղուանք (փոխանակ Աղվանք կամ Աղուանք տառադարձնելու), Եօթներորդ դարու պատմագիր Սերէսոն Արար-վեզ (Ապար-օչօ) զուտ պարսկական յատուկ անունը տառադարձրել է Ապրուէզ և նչ Ապրլէզ կամ Ապրլէզ: Հարկաւոր է աւելի հաստատուն փաստ գտնել մեր նախնիների կամայականութեան: Մենք ևս, մանաւանդ տաճկահայերը, ընտելացած լինելով վ-ը կամ ւ-ը ու տառադարձնելու տիտին, Schwaben, Sweden, Zwingli, Մոսկօ, Արագօ, Դարսին, քարու և այն բառերը տառադարձրել ենք Շուտրիա, Շուեգիա, Ցուինգի, Մուկուտ, Արագուա, Դարուին, կուարզ և այն: Այս և նման անունները սիսալ տառադարձնելով, սիսալ էլ կարդում ենք, որով և օտար-

1) Ուրիշ լեզուներում ևս նման երեսիթ նկատելի է: Հին լատիներէնում ու հնչիւնի համար առանձին տառ գոյութիւն չունէր, այլ ու տառն երբեմն վ (Յ), իսկ երբեմն էլ ու (ց) էր հնչուում, և այս ամենալաւ ապացոյցն է, թէ ինչպէս այդ լեզուում այս երկու հնչիւնները միշտ իրար հետ շփոթում էին: Հոռամյեցոց աննշան կայսրներից մէկը (եթէ չեմ սիսալում, կալիգուլան) իր անունն անմահացրեց նրանվ, որ ցանկանալով թիւրիմացութեան տուաջն առնել ու կրկնանչիւն տառից ստեղծեց և տառն, որից յետոյ վերջինովս սկսուեց արտայայտուել բացառապէս ու հնչիւնը, իսկ ու-ն մնաց վ հնչիւնի համար: Լատիներէն յանուար անունը գերմաններէնում դարձել է Januar, ֆրանս. janvier, առ. յանվար ևն:

2) Ահա ու-ով վերջացող մի քանի գոյականներ, կատու, ձու, լու, մէռ, պրառ, բու, կու, չու, պարզեատու, վերարկու, եղջերու ևն:

ազգի բառերը մեր լեզուում դառնում են. Մոսկօ, Արագօ, Ճարյուն, կյարց ևն: Արդ, միթէ այս կամայականութիւն չէ. միթէ յետաղիմութիւն չէ ունենալ օ (W—V) հնչիւնի համար երկու նշանագրեր. վ և ւ, և միևնոյն ժամանակ շարունակել օտարազգի բառերն աղջաւատել և օտարներին կարծել տալ, թէ մենք օ (W—V) հնչիւնի համար նշանագրեր չունենք:

Մեր կարծիքով այդ և՛ կամայականութիւն, և՛ յետաղիմութիւն է: Եւ որքան մենք աւանդապաշտ լինենք, չենք կարող այստեղ չխոսառվանուել մեր նախնիների գործած սիսալը: Մենք վերայիշեալ բառերն այսուհետեւ կը տառադարձնենք. Ապրլէզ, Աղվանք, Արագվա, Մուկլա, Դարլին, կվարզ ևն և կամ Ապրլէզ, Աղլանք, Արագլա, Մուկլա, Դարլին, կւարզ ևն: Վերջին գրութեան եղանակը գրաբառին աւելի մօտ է, բանի որ գրաբառում ւ-ը բառերի վերջում և միջում բացառիկ կերպութիւն ունէր¹⁾: Այս թիւրիմացութիւնը նախնական ուղղագրութիւնից վերացնելով, մենք չենք կարող թողնել միւսը, որն ասիթ եղաւ այս և ուրիշ թիւրիմացութիւնների: Մեր խօսքը իւ-ով վերջացող բառերի սեռական հոլովում թիւրիմացութեամբ գրաւող ու-ի մասին է: Ուրեմն թիւ, հաշիւ, պատիւ, կուր, հովիւ բառերից կ'ստացւեն, թւի, թւել թւական, հաշլիւ, հաշլել, հաշլապահ, պատիւ, պատուի, կուրիւ, կուրել, կուրարար, հովիւ, հովլիւ²⁾, հովլել, հովլապետ, հովուսի (աւելի ուղիղ կը լինէր գրել. հովիւ, հովլիւ, հովլվել, հովլվապետ, հովլվուէի):

Ինչպէս ընթերցողը մեր պատճառաբանութիւններից տեսաւ, վերյիշեալ երկու փոփոխութիւններն անհրաժեշտ են թիւրիմացութեամբ վանուած օ(W—V) հնչիւնն իր գերում վերահաստատելու համար, որով և միանգամ ընդմիշտ առնուում է ամէն տեսակ թիւրիմացութիւնների առաջ, միանգամ ընդմիշտ վերանում են Մուկլա, Արագլա, Դարլին և այլ անձան գրութիւնները: Սակայն արենելեան աշխարհաբառում կազմեւել է մի ուրիշ ըերտկանական

1) Աստասապակ ամեն մի տառ որոշ կերպով արտասանուում է բառի ըսկդրում, իսկ բառի միջում և վերջում նա անշուշտ փափուկ արտասանութիւն ունի: Այս է պատճառը, որ մեր նախնիները կոշտ վ-ով և փափուկ ւ-ով: Անշուշտ այս տարբինակ երեսիթն ևս հարկադրեց մեր նախնիներին ւ-ն ու դարձնելու:

2) Այստեղ միևնոյն օ (W—V) հնչիւնը կրկնուելով արտայայտուած է երկու տարբեր նշանագրերով. կոշտ վ-ով և փափուկ ւ-ով: Անշուշտ այս տարբինակ երեսիթն ևս հարկադրեց մեր նախնիներին ւ-ն ու դարձնելու:

ձեւ, որը նոյնպէս անհրաժեշտօրէն պահանջում է հրաժարուել ու հաշիւնի անձան գործածութիւնից ի մշաս վ (ւ)-ի:

Այդ կրաւորական բայի սեռանիշն է, որ կզբում նախնական ուղղագրութեան ազգեցութեամբ գրուեց ու-ով, իսկ յետոյ փոխեց վ (ւ)-ի: Գրել, ստանալ, գտնել, ուտել ևն բայերից արմմտահայ ուագիր հեղինակները բնականաբար կազմեցին հետեալ կրաւորական ձեռը. գրուել, ստացուել, գտնուել, ուտուել ևն: Այս շատ բնական էր՝ մանաւանդ այն պատճառով, որ, ինչպէս վերև յիշուեցաւ, գրաբառն այս սեռանշով տուել էր բազմաթիւ բայածականներ (ստացուածք, հերձուածք ևն): Այս ուագիր ձեն արևմտահայերի համար ոչ մի դժուարութիւն չէր ներկայացնում, որովհետեւ նրանք ներկայում և անցեալ անկատարում վերոյիշեալ բայերն այսպէս են խոնարհում. կը գրուիմ, կը գտնուիմ, կստացուիմ..., կը գրուիս, կը գտնուիս, կստացուիս..., կըգրուի, կըգտնուի, կստացուի ևն: Կրաւորականի սեռանշի այսպիսի գրութիւնն և ընթերցանութիւնը տաճկահայերին ոչ մի դժուարութիւն չէր կարող պատճառել, քանի որ այդ միանգամայն համապատասխան էր նախնական ուագիր գրաբառի ուղղագրութեան:

Սակայն սսահայ բարբառում վերոյիշեալ ձեռն այլ կերպ կազմուեցան: Ռուսահայ բարբառում կրաւորական բայի ներկան և անցեալ կատարեալը կազմում են այսպէս. գտուում եմ, ստացուում եմ, գտնուում ես, ստացուում ես, գտնուում է, ստացուում է. գտնուում ենք, ստացուում ենք ևն: Գտնուում էի, ստացուում էի ևն: Այսպիսով առաջ եկաւ մի անտանելի, հայերէնի հաշիւնաբանութեան ոգուն բոլորվին հակառակ ձեւ: Բանն այն է, որ հայը չէ սիրում նոյն իսկ երկու ձայնաւորներն առանց թարմատարի միմեանց յետեից հնչել, ուր մնաց նոյն ձայնաւորը կրկնել: Լեօ (Leo) Գեօրգ (Georg)՝ Փարաօն բառերը հայն տարադարել է Լեռն, Գէորգ, Փարաւոն¹), Բաալ (Baal) անունը տառադարել է Բահաղ ևն: Ռոերէն եսայլ բառը մենք տառադարել ենք եսաւու և այսօր ևս Հայաստանի շատ գաւառներում արտասանում և գրում են. էյի, էյիր էյին ևն: Ուսաի և հարց է ծագում, թէ ինչպէս առաջացան ուսահայ բարբառում վերոյիշեալ անտանելի ձեռը,

որոնց մէջ ու ձայնաւորը կրկնուում է: Դիմելով մեր աշխարհիկ լեզուի անցեալին, մենք համոզում ենք, որ սկզբում վերոյիշեալ անտանելի ձեռն իսկի գոյութիւն էլ չեն ունեցել, և այդ ձեռի գոյութիւնն արդի ոսահայ բարբառում լոկ թիւրիմացութեան արդիւնք է: Սկզբում այդ ձեռն ևս գրուելիս են եղել թարմատարով, ինչպէս և վերոյիշեալ Լեռն, Գէորգ, Բահաղ բառերը: Նրանք գրուելիս են եղել. գրուվում է, ստացուվում է, գտնուվում է, ուտուվում է: Սրան անհերքելի ապացոյց է այն, որ տակաւին 17-րդ դարու աշխարհաբառում մենք կարգում ենք «յուսահասում են և ցրուվում»¹⁾: Ուրեմն այս ձեռն ևս սկզբում, համաձայն հայ լեզուի հաշիւնաբանութեան ոգուն գրուելիս և կարդացուելիս են եղել թարմատարով, որը կարող էր լինել վ կամ և: Սակայն այստեղ ևս շատ շուտով շեշտն ունեցաւ իր ազգեցութիւնը: Աշխարհաբառում շեշտը, ինչպէս յայտնի է, վերջին վանկի վերայ է: Գրուվնեմ է, ստացուվնեմ է, գտնուվնեմ է, ուտուվնեմ է ձեռը չնորհիւ շեշտի կորստի շուտով դարձան. գրվնեմ է, ստացլվնեմ է, գտնլվնեմ է, ուտրլվնեմ է=գրվնեմ է, ստացվնեմ է, գտնվնեմ է, ուտվնեմ է: Ուրեմն նախնի աշխարհաբառում գրուում է, ստացուում, գտնուում է, ուտուում է ձեռը գոյութիւն չեն ունեցել: Այդպիսի ձեռի գոյութիւնն արդի աշխարհաբառում արդիւնք է թիւրիմացութեան: Միմիայն հարց կարող է լինել վ կամ և թարմատարի մասին, այսինքն թէ ինչպէս պէտք է գրել վերոյիշեալ ձեռը. գրվում է, ստացվում է, գտնվում է, ուտվում է, թէ գրլում է, ստացլում է, գտնլում է, ուտլում է: Արդ, ինչպէս վերև առաջ բերած Լեռն, Գէորգ յատուկ անունների տառադարնութիւնից ևս երկում է, վերոյիշեալ դէպեքերում իբրև թարմատար պիտի ծառայէ փափուկ ւ-ն և ոչ թէ կոշտ վ-ն, ուրեմն և գրլում է, ստացլում է, գտնլում է, ուտլում է գրութեան ձեր գերադասելի է, մանաւանդ որ այս գրութեան ձեն իր փափուկ արտասանութեամբ ուագիր գրաբառին տեւելի մօտ է և բացի սրանից գրաբառում ւ-ն բառերի վերջում և միջում բացառիկ գործածութիւն ունէր:

1. ԷՅՈՎԵ: Сношенија Петра Великаго съ армянскимъ народомъ, стр. 434: Այս իսկ ձեն ապացուցանում է, որ նախկին աշխարհաբառում անուրոշ եղանակի սեռանիշն ու էր և ոչ վ կամ և, ուրեմն ցրուել: գրուել ստացուել և այն:

Ահաւասիկ այս լոկ հնչիւնաբանական երևոյթը հիւնամոլ և վեւամոլ հեղինակներն ընդհանրացնելով սկսել են գրել, գրել — գրվել, գրւածք — գրվածք, ստացւել — ստացվել, ստացւածք — ստացվածք են: Այս գեր հասկանալի է: Սակայն սրանով շրաւականանարդ նրանք խախտեցին լեզուի արտասանութիւնն և սկսեցին տռանց հրեւէ բանաւոր հիմքի գրել. կատի — կատվի, լի — լիվի, ձի — ձվի, լեզվի — լեզվի, Աստւած — Աստված, նույր — նովչը, նուագ — նովչը, Մարտէլ — Մանվէլ, էմմանվիլէլ: Ոչ մի կասկած չկայ, որ նոյն մարդիկ վազը կամ միւս օրը պիտի գրեն. Պւանկարէ — Պւանկարէ. (չէ որ ըստ այդ հիւնամոլ և վեւամոլ Մեսրոպների ուն ձայնաւորից տռաջ և կամ վ է հնչւում), ալտրուփոմ — ալտրովիզմ: Սրանով հիւնամոլ և վեւամոլ հեղինակներն ոչ միայն ծաղր ու ծանակի առարկայ են դարձել օտարազգիների աչքում, այլև խախտել են մեր լեզուի արտասանութիւնը: Արդէն յիշեցինք, որ Մեսրոպն և իր ժամանակակիցները գրելով կատուոյ, լուոյ, ձուոյ լեզուոյ են, այդպէս էլ կարգում էին: Այսօր ևս տաճկահայերն և Ռուսաստանում հաստատուած հայ գաղութները (օր. Նրիմի և Ն-Նախիջևանի հայերը) գրելով կատուի, լուի, ձուի, լեզուի, Աստուած, նույր, նուագ, ստացուել, ստացուածք են, ձիշտ այդպէս էլ կարգում են, այն է կատի, լիի, ձիի, լեզվի, Աստուած, նցէր, նցագ, ստացյել, ստացյածք և այլն: Իսկ հիւնամոլներն և վեւամոլները իրենց կամայական ուղղագրութեամբ փոխում են ոչ միայն տառը, այլև դարերով հաստատուած արտասանութիւնը, հաստատում են մի նոր վիճ ուռահայերիս և տաճկահայերի մէջ: Կարելի էր այս հեղինակների հետ համաձայնուել, եթէ նրանք իրենց արածն ապացուցանէին: Սակայն նրանց արածն և ասածները ոչ մի հիմք չունին: Նրանց կամայական ուղղագրութիւնները լիքն են ներքին հակասութիւններով և միմիայն շփոթ և խառնակութիւն են առաջացրել մեր լեզուի մէջ: Մենք մաքառելով մեր նախնիների ակնյայտնի մուրութեան դէմ, կը գրենք. Աղվանք, Ապրվէզ, Արագվայ, Մոսկա (կամ Աղւանք, Ապրւէզ, Արագւա, Մոսկա), թւի, պատի, հաշւի են: Մաքառելով մեր նորելուկ հիւնամոլ և վեւամոլ հեղինակների դէմ կը գրենք, համաձայն մեր լեզուի աւանդական ուղղագրութեան. Աստուած, նույր, նուագ, կատուի, լեզուի, ձուի են: Էմմանուէլ, Մանուէլ, Սամուէլ, Պուանկարէ, ալտրուփոմ և այլն: Այլև, աչքի առաջ ունենալով մեր լեզուի հնչիւնաբանական

օրէնքները, կը գրենք. գրւում է, ստացւում է, գտնւում է, ուտւում է, լեզուում (=լեզուում=լեզուում=լեզունում), ծուռմ (=ծուռմ=ծուռմ), Սուրմալուում (=Սուրմալուում=Սուրմալունում=Սուրմալունում): Կարելի էր գրել նաև կրառական բայի միւս ձեւերը ւով, ինչպէս գրւել, գրւած, գրւող, գրւածք: Սակայն աւելի հեռու գնալն և լեզուի ուղղագրութեան մէջ առանց անհրաժեշտ պահանջներ զգալու կամայական փոփոխութիւններ առելը մեր կարծիքով կամայականութիւն է:

Պ. Ն. Աղոնցը 1904 թ. իրեն հրապարակօրէն Ղազ. Աղայինի աշակերտ և հիւնապաշտ խոստովանուելով, առաջարկեց աշխարհաբառի ուղղագրութեան մէջ մի փոփոխութիւն ևս մտցնել այն է համը յ-ն բայերի և բազմավանկ բառերի վերջում զեղչել և գրել. զա, կա, ստանա, քահանա, արեղա, սատանա, կաթսա, շուկա, ամիրա, շղթա, փիլիսոփա, յետո, ներքո են: Իրրե հաստատութիւն իր կարծիքի պարոնը յայտնում էր, որ վերը առաջ բերած գոյականները վերցրած են ասորերէնից, իսկ ասորի լեզուում նրանք վերջանում են լոկ ա-ով, ասանց յ-ի (կահիա, ավիլա, սատան են): Այս բառերի շեղ հոլովներում յ-ն երկու ձայնաւորների մէջ մտել է շնորհիւ այն հանգամանքի, որ հայը չի սիրել և չի սիրում երկու ձայնաւորներ միմեանց յետեւից արտասանել. և երբ հարկ է եղել երկու ձայնաւորներ միմեանց յետեւից արտասանելու, հայը դրանց մէջ ձգել է յ, և թարմատարները: Այսպէս յունարէն շտո, շտոկ, խաօս, Լեօն, Փարաօն, Տրօա բառերը հայն տառադարձել է, ստօյա, ստօյիկեան, քաւոս, Լեւոն, Փարաւոն, Տրովիա¹⁾: Մեր կողմից կաւելացնենք, որ թարմատարն անխուսափելի է զառնում հայերէնում նաև այն դէպքում, երբ նոյն ձայնաւորը կրկնում է, օր. Բաալ անունը հայը տառադարձել է Բահազ:

Պարոն Աղոնցի ասածը մեր կարծիքով ուղիղ է: Յ-ն իրրե թարմատար մուտաք գործելով վերոյիշեալ բառերի շեղ հոլովների մէջ (քահանայի, արեղայի, սատանայի են), թիւրիմացութեամբ գրւել է վերոյիշեալ բառերի ուղղական հոլովներում ևս: Եւ պ. Աղոնցի այս նկատողութիւնը պէտք է մտնի աշխարհաբառի քերա-

1) «Բանբեր», Բ., եր. 142:



կանութեան մէջ: Բայց միթէ ամէն մի այսպիսի նկատողութեան պատճառով թոյլատրելի է լեզուի աւանդական ուղղագրութիւնը տակնուվրայ անել: Ինչո՞ւ պ. Ադոնց «պարոն» բառը բարօն չէ գրում, չէ որ այդ նարու կրոպական բառն է... ինչո՞ւ նա չէ գրում եանուար, չէ որ այդ լատիներէն յանաց բառն է... Պ. Ադոնցն իր յօդուածում նոյնպէս յիշում է, որ ձեռագրերում պատահում են և էին, ուտեին և ուտէին ձեռքը: Ես ունիմ նամակներ պ. Ադոնցի հայրենակից դարաբաղցիներից, որոնց մէջ նրանք գործ են ածում էյինք, էյիք, էյին ձեռք:

Իսկ մօտ 200 տարի առաջ պ. Ադոնցի հայրենակիցները ահա թէ ինչպիսի հայերէն էին գրում. աղարկել, նոցայ, պախել (=պահել), օսմանլուվին խէտ (=հետ), դոքայ, ուրէնց (իրենց) ասկն, ինչ կէրպիվ որ ճար կոյ լինի (=կը լինի), պէջկական, կենդանոյթուն, ունչիչ (=ոչինչ), ուրէնց հավաղեն կույ պախեն, ուրէնց կալէ հմար (=գալու համար), լվլ (=լաւ) տեղարէնքն հասավ, խօսեցավ, հրամանսյգիր, տվէլ անք (=տուել ենք), զոմիան զոս (=դու միայն զաս), զբուցավ, ժօգուրդ, ւարել (=վարել), մեզ կոտորում ան (=են), փօքրն էսիր ան տանում, աստուածայսէր թագայորիս մերոյ, ցրուվում են, լույս, աստայծաւալ պարզմայտուէ, ի մէջ անօրէն բռնայորացս, այս թողթս են են (տես ՁՅՈՅԵ: Շնոպենիա Պետրա Վելիկաց տէ Արման- ՏԿՄԻ նարօմու, ստր. 402—436):

Արդ, միթէ կարելի է այս բոլորի վերայ հիմնուելով լեզուի աւանդական ուղղագրութիւնը փոխել: Մեր կարծիքով ոչ: Եթէ մենք այսպէս վարուենք, Մեսրոպեան այրբենում տառ չէր մնայ:

Առանց ծայրայեղ անհրաժեշտութեան չի կարելի լեզուի ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնել: Նախ հրապարակ եղաւ հանգուցեալ Աղայեանն իր հիւնագրութեամբ, ապա պ. Ադոնցն իր համը յ-ի յապաւումով, ապա պ. Ստ. Մալխասեանն իր վեւագրութեամբ, ապա ուրիշներն իրենց օագրութեամբ, ապա մի ծխական ուսումնարանի ուսուցիչ Մեսրոպեան գիրը լատին գրով փոփոխինելու առաջարկութեամբ: Այն, ինչ որ անմահ Մեսրոպը մեզ տուել է հսկայական ջանքերից յետոյ, ծխական ուսումնարանի բարեմիտ ուսուցիչն ուզում է մեզ մի օրում տալ... Մեր հոսոս եղբայրներն էլ ունին իրենց ուրոյն «ուղղագրութիւնն» և

գրում են. Բարիկ, Պիսմարգ, բըորօքու, զոմիրէ, գոնտուգդոր, բարլամենդ և այլն:

Հարկ չկայ ասելու, որ լատիներէն այբուրենն ևս չի կարող ցաւին դարման անել. նախ որ նա չունի հային յատուկ բոլոր հնչիւնների համար տառեր. երկրորդ, լատիներէն գիրն ընդոււնելուց յետոյ ևս ոմանք կը գրեն ուաստ, իսկ ոմանք ուաստ, ոմանք Աստած, իսկ ոմանք Աստած և էլլ կ'ստացուի նոյն խառնակութիւնը:

Աշխարհիս երեսին չկայ կատարեալ այբուրեն: Դրա պատճառն այն է, որ միանգամ հնարած գիրը մնում է անփոփոխ, իսկ լեզուի հնչիւնները դարերի ընթացքում փոխւում են: Մոները շատ կը ցանկային և տառն ունենալ, բայց չունեն, որովհետեւ նրանց այբուրենի հնարողները լինելով յոյն հոգեորականներ, չնկատեցին, որ սսերէնում այդ հնչիւնը գոյութիւն ունի, և չտուին նրա համար յատուկ գիր: Հնչիւնն այսօք փոքր սսական բարբառում անվիթար պահուել է, բայց և այսպէս ոսները հարկադրուած են «Հայկական» տառապարձնել գայկան: Հոմերոս Գոմերէ են: Վ ձայնաւորը, որը վեցցրած է յունարէնից, զրում է միմիսայն մՎրօ բառի մէջ: Գրօտն առաջարկեց այդ տառը բոլորովին հանել սսերէն այբուրենից, որովհետեւ չարմէ մի բառի համար մի տառ ունենալ: Սակայն այդ առաջարկութիւնն ևս չանցաւ, և այսօք ոսները շարունակ գրում են մՎրօ: Մենք և մեզ հետ ուրիշ ազգեր սսերէն և տառի համար չունինք ոչ համապատասխան հնչիւն և ոչ էլ տառ: Ուստիև հարկագրուած ենք Գօլիցին, Ստոլիպին յատուկ անունները սխալ տառապարձնել, որովհետեւ ուղիղ տառապարձնելու հնարաւորութիւնն չկայ: Ահա այսպիսի բան է այբուրենի խնդիրը:

Մեր լեզուի ուղղագրութեան գլխին գալլաքութիւններ անողները թաղ իմանան, որ ուրիշ լեզուների ուղղագրութիւններն աւելի ևս խառնակ են: Այսպէս գերմաններէնում միենոյն ֆ հընչիւնի համար կամ երեք նշանագրեր. ֆ, ն և թի; սսերէնում ֆ ձայնաւորը բոլորովին աւելորդ է երեսում, քանի որ կայ թ-ն. աւելորդ են երեսում նաև թ և նշանները: Ֆրանսիական ուղղագրութիւնն աւելի բարդ է, իսկ անգլիականը բարդ և շփոթ: Բայց ոչ մի ուսու չի համարձակուի իր ազգի տարրական դպրոցների համար կազմելու մի գասագիրք, որի մէջ ֆ-ը, թ-ը և ն-ը բացա-

կայէին, գիտենալով, որ լուսաւորութեան մինիստրն իսկոյն կ'արգելէ այդպիսի գասագրքի գործածութիւնը: Իսկ մեզ մօտ՝ չնորիւ կենտրոնական վարչութեան թուլութեան, ծխական դպրոցները մուտք են գործել գասագրքեր, որոնց մէջ լեզուի տաւանդական ուղղագրութիւնը քարուքանդ է արած:

Մեր հիւնամոլ, վեւամոլ, օամոլ ևն «Մեսրոպներն» իրենց «տեսութիւններն» արդարացնում են նրանով, որ իրը թէ մեր լեզուի ուղղագրութիւնը խառնակ և դժուար է: Նրանք ուղում են այդ ուղղագրութիւնը գիւրացնել, որպէսզի գրագիտութիւնն աւելի տարածուի ժողովրդի մէջ: Սակայն գրանով նրանք աւելի մեծ խառնակութիւն առաջացրին: Իսկ մեր ժողովրդի անտարբերութիւնը դէպի իր մայրենի լեզուն և առհասարակ դէպի ազգային աւանդները լեզուի ուղղագրութեան խառնակութեամբ և դժուարութեամբ չէ բացարւում: Մրդէն ասացինք, որ ուրիշ լեզուների ուղղագրութիւններն աւելի ևս խառնակ են, սակայն այդ ազգերի մէջ ուսումն և գիտութիւնը ծաղկում է..., իսկ մեր աշխարհիկ լեզուի քերականութիւնը շատ հեշտ է, բայց և այնպէս մեր առաջնակարգ գրողներն իսկ զլանում են այն ուսումնասիրելու...

Նախաբանիս վերջում մի երկու խօսք ևս մեր ձեռնարկի մասին: Սա գործնական նպատակ ունի: Մենք աշխատել ենք ըստ կարելոյն գիւրամատչելի լեզու գործ ածել: Տալով ժողոր անհրաժեշտ քերականական գիտելիքները, մենք բաց ենք թողել այն ամենը, ինչ կարող էր շփոթի և թիւրիմացութեան առիթ տալ: Ոմանք կոյրդկուրացն հետեւելով ուսւ քերականներին, ածականները բաժանում են երկու դասի—որակական և յարաբերական ածականների: Սակայն «ոսկէ ժամացոյց», «արծաթէ ժումացոյց», «թանկ ժամացոյց», «արժան ժամացոյց» ասացուածքներում ունէ, արծաթէ ածականները նոյնքան որակ են ցոյց տալիս, որքան և թանկ, արժան ածականները: Սրանց մէջ զանազանութիւնը միայն նրանումն է, որ առաջն ածականները համեմատութեան աստիճաններ չունին (չի կարելի ասել «աւելի», «սաստիկ» ոսկէ, արծաթէ ժամացոյց), իսկ երկրորդները ունին: Այսպէս էլ մենք նայել ենք խնդրի վերայ: Ի դէպ, երևելի կ, Ուշինսկին ևս դէմ է ածականների վերոյիշեալ բաժանմանը:

Զեռնարկս ինքնուսոյցի բնաւորութիւն ունի. սակայն նրա բուն նպատակն է ծառայել իբրև դասագիրք ծխական ուսումնա-

բանների բարձր, իսկ թեմական և արքունական ուսումնաբանների ստորին դասարանների համար: Հասկանալի է, որ մենք մեր գործը կազմելիս չէինք կարող առանձին ուշադրութիւն չդարձնել արդի մասնկավարժական պահանջների վերայ: Հին մեթողը, անգործութեան դատապարտելով աշակերտի մտածողութիւնն, ինքնագործունէութիւնն և գիտակցական աշխատանքը, ուսուցումը հիմնում էր նրա մեքենական յիշողութեան վերայ, ծայրայեղ աստիճանի լորեզով վերջինս և բթացնելով աշակերտին: Ուսուցման նոր մեթողը, ընդհակառակն, դասաւանդութիւնը հիմնում է աշակերտի մտածողութեան, ինքնագործունէութեան և գիտակցական աշխատանքի վերայ: Ուսուցիչը դառնում է աշակերտի աւագ ընկերը, որը միայն դեկավում է նրա զրադմունքները: Բայց աշխատանքը կատարողը, առարկան հետազոտողն և գիտակցարար իւրացնողն ինքն աշակերտն է: Մեքենական արտագրութիւնները, վարժութիւններն և թելագրութիւնները, որոնցով հին դիգակտիկան լեզուի ուղղագրութիւնը սովորեցնում էր, բոլորովին ձգուած են: Նրանց աեղը մեր ձեռնարկում բռնում են կենդանի քերականական խնդիրները, որոնց լուծման ժամանակ անպայման գործում է աշակերտի ուղեղը: Այդ խնդիրները գիտակցարար լուծելով, աշակերտը իւրացնում է և՛ իր սովորած քերականական կանոնները, և՛ աննկատելի կերպով լեզուի ուղղագրութիւնը:

Չենարկս կազմելիս աշքի առաջ ենք ունեցել Ուշինսկու „Первоначальная практическая грамматика съ хрестоматией“, Franz N. Fink, „Lehrbuch der neuostarmenischen Litteratursprache“, պրօֆ. Մառի յիշուած գրաբառի քերականութիւնն և այլն: Սակայն մեր գործին նիւթ մատակարարեց զլիաւորապէս մեր արդի աշխարհիկ լեզուն: Մենք աշխատել ենք գտնել այն օրէնքները, որոնցով այդ լեզուն զարգանում է: Թէ որքան այդ մեզ յաջողուել է, այդ ասելը վերապահուած է անաշառ քննադատութեանը:

Քերականութեանս երկրորդ մասը, համաձայնութիւնը, շուտով լոյս կըտեսնէ:

Յ. Դաղբաշեան

ԳԻՐ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ

§ 1. Իւրաքանչիւր բառ բաղկացած է հնչիւններից¹⁾, իսկ իւրաքանչիւր հնչիւն ունի իրեն յատուկ տառը կամ նշանագիրը։ Տուն բառը բաղկացած է երեք հնչիւններից, որոնք արտայայտուած են տ, ու և ն տառերով։ Ընկալ բառը բաղկացած է հինգ հնչիւններից, որոնք արտայայտուած են ը, ն, կ, ա և ւ տառերով։ օգնական բառը բաղկացած է եօթ հնչիւններից կամ տառերից։ Աչք, հայ բառերն՝ երեք-երեք հնչիւններից կամ տառերից և այլն։

Այս տառերն առանձին-առանձին արտասանելով տեսնում ենք, որ ա, ու, է, օ կրերն հնչում են շատ պարզ կերպով։ Ա-ն և յ-ն փափուկ, թոյլ հնչում ունին։ Իսկ տ, ն, կ, գ, ս, թ, հ, ւ տառերը շատ խուլ հնչում ունին և առանց ը տառի երբէք չեն կարող արտասանուել (նրանք արտասանում են, տը, նը, կը, գը և այլն)։

Պարզ, անկախ հնչում ունեցող տառերը կոչում են ծայնալորները²⁾։ Թոյլ հնչում ունեցողները՝ կիսաձայները³⁾։ Իսկ խուլ հնչում ունեցողները բաղաձայները⁴⁾։

ԽՆԴԻԲ։ Որոշել հետևեալ բառերի մէջ ձայնաւոր, բաղաձայն և կիսաձայն տառերը։

Սիրկուհին սըրտատրով
Նայեցաւ լըճակին,
Հասկացաւ դասնութիւն
Իւր անբախտ վիճակին։

1) Հնչիւն—звук։ 2) Гласныя. 3) Полугласныя. 4) Согласныя.

§ 2. Իւրաքանչիւր լեզու ունի իր որոշ հնչիւնները, որոնք մինչեւ այդ լեզուի նշանագրերի գիւտն անկախ գոյացութիւն ունէին։ Նշանագրերը գտնողին (այբուբենը հնարողին) վերապահուած էր ճշտութեամբ որոշելու այդ հընչիւններն և նրանցից իւրաքանչիւրի համար մի-մի տառ հնարելու։ Այս հեշտ բան չէ, և դրանով են բացարձում այն հակայական ջանքերը, որ հայոց նշանագրերը գտնողը, Սուրբ Մեսրոպը, գործադրեց իր անմահ գիւտի վերայ։ Նրա գտած գիրը հետևեալ դարերում ունեցաւ չնչին լրացումներ, և այսօր մենք ունինք մի այբուբեն, որը լիովին, անվթար կերպով արտայայտում է հայ լեզուի բոլոր հնչիւնները։

§ 3. Մեսրոպեան այբուբենը բաղկացած է 39 նշանագրերից, որոնցից ձայնալորներն են։ Ա, Ու, Ե, Է, Կէ, Իի, Ոո, Օօ։ Բաղաձայներն են։ Բթ, Գդ, Դդ, Զդ, Թթ, Ժժ, Լլ, Խխ, Ծծ, Կկ, Հհ, Ձձ, Ղղ, Ճճ, Մմ, Նն, Շշ, Չչ, Պպ, Ջջ, Ռր, Սս, Վվ, Տտ, Բբ, (ւ), Փփ, Քք, Ֆֆ։ Կիսաձայներն են։ Լլ, Յյ։

ԴԻՑՈՂ. 1. Մեսրոպեան նշանագրերից առաջ հայ ժողովրդի մէջ գրագիտութիւն չկար։ Ժողովուրդը խօսում էր իր մայրենի լեզուով, իսկ արքունիքն և բարձր դասակարգերը խօսում և գրում էին այն ժամանակուայ քաղաքակիրթ ազգերի լիգուներով։ յունաբէն, պարսկերէն և ասորերէն։ Երբ քրիստոնէութիւնը հայաստանում պետական կրօնագրձաւ (մօտ. 280 թ.), յոյն և ասորի հոգեորականները հեղեղեցին Հայաստանը, որոնք հայոց եկեղեցիներում Սուրբ Գիրքը կարդում էին յունաբէն կամ ասորերէն լեզուներով, որից ժողովուրդը ոչինչ չէր հասկանում։

Այս մտաւոր գերութիւնից հայ ազգն ազատեց անմահ Մեսրոպը։ Յիշւում է, որ նա նշանագրեր ստեղծեց նախ Դանիէլ ասորու աջակցութեամբ (404 թ.)։ Այս նշանագրերով Սուրբ Մեսրոպն երկու տարի դասաւանդում է հայերէնը հայ մանուկներին, սակայն յաջող հետևանքների չի հասնում։ Համոզուելով, որ Դանիէլեան նշանագրերն անբաւարար և անհամապատասխան են հայ լեզուի ոգուն (պատճառն այն էր, որ այս այբբենը ձայնաւոր

տառեր չունէր, այլ բաղկացած էր միայն բաղաձայներից, ինչպէս բոլոր սեմիտական լեզուները, Ա. Մեսրոպը Հոռովանոս յոյն գիտունի օգնութեամբ հասրեց (406 թ.) նոր, այժմ գործածական այբուբենը: Այս բոլորը ընդարձակօրէն և ստոյգ կերպով պատմում է նրա աշակերտ Կորին Սքանչելին: Յետագայ սերունդները Մեսրոպի գիւտը հրաշք համարեցին:

ԴԻԾՈՂ. 2: Եւ բառում եւ և տառերը շաղկապուած են ($b=b+t=t$):

ԴԻԾՈՂ. 3: Կարծես թէ միենոյն հնչիւնի համար հայերէնում գոյութիւն ունեն երկու նշանագրեր. վ և ւ: Սքանչեցից առաջինը, վ-ն, կոշտ հնչում ունի և գրում է բառերի սկզբում. վարել, վարդ, վիշտ և այլն: Խսկ ւ-ը փափուկ հնչում ունի—դաւթար—դափթար. զալթել—զափթել. նաւթ—նավտ, սէլաւ—սէլաֆ) և գրում է բառերի միջում և վերջում, օր. աւար, հաւատ, նաւ, նաւ, եարօսլաւ, և այլն: Միայն թէ ո-ից յետոյ թէ բառերի միջում և թէ վերջում վ է գրում, օր. հովիւ, գովիւ ծով, կով (չի կարելի գրել հովիւ, գովիւ, ծով, կով):

Սակայն ւ-ը կիսաձայնի նշանակութիւն ևս ունի և միանալով ձայնաւորների հետ, կազմում է երկձայնն կամ երկբարբառը (տես § 6):

ԴԻԾՈՂ. 4. Ո և օ տառերը տարբեր հնչիւններ են արտայայտում: Դրանում համոզուելու համար բաւական է արտասանել որ և օր, շոր և շօր, հոտ և հօտ բառերը: (Ոչխարի հօտը մեծ է: Վարդն ախորդելի հոտ ունի): Միայն պէտք է նկատել, որ ովով սկսուող բառերում ո-ն օ է հնչում, օր. ով, ովսաննա, ովկիանոս բառերը հնչում են. օվ, օվսաննա, օվկիանոս:

ԴԻԾՈՂ. 5: Բառերի միջում և վերջում ը-ից յետոյ դ-ն հընչում է ինչպէս թ, օր. բրդել, կարդալ, վարդ, մարդ, որդի և նման բառերը պէտք է կարդալ, բրդել, կարթալ, վարթ և այլն:

Նոյն դէպքերում ծ-ն հնչում է ինչպէս ց, օր. բարձր, մերձաւոր, վարծ, վարծ, փործ և նման բառերը պէտք է կարդալ. բարցր, մերցաւոր, վարց և այլն:

Նոյն գէպքերում ը-ն հնչում է ինչպէս փ, օր. բոլիքոս, երբ, որբ, որբանոց և նման բառերը պէտք է կարդալ՝ բորփոս, երփ և այլն:

ԴԻԾՈՂ. 6: Երկու կամ երեք բաղաձայնով սկսուող մի քանի բառերի սկզբում ս, շ և զ բաղաձայներից առաջ լսում է ը

կիսաձայնը, օր. ստրուկ, սկսել, սպասել, սքանչելի. սիսոփել, ստուգել, շտապել, շտեմարան, զբաղուել, զքունել, զգոյշ, զգն, և նման բառերը կարգացւում են. լստրուկ, լսկել, լսպասել և այլն:

ԴԻԾՈՂ. 7: Ը կիսաձայնը պարզ լսում է նաև այն դէպքում, երբ բառի մէջ միմեանց յետեից խմբում են չորս և աւել բաղաձայներ: Օր. խրտնել, սփրիմնել, բժշկել, խրխնջալ, տրտընջալ, թխկթխալ և լս բառերը պէտք է կարդալ. խըրտնել, սըփըրթնել, բըրժշկել և լըրխընջալ և այլն:

ԴԻԾՈՂ. 8: Յ տառը բավմավանկ (§ 5) բառերի վերջում չի արտասաննուում. քահանայ, փիսայ, երեխայ, վերայ, ներկայ, ներքոյ յետոյ բառերն արտասաննուում են. քահանա, վերս, երեխա, ներքո, յետո և այլն: Բայց միավանկ բառերի վերջում յ-ն արտասաննուում է. օր. հայ, բայ, վայ, թէյ, բօյ, բէյ: Սակայն բայերի, այսինքն գործողութիւն ցոյց տուող բառերի Յ-րդ գէմքում յ-ն դարձեալ համը է, օր. եթէ գայ, տայ, լայ, թնդ գայ, թնդ տայ, թնդ լայ արտասաննուում են՝ գա, տա, լա:

ԴԻԾՈՂ. 9: Մ տառը փոխարինելով կրկնուող բառի առաջին գիրը, արտայայտութեանը սաստկութիւն է տալիս, օր. սուտ բան և սուտ-մուտ բաներ (=շատ, սաստիկ սուտ բաներ): Այսպէս ասում են հաց-մաց, գինի-մինի. փող-մող և հասկանուում են. բոլոր, եղած հացը, գինին, փողը, մանր-մուռնը խնձորներ նշանակում է տեսակ-տեսակ մանր խնձորներ և այլն:

§ 4: Հայոց նշանագրերը թւական նշանակութիւն ևս ունին. ա=1, բ=2, գ=3, դ=4, ե=5, զ=6, է=7, ը=8, թ=9, ժ=10, ժա=11, ժբ=12... ի=20, լ=30, խ=40, ձ=50, կ=60, հ=70, ձ=80, դ=90, ճ=100, մ=200, յ=300... ո=1,000 և այլն:

§ 5. Բառերը բաժաննուում են վանկերի¹⁾: Սէր, թուր, մարդ միավանկ են. բա-ըի, որ-դի, տես-նել, ու-տել երկվանկ են. մօ-տե-նալ, բա-ըե-կամ, փա-թա-թան, պատկե-ըա-պաշտ բազմավանկ են:

Այս օրինակներից երկում է, որ բառի մէջ վանկերի թիւը հաւասար է ձայնաւորների թւին:

1) Վանկ—слогъ.

ԴԻՑՈՂ. Երկու բաղաձայներով սկսուղ բառերը գաղտնիքանկ ևս ունին. տղայ, մշակ, պսակ, կտոր, բլուր, շլթայ, հսկայ ծնող բառերը պէտք է կարդալ. տը-ղայ, մը-շակ, պը-սակ, կը-տոր, բը-լուր, շըղթայ, հըսկայ, ծընող: Սրանց մէջ ը կիսաձայնը չէ գրում, ուստի և միավանկ են երեւմ:

Գաղտնավանկ են նաև երկու բաղաձայներով վերջացող բառերը, օր. կայսր, արկղ, աստղ, կուպր, դուստր, բառերը պէտք է կարդալ. կայ-սլր, ար-կլղ, աս-տրղ, կու-պլր, դուս-տըր:

ԽՆԴԻԲ: Հետեւեալ հատուածում պատահող բառերը բաժանել վանկերի.

Ու գնաց որդին, շատ քրտինք թափեց,
Մեծ հարստութիւն, մեծ գանձ ժողովեց,
Ու դարձաւ հօրը, ասաց պարծանքով.

Հայր իմ, այժմ մեծ չեմ քու կարծիքով:

Գրեցէք հինգ միավանկ, հինգ երկվանկ, հինգ եռավանկ և հինգ էլ բազմավանկ բառեր:

§ 6: Բացի պարզ հնչիւններից, որոնք ունին իրենց համապատասխան տառերը, կան նաև բարդ հնչիւններ: Բարդ հնչիւնների համար լեզուի մէջ առանձին տառեր չկան, այլ նրանք արտայայւում են երկճայներով կամ երկբարբառներով¹⁾: Երկճայնը կամ երկբարբառը բաղկացած է երկու ձայնաւոր տառերից, որոնք միասին, մի շնչում են արտասանւում, օր. հայր, մայր, գայլ, թոյլ, ծոյլ, կոյր, իլր, հիլր, թիլրիմացութիւն, կեանք, սենեակ, եօթ, թէյ, բէյ, բօյ բառերում այ, ոյ, իւ, եա, եօ, էյ, օյ երկճայներ կամ երկբարբառներ են:

ԴԻՑՈՂ. 1: Ոյ երկբարբառը բաղաձայներից առաջ ոյ է հնչւում, օր. ծոյլ, թոյլ, կոյր, երեկոյթ, գոյք կարդացւում են. ծուիլ, թուիլ ևն: Բայց ձայնաւորներից առաջ ոյ երկբարբառը հնարաւոր չէ, ուստի և երեկոյեան, գոյանալ, բարդյական բառերը կարդացւում են այնպէս, ինչպէս գրում են:

ԴԻՑՈՂ. 2: Իւ երկբարբառը բաղաձայնից առաջ իու (ռս. 10) է հնչւում, օր. իլր, հիլր, թիլրիմացութիւն: Իսկ ձայնաւորից ա-

ռաջ կարգացւում է այնպէս, ինչպէս գրում է, օր. հիւանդ, դիւան ևն:

ԽՆԴԻԲ: Որոշել հետեւեալ բառերում երկբարբառներն և ասել, թէ որ բառերում յ-ն համբ է, այսինքն չէ հնչւում:

Մանուկ օրերին հայրը թաթուլին ուղարկեց քաղաք, որ «հայի շկոլում կարդայ, մարդ դառնայ»: Հօր մահից յետոյ նա վերադարձաւ գիւղ, ուր մայրը նրան սպասում էր:

Նրան չէր գրաւում ոչ Սարհաղի սագը, ոչ նրա նօսը, ճերմակ միրուքը, որ գլխի և ձեռքի շարժումների հետ ցնցւում էր աշուղի կրծքին, և ոչ էլ հօր փաղաքշանքներն ու համբոյրները:

Ահա մթնեց արևմուտքը Հըկաստանի աշխարհին,
Պայծառ օրը տեղի տուեց երեկոյեան խաւարին,
Արեգական վերջին լուսով գիռ կը փայլէր վառ ի վառ
Գրկած պատած այգիներով Ելէօնին սուրբ կատար:

Փառք Աստուծու. Հայ արիւն ալ վոթեցաւ,
Եւրոպայի արեան պատքը յագեցաւ.
Չուզէր զիտնալ, որ աշխարհքիս մէջ Հայ կայ,
Հայի մէջ ալ մարդկային սիրտ, հոգի կայ:

ԵԵԾ¹⁾ ԵՒ ԻՐ ԱԶԴԵՅՈՒԹԻՒՆԸ ԲԱՌԱԿԱՁՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ:

§ 7: Իւրաքանչիւր բառում մի վանկ արտասանւում է առանձին ուժով, այսինքն շեշտուած է: Հայերէնում շեշտը միշտ վերջին վանկի վերայ է: Օր.

Բայց ինչո՞ւ լացեց այդ արի մարդը,
Որին անծանօթ էր ահըն ու դարդը,
Գուցէ թէ յիշեց նա այդ ըոսէին
Տանը անպաշտպան թողած ընտանին:

§ 8: Շեշտը բառակազմութեան համար էական նըշանակութիւն ունի: Որովհետեւ հայերէնում շեշտը միշտ

1) Երկճայներ—двугласныя.

1) Շեշտ—ударение.

վերջին վանկի վերայ է, բառակազմութեան մէջ նա իր տեղափոխութիւններով ահազին փոփոխութիւններ է առաջացնում:

ա) ու և ի կարճ ձայնաւորները, կորցնելով շեշտը, սղում և դառնում են ը, օր. սուր, սըրել, սըրնց, սըրածութիւն. սուրբ, սըրբել, սըրբութիւն, սըրբասացութիւն. խո՛ւմբ, խըմբին, խըմբական. ծո՛վս, ծըխել ծըխական, ջուր, ջըրել, ջըրային, ջըրառատ. փուշ, փըշի, փըշալից. մուկ, մըկան, մըկներ, ծո՛նկ, ծընկան, ծընկներ. նուռ, նոռան, նըռներ. ստրուկ, ստրոկի, ստրոկութիւն, ստրոկացնել. հարուստ, հարշտակի, հարշտանալ, հարշտութիւն:

Սի՞րտ, սըրտի՛, արրտացաւ, սըրտնտ. միս, մըսի, մըսացնւ. բիծ, բըծի. գի՞ր, գըրի, գըրել, գըրական, գըրականութիւն. գի՞րք, գըրքակալ. հին, հընանալ, հընութիւն. էջմիածին, էջմիածընի, էջմիածընական. գին, գընի, գընել, գընահատել. միրգ, մըրգի, մըրգաշատ, մըրգավաճառ. ամուսին, ամուսնուտ, ամուսնանալ, ամուսնութիւն. ցի՛ց, ցըցել, ցըցապատ. պատի՛ւ, պատրւի, պատըւել. թիւ, թըւի, թըւական, թըւաբան, թըւաբանութիւն, կոի՛ւ, կորւի, կոըւել և այլն:

ԴԻԾՈՂ. 1: Վերոյիշեալ բոլոր դէպքերում ը կիսաձայնը չէ գրւում: Աւրեմն յիշած բառերը պէտք է զբել. սրել, սըրել, խըմբական... սրտի, ցցել, գնել և այլն:

Սակայն ը կիսաձայնը միշտ գրւում է, երբ բառի առաջին տառն է կազմում, օր. իղձ, լղձի, լղձալի, լղձութիւն. ինչ, լնչի, լնչացնւ, ընչեղ և այլն:

Նոյն կիսաձայնը, ինչպէս կը տեսնենք, գրւում է նաև տողադրձի ժամանակ:

բ) Է երկար ձայնաւորը, շեշտը կորցնելով, սղում և դառնում է ի, օր. սէր, սիրոյ, սիրել, սիրական, ծէս, ծիսակատարութիւն. տէր, տիրել, տիրացնւ. էգ,—իգական. հանդէս, հանդիսի, հանդիսաւոր, հանդիսական, հանդիսանալ. պարտէ՛զ, պարտիզի, պարտիզպան, պարտիզպա-

նութիւն. կէս, կիսել, կիսան, կիսու. վէ՛պ, վիպակ, վիպամն. էշ, իշուկ, իշավայրի, իշայծեամ և այլն:

դ) ոյ երկբարբառը, շեշտը կորցնելով, սղում դառնում է ոյ. ծո՛յլ, ծուկանալ, ծուկութիւն. թոյլ, թուկանալ, թուկացնել, թուկութիւն. համբոյր, համբուրել. հրապոյր, հրապուրել, հրապուրանք. ոյժ, ուժեղ, ուժանակ. կոյս, կուսական, կուսութիւն. բոյս, բուսնել, բուսաբան, բուսցնել. խրախո՛յս, խրախուսել, խրախուսանք և լն:

ե) եա երկբարբառը, շեշտը կորցնելով, սղում դառնում է ե, օր. վայրկեան, վայրկենական, վայրկենաբար. մատեան, մատենագիր, մատենագրութիւն. ատեան, ատենի, ատենակալ, ատենապետ. տեղեա՛կ, տեղեկանալ, տեղեկութիւն. սենեա՛կ, սենեկապան, սենեկապետ. այծեամ, այծենինիկ. յոբելեան, յոբելենական և լն:

ե) եայ երբարբառը, շեշտը կորցնելով, սղում դառնում է է, օր. քրիստոնեա՛յ, քրիստոնէի, քրիստոնէութիւն. պաշտօնիա՛յ, պաշտօնէի, պաշտօնէութիւն. գործունեա՛յ, գործունէութիւն:

ԽՆԴԻԲ: Բարգել հետեւեալ բառերից նոր բառեր, պահպանելով շեշտի կանոնները. գունդ, քուն, շամփուր, սուրճ, կրունկ, խունկ, տունկ, սուրգ, կերակուր, բուրգ, ժողովներդ, քուրդ և լն: (Օր. գունդ—գնդել, գնդաձել, գնդապետ: Քուն—քնել, քնաբեր, քնաթաթախ):

Մարմին, ծիս, գիրք, կոկիծ, լուսին, քրտինք, շիշ, միտք, գետին, վճիռ, Սիս և այլն:

Զէթ, մէջ, ազգասէլ, հայրենասէլ, բնագէտ, հայրէգէտ և լն: Գոյն, համբոյր, քնքոյշ, յոյն, ողջոյն, յոյս, թոյն և լն:

ԴԻԾՈՂ: Մենք ունինք գրոց և աշխարհիկ լեզու (գրաբառ և աշխարհաբառ): Գրոց լեզուով գրուած է մեր հին, դասական գրականութիւնը: Խսկ աշխարհիկ լեզուով մենք այժմ խօսում և գրում ենք, և գրուած է մեր արդի գրականութիւնը: Աշխարհիկ լեզուն տակաւին զարգացման աստիճաններ է անցնում: Երազարգացման մէջ ամենից առաջ նկատում է ձգտում դէպի պարզութիւն և միակերպութիւն:

Այս առթիւ առայժմ պետք է նկատել, որ գրաբառի բառերը աշխարհաբառում նոյնիսկ շեշտի տակ սղում են իրենց երկրարանները, ինչպէս այդ երևում է հետեւալ օրինակներեից.

1. Ցորեա՛ն, կորեա՛կ, սեա՛ւ, բարեա՛ւ, մեուա՛լ, վառեա՛կ և նման բառերն աշխարհաբառում դարձել են՝ ցորե՞ն, կորե՞կ սե՞ւ, բարե՞ւ, մեուե՞լ, վառե՞կ (ուրեմն եա՞-ե)

2. Հայր, մայր, գայլ, այծ, սայլ, ձայն, ծայր, այս, այդ այն, այրել և նման բառերն ժողովրդական լեզուի մէջ դարձել են՝ հէր, մէր, գէլ, էծ, սէլ, ձէն, ծէր, էս, էն, էրել (ուրեմն այ-է):

3. Լոյս, թոյն, բոյն, ոյժ ժողովրդական լեզուի մէջ սղուել դարձել են՝ լուս, թուն, բուն, ոյժ (ուրեմն ոյ-ու): Դրանով բացատրում է և այն, որ այս բառերում երբեմն ուն, համաձայն շեշտի կանոնի, սղում է, օր. բուն—բնի, բնակալ, լուս—լարացին:

4. Զին, ալիւր, սին, աղբիւր սղուել դարձել են ձին, ալիր, սին, աղբիր, որոնց մէջ ին սղում է. ճնաշամտ, ճնանտ,.. ճնագունդ, ալրավաճառ, ալրոտ, ալրոտել են:

5. Ուրիշ ճայնաւորներ ևս, որոնք նոյն իսկ շեշտի տեղափոխթեան ժամանակ անփոփիս են մնում, աշխարհաբառում սղուել են, ինչպէս օր. անկանիլ բառն աշխարհաբառում դարձել է ընկնել կամ ընկնիլ:

6. Ն բաղաձայնը շատ միավանկ բառերի վերջում փոխուել է ը կիսաձայնի, որը բոլորովին ընկել է, օր. թոռն—թոռը—թոռ, գառն—գառը—գառ, լեառն—լեռը—լեռ, կաթն—կաթը—կաթ, մատն—մատը — մատ, ակն—ակը—ակ, ձեռն—ձեռը—ձեռ, ոտն—ոտը—ոտ, եղն—եղը—եղ, բեռն—բեռը—բեռ, հարսն—հարսը—հարս, եօթն—եօթը—եօթ, տասն—տասը—տաս և այլն:

Սակայն բառակազմութեան ժամանակ անյայտացած ն-ն նորից յայտնուում է, օր. թոռնորդի, գառնուկ, գառնազմակ, լեռնական, լեռնային, կաթնասուն, մատնանշել, մատնոց, հիմնաւոր են:

ՈՐՈՇԻՉ ԵՒ ԴԻՄՈՐՈՇ ՅՈԴԵՐ¹⁾

§ 9: Սեղանի վերայ մի մատիտ կայ: Մատիտը սե-

1) Определительный и притяжательный члены.

զանի վերայ է: Մատիտը (=իմ մատիտը) սեղանի վերայ է: Մատիտը (=քո մատիտը) սեղանի վերայ է: Նա գինի է խմել: Գինին քացախել է: Գինիս (=իմ գինին) քացախել է: Գինիդ (քո գինին) քացախել է:

Մատիտ (մատիտը սեղանի վերայ է) և գինի (գինին քացախել է) բառերի վերջերին կցած ը և ն տառերը կոչւում են որոշիչ յօդեր, որովհետեւ նրանք որոշում են առարկան, ցոյց են տալիս, որ խօսքը որոշ մատիտի և որոշ գինու մասին է: Սովորաբար ը գրւում է բաղաձայներից, իսկ ն ձայնաւորներից յետոյ, օր. գիրքը մեծ է: Տետրակը փոքը է: Եկեղեցին մեծ է: Երեխան խաղում է:

Իսկ մամիտս, մատիտը բառերում և և դ տառերը կոչւում են ոիմորոշ յօդեր, որովհետեւ նրանք որոշում են այն գէմքերը, այն մարդկանց, որոնց մատիտը պատկանում է:

ԴԻԾՈՂ. 1: Սակաւ գէպքերում միայն ս-ն ոչ թէ դիմորոշ, այլ որոշիչ յօդ է, օր. գիշերս (=այս գիշեր) չեմ քնել: Իրիկունս (=այս իրիկուն) նա մեղ մօտ էր:

ԴԻԾՈՂ. 2: Դիմորոշ յօդերից առաջ ը կիսաձայնը չի գրւում, բայց պարզ հնչուում է, օր. դու մի վարդ ես առել: Երկրագնրծ, վարդ (=վարըդ) արել ես, թէ ոչ:

ԴԻԾՈՂ. 3: Աստուած բառը, մենակ գործ ածուելով, երբէք որոշիչ յօդ չէ ընդունում, օր. Արրահամը պաշտում էր Աստծուն. բայց՝ Աստուած (և ոչ թէ Աստուածը) խօսեց Արրահամի հետ:

ԻՆԴԻԲԻ: Որոշել հետեւալ ոտանաւորի մէջ պատահող որոշիչ և դիմորոշ յօդերը:

Մեղմ հովը աւելի,
Աւելի սաստկացաւ,
Երկինքը թուխու պատեց,
Փոթորիկն բարձրացաւ:
Պատանին աչքերը
Լուսնեակին բարձրացուց,

Կիթարի լարերը
Նա ուժպին հնչեցուց.
«Տմր վերջին խօսքերս
Անձկալոյս, ով լուսին
Որ բաղցըի անունդ
Յիշելով՝ կը մեռնեմ»:

Ս Ե Ր

§ 10: Հայերէնում քերականական սեռ գոյութիւն չունի, ինչպէս, օրինակ, ոսերէնում։ Սակայն կան մի քանի վերջաւորութիւններ, որոնք յատուկ են իգական սեռի անուններին։ Դրանք են. -ունի, -ղուխտ, -անոյշ, օրաշակերտ—աշակերտուհի։ Աստուած—աստուածուհի, ընկեր—ընկերուհի. Խոսրովիդուխտ, Խոսրովանոյշ և այն։ Խնդիր։ Կազմել հետեւալ արական անուններից իգականներ, պահպանելով շեշտի կանոնները. բարեկամ, երգիչ, օտար, լեհ, գերմանացի, վարժապետ, ուսուցիչ, հայ, իշխան, թագաւոր, տէր (օր. բարեկամ—բարեկամուհի):

ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ¹⁾

§ 11: Աշակերտը կարդում է։ Սոխակն երգում է։ Հիւանդը մեռաւ. Գետը հոսում է։ Քամին փչում է։ Թաշաքը սկ է։ Զին կենդանի է։

Վերև յայտնուած են եօթ որոշ մտքեր։ — Որոնք են այդ մտքերը (պատասխ. առաջին միտքն է. աշակերտը կարդում է)։ Իւրաքանչիւր միտք, որը մենք յայտնում ենք բառերով, կոչում է նախաղասութիւն։

Վերև առաջ բերած նախաղասութիւններից իւրաքանչիւրն ունի երկու անդամ։ Առաջին նախաղասութեան անդամներն են՝ աշակերտ և կարդալ բառը վե-

րագրում է աշակերտին մի գործողութիւն և կոչւում է ստորոգելի¹⁾. Իսկ աշակերտ բառն ենթարկում է մեր դատողութեանը (մենք նրա մասին դատում ենք, որ նա կարդում է, և ոչ թէ երգում կամ խօսում), ուստի և կոչւում է ենթակայ²⁾։ Ենթական միշտ ճանաչւում է ո՞վ և ի՞նչ հարցերով, օր. ո՞վ է կարդում։ — Աշակերտը ի՞նչն է հոսում—Գետը։

Կազմեցէք նախաղասութիւններ, որոնց մէջ ստորոգելիները լինին. Տաջել, մշատել, բառանչել, խրխնջալ, խշխալ (խոխնջել), հանգել, թռչել, գոռալ բառերը (օր. շունը հաջում է)։

Թւեցէք ձեզ յայտնի մի քանի առարկաներ և կազմեցէք նախաղասութիւններ, որոնց մէջ այդ առարկաները լինին ենթականներ։

ԴԻՏՈՂ. Շարադրութիւնն սկսող նախաղասութիւնը գրւում է զլիատառով և եթէ լրացած միտք է յայտնում և հետեւալ նուխաղասութեան հետ կապ չունի, ընդունում է վերջակէտ (:) ³⁾։ Վերջակէտից յետոյ եկող նախաղասութիւնը նոյնպէս միշտ զլիատառով է գրւում։

Բացի վերջակէտից կան նաև հետեւալ կէտադրութեան նըշշանները. միջակէտ (.), ստորակէտ (,), բութ (‘), հարցական նշան (‘), զարմացական նշան (‘), չակերտներ (չ չ), փակագիծ (), զիծ (—) և ենթամիայ (—)։

§ 12: Վերև առաջ բերած նախաղասութիւններից իւրաքանչիւրը բաղկացած է միայն երկու անդամներից. Ենթակայից և ստորոգելուց։ Սակայն զանազան հարցերի միջոցաւ կարելի է նախաղասութիւնն ընդարձակել, նրա մէջ մտցնելով ուրիշ անդամներ, որոնք բացատրում և լրացնում են զլիատառը անդամների իմաստը։ Օրինակի համար վերցնենք առաջին նախաղասութիւնը։ Կարդում է։ (Ո՞վ)։ — Աշակերտը կարդում է։ (Ո՞ր, ինչպիսի)։ — Ուշիմաշակերտը կարդում է։ Ուշիմ աշակերտը կարդում է (ի՞նչը)։

1) Предложение. 2) Подлежащее. 3) Վերջակէտ—точка.

դասը: Ուշիմ աշակերտը կարդում է (ինչպէս) բարձրածայն դասը: Ուշիմ աշակերտը կարդում է բարձրածայն դասն (ժւմ) իր ուսուցչի առաջ: Ուշիմ աշակերտը կարդում է բարձրածայն դասն իր ուսուցչի եւ ընկերների առաջ: Ուշիմ աշակերտը կարդում է դասն իր ուսուցչի և (քանիք) երեսուն ընկերների առաջ: Ինչպէս տեսնում ենք, միայն երկու անդամից բաղկացած նախադասութիւնից մենք ստացանք մի նախադասութիւն, բաղկացած է 11 անդամներից, այն է. «Ուշիմ աշակերտը կարդում է բարձրածայն դասն իր ուսուցչի և երեսուն ընկերների առաջ»: Սրանցից երկուսը, ենթական և ստորոգելին, կոչւում են գլխաւոր անդամներ¹⁾: իսկ մասցածները՝ երկրորդական անդամներ²⁾: Այս վերջինները միայն բացատրում և լրացնում են գլխաւոր անդամների իմաստն, ուստի և կոչւում են մեկնական կամ բացատրական բառեր³⁾:

Նախադասութիւնը կոչւում է համառօտ⁴⁾, երբ միայն գլխաւոր անդամներ (ենթակայ և ստորոգելի) ունի: Իսկ երբ նա երկրորդական անդամներ ևս ունի, կոչւում է ընդարձակ⁵⁾:

Խնդիր. Կազմել հինգ համառօտ և հինգ ընդարձակ նախադասութիւններ:

§ 13. Նախադասութեան մէջ պատահող ամէն մի բառ կոչւում է բանամաս կամ բանասացութեան մաս⁶⁾: Բանամասերից ոմանք, ինչպէս տեսանք, պատասխանում են որոշ հարցերի, իսկ ոմանք՝ ոչ: Օր. աշակերտ բանամասը պատասխանում է ո՞վ հարցին, ուշիմ—ինչպիսի՞ հարցին. իսկ եւ բանամասն ոչ մի հարցի չի պատասխանում

1) Главные члены. 2) Второстепенные члены. 3) Объяснительные слова. 4) Краткое. 5) Распространенное. 6) Часть речи.

ԲԱՌԻ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԲԱՌԱԿԱԶՄ¹⁾

§ 14: Վերցնենք թագ և զիր երկու միավանկ բառեր և տեսնենք, թէ նրանցից ուրիշ ինչ բառեր են կազմւում: Թագ-ատր, թագ-ուժի, թագ-ատրել, թագ-ատրեցնել, թագ-ատրական, թագ-ատրութիւն: Գիր, գրել, գրուել, գրիչ, գրող, գրական, գրականութիւն:

Առաջին բառերում անփոփոփու կրկնւում է թագ, իսկ երկրորդ բառերում՝ զիր (որն ըստ § 8, ա դարձել է զր) վանկը: Թագ և զիր վանկերը կոչւում են բառերի արմատներ²⁾: Ուրեմն արմատը բառի այն մասն է, որն երբէք չէ փոխւում:

Նոյն բառերում՝ ատր, -ուժի, -ատր-եցնել, -ատր-ական, -ատր-ութիւն, -ել, -ել, -իչ, -ող, -ական, -ական-ութիւն մասերը կոչւում են բառերի վերջատրութիւններ³⁾: Բառի վերջաւորութիւնը կազմուած է ածանցներից⁴⁾. -ատր, -ուժի, -ել, -եցնե-, -ական, -ութիւն, -ու-ել ածանցներ են, որոնք միանալով բառի արմատի հետ, նրան զանազան նշանակութիւններ են տալիս: Բացի արմատից և վերջաւորութիւնից բառը կարող է ունենալ նաև առաջալիք մնանիկ կամ նախածանց, օր. ան-սիրտ, տ-գեղ, տ-գէտ, նախ-դիր, յետ-դիր, վեր-ա-գրել, վեր-ա-դրել, ան-դիր բառերում ան, տ, նախ-, յետ-, վեր-, ան- մասնիկները նախածանցներ են: Լոկ արմատից բաղկացած բառերը կոչւում են արմատային, իսկ արմատից և ածանցներից բաղկացածները՝ ածանցաւոր կամ ածանցեալ բառեր:

Խնդիր. Մշակ, պսակ, դարձ, սուր գիրկ, զիր արմատային բառերից կազմել ածանցաւոր բառեր: (Օր. մշակել, մշակութիւն):

1) Составъ словъ. 2) Բառի արմատ—корень слова. 3) Окончанія словъ. 4) Суфіксеъ.

§ 15. Բառերը լինում են պարզ¹⁾ և բարդ²⁾: Պարզ բառը բաղկացած է մի արմատից, իսկ բարդը՝ երկու կամ աւել արմատներից, օր. թագաւոր պարզ բառ է, իսկ թագ-ա-կալ (=թագ և կալուլ), թագ-ա-ժառանդ (=թագ և ժառանդ) բարդ բառեր են: Գինի պարզ բառ է, իսկ գին-ե-վաճառ (=գինի և վաճառել), գին-ե-տուն (=գինի և տուն) բարդ բառեր են: Հաց պարզ բառ է, իսկ հացավաճառ (հաց և վաճառել), հացթուխ (հաց և թխել), բարդ բառեր են:

Ինչպէս վերև առաջ բերած օրինակներից երկում է, բարդ բառերի մէջ արմատները միմեանց հետ կարող են միանալ ա և ե տառերով: Ու և եւ շաղկապներով ևս նըրանք կարող են միմեանց հետ միանալ, օր. առուտուր կամ տուտուր (առնել և տալ):

Խնդիր: Կազմել հետեւալ պարզ բառերից բարդ բառեր. անոյշ և հոտ, հոտ և տոնել, հոտ և պետ, զլուխ և հարկ, տակ, գիր և տախտակ, սեղան և տուն, դաս և տուն, կօշիկ և կարել, մայր և քոյր, հայր և եղբայր, յօդուած և գիր, յօժար և կամենալ, տօն և ծառ, կրօն և սիրել, դաս և ընկեր, նոր և ընծայել, օր և վարել, գործ և վարել, հիւանդ և պահել, դրօշակ և կրել, վերին և յարկ, յատակ և գիծ, յարդ և գող, յոյն և սէր, բարի և գործ, հուր և խաղալ, թոյլ և կազմ, բան և ստեղծել, միս և վաճառել: (Օրինակ. անուշանո՞տ վարդ, հոտառու շուն ևն):

Ապացուցանել, որ բարդ բառեր կազմելիս շեշտի կանոնները պահպանում են (տես § 8):

§ 16: Երբ բառը տողի վերջում չի տեղաւորւում, նրա վերջին մասը անց են կացնում միւս տողը, և այս գործողութիւնը կոչւում է տողարդարձութիւն: Տողարձութեան ժամանակ բառը բաժանում է վանկերի և տողավերջի վանկից յետոյ դրւում է ենթամնայ (-) նշանը, օր. ժամանակ, իշխանութիւն, երկրագունդ,

գըտ-նել, պը-սակ, կը-տակ, ծը-նող-ներ, բե-րան-ներ, զըն-դան-ներ են:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ¹⁾

§ 17: Գոյական անունները առարկաների կամ գոյութիւնների անուններն են. տղայ, աղջիկ, Աստուած, հրեշտակ, այգի, ծառ, տուն, հոգի ևն գոյական անուններ են: Գոյական անունը բանամաս է, որը պատասխանում է ո՞վ և ի՞նչ հարցերին. ո՞վ ստեղծեց աշխարհը: Աստուած սանեղծեց աշխարհը: Ի՞նչը քանդուեց: Ճունը քանդուեց:

§ 18: Գոյականները լինում են շնչաւոր²⁾, օր. Աստուած, տղայ, աղջիկ, եղ, կով, սոխակ. և անշունչ³⁾, օր. այգի, ծառ, գետ ևն:

Սովորական գոյականներից կազմւում են նուազականները⁴⁾, օր. աստղ—աստղիկ, հատ—հատիկ, որր—որբիկ կամ որբնեկ. հորթ—հորթիկ կամ հորթնեկ. մարդ—մարդուկ. հայր—հայրիկ. մայր—մայրիկ. շուն—շնիկ. առու—առուակ. գետ—գետակ. ձոր—ձորակ կամ ձորիկ. թիւ—թիակ. ժողով—ժողովակ. տաշտ—տաշտակ. գիրք—գրքնյիկ. գառ—գառնիկ կամ գառննեկ⁵⁾. մանուկ—մանկիկ⁶⁾. խոնմբ—խմբակ. վէպ—վիպակ⁷⁾, բլուր—բլրակ կամ բլրիկ. տնւն—տնակ. էշ—իշնեկ. հոգի—հոգեակ, որդի—որդեակ. աղաւնի—աղաւնեակ. կղզի—կղզեակ և այլն:

Այս օրինակներից երկում է, որ նուազականները կազմում են -իկ, -ուկ, -ակ և -եակ մասնիկների միջոցաւ: -եակ մասնիկն ընդունում են ի-ով վերջացող գոյականները:

1) Существительное имя. 2) Одушевленное. 3) Неодушевленное.

4) Уменьшительный. 5) Տես § 8, դիտող. 6) Տես § 8 ա. 7) Տես § 8 բ:

Նուազականները սովորաբար ցոյց են տալիս առարկայի նուազութիւնը կամ փոքրութիւնը:

Սակայն նրանք յաճախ փաղաքշական¹⁾ և նախատական²⁾ իմաստ ևս ունին, օր. հայրիկ, մայրիկ, մանկիկ նշանակում են՝ սիրելի հայր, մայր, մանուկ. Իսկ ժողովակ նշանակում է ողորմելի, ապօրինի ժողովանակ—ողորմելի, վատ տուն. խմբակ—չնչին, աննշան խումբ, մարդուկ ողորմելի, խղճուկ մարդ և այլն:

§ 19. Գոյական անունները լինում են յատուկ³⁾ և հասարակ⁴⁾: Յատուկ անունը մենք տալիս ենք մի գոյութեան, երբ ցանկանում ենք այդ գոյութիւնը զանազանել իր նման միւս գոյութիւններից. Իսկ հասարակ անունն անխտիր տալիս ենք բոլոր գոյութիւններին: Աստուած, Տիգրան, Անի, Արաքս, Հայաստան յատուկ անուններ են, իսկ (չ)աստուած, մարդ, քաղաք, գետ, երկիր՝ հասարակ անուններ են: (Չ)աստուածներ ասելով մենք հասկանում ենք հեթանոսների աստուածները կամ կոքերը. Իսկ Աստուած ասելով հասկանում ենք կենդանի Աստծուն, որին մենք պաշտում ենք: Գետ ասելով մենք հասկանում ենք երկրագնդիս վերայ հոսող հազարաւոր գետեր. Իսկ Արաքս ասելով մենք հասկանում ենք Հայաստանի ամենամեծ գետը:

ԽՆԴԻՐ: Գրեցէք ձեր հարազատների և ազգականների յատուկ և հասարակ անունները: Գրեցէք ձեզ յայտնի երկիրների, քաղաքների և գետերի յատուկ անունները:

ԴԻՑՈՂ: Բացի յատուկ անուններից գլխատառերով գրւում են գրական երկերի, օրագրերի, ամսագրերի, շաբաթաթերթերի և այլն խորագրերը, հոգևոր և մարմաւոր իշխանների և իշխանութիւնների տիտղոսներն և այլն: Օր. Արովեանն իր «Վէրք Հա-

1) Ласкательное. 2) Презрительное. 3) Собственное. 4) Нарцательное.

յաստանին» գրել է ոամկական լեզուով: Հայերէն լեզուով հրատարակւում են «Մշակ», «Հորիզոն» և ուրիշ օրագրեր:

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՃՈԼՈՎՈՒՄԸ

§ 20. Տետրակը (ի՞նչը) կապոյտ է: Տետրակի՛ (ի՞նչի՛) գինը թանկ է: Ես դիպայ (ի՞նչի՞ն) տետրակի՞ն: Ես վերցրի (ի՞նչը) տետրակը: Ես դասս սովորում եմ (ի՞նչո՞վ) տետրակով: Նա քաշեց (ի՞նչի՞ց) տետրակի՞ց: Տետրակում (ի՞նչո՞ւմ) ծնողական թուղթ կայ:

Տետրակները (ի՞նչե՞րը) կապոյտ են: Տետրակների (ի՞նչերի՞ն) գինը թանկ է: Ես դիպայ (ի՞նչերի՞ն) տետրակների՞ն: Ես վերցրի (ի՞նչե՞րը) տետրակները: Ես դասերս սովորում եմ (ի՞նչերի՞վ) տետրակներով: Նա քաշեց (ի՞նչերի՞ց) տետրակներից: Տետրակներում (ի՞նչերո՞ւմ) ծնողական թղթեր կան:

բ) Աշակերտը (ո՞վ) կարգում է: Աշակերտի՛ ո՞ւմ՝ հայրը տանն է: Տնը գիրքն (ո՞ւմ) աշակերտին: Ես տեսայ (ո՞ւմ) աշակերտին: Նա ինձ մօտ եկաւ (ումնո՞վ) իր աշակերտով: Գիրքն ստացայ (ումնի՞ց) աշակերտից: Այդ աշակերտով (ումնո՞ւմ) կեղծիք չկայ:

Աշակերտները (ովքե՞ր) կարգում են: Աշակերտների (ո՞ւմ) հայրերը տանն են: Տուէք գրքերն (ո՞ւմ) աշակերտների՞ն: Ես տեսայ (ո՞ւմ) աշակերտների՞ն: Նա ինձ մօտ եկաւ (ումնո՞վ) իր աշակերտներով: Գրքերն ստացայ (ումնի՞ց) աշակերտներից: Այդ աշակերտներով (ումնո՞ւմ) կեղծիք չկայ:

Ի՞նչպէս տեսնում ենք վերև առաջ բերած օրինակներից, տետրակ և աշակերտ գոյականները իրենց վերջաւորութիւնները փոխում են: Իսկ այս փոփոխութիւններն առաջանում են նրանից, որ այդ բառերն իրենց յարաբե-

բութիւնները նախադասութեան միւս անդամների հետ շարունակ փոխում են:

Գոյական անունների այս փոփոխութիւնը կոչում է հոլովում¹⁾. իսկ իւրաքանչիւր փոփոխումն առանձին վերցրած՝ հոլով²⁾: Հոլովների թիւը եօթն է. ուղղական³⁾, սեռական⁴⁾, տրական⁵⁾, հայցական⁶⁾, գործիական⁷⁾, բացառական⁸⁾ և ներգոյական⁹⁾:

§ 21. 1. Ուղղական հոլովը բառի սկզբնական ձեռ և ենթակայի հոլովն է. նա պատասխանում է ո՞վ և ի՞նչ հարցերին. ո՞վ է կարդում: — Աշակերտը: Ի՞նչն է թանկ: — Տեսրակը:

Դիմում. Ուղղական հոլովը կոչում է կոչական, երբ առարկային դիմում ենք որոշ կոչով, օր. ո՞վ աշակերտ, լիբր քո ծնողներին և ուսուցիչներին:

2. Սեռական հոլովը պատկանելութեան հոլովն է և պատասխանում է ո՞մ, ի՞նչի՞ն հարցերին, օր. ո՞մ հայրը: — Աշակերտի հայրը. ի՞նչի՞ն գինը: — Տեսրակի գինը:

3. Տրական հոլովը տալու հոլովն է և պատասխանում է ո՞մ, ի՞նչի՞ն հարցերին: Նա վերջանում է ն տառով, օր. ո՞մ տամ գիրքը: — Գիրքը տուր աշակերտին. ի՞նչի՞ն գիրքը: — Ես գիպայ տեսրակին:

Դիմում. 1. Երբ խօսքն անորոշ առարկայի մասին է, այն ժամանակ տրական հոլովի ն վերջաւորութիւնն ընկնում է: Օր. «այս գիրքը ես մի աշակերտի տուր» և «այս գիրքը ես աշակերտին տուր»: «Այսօր ես մի քանի աշակերտների տեսրակներ եմ բաժանել» և «այսօր ես աշակերտներին տեսրակներ եմ բաժանել»: Առաջին նախադասութիւնների մէջ տրականի ն-ն ընկել է, որովհետեւ եթէ նա մնար, կարող էր որոշիչ յօդի (§ 9) հետ շփոթուել: «Անցնենք փաստերի» և «անցնենք փաստերին» նախադասութիւնների մէջ «փաստերի» և «փաստերին» տրական հոլով-

1) Склонение. 2) Падежъ. 3) Именительный. 4) Родительный. 5) Дательный. 6) Винительный. 7) Творительный. 8) Изымательный. 9) Мѣстный, локативный.

ներ են, միայն թէ առաջին նախադասութեան մէջ տրականի ն-ն ընկել է, որովհետեւ խօսքն անորոշ փաստերի մասին է:

Դիմում. 2: Տրականի ն-ն ընկնում է նաև դիմորոշ յօդի (§ 9) առաջ. օր. «տուր այս գիրքն իմ աշակերտին» և «տուր այս գիրքն աշակերտիս» (և աչ թէ աշակերտինս): «Գիրքը տուի աշակերտին» (և ոչ թէ աշակերտինդ) են:

4. Հայցական հոլովը ներգործական բայի պահանջած հոլովն է և պատասխանում է ո՞ւմ, ի՞նչ հարցերին, օր. ո՞ւմ տեսար: — Ես տեսայ աշակերտին: Ի՞նչը վերցրիր: — Ես վերցրի տեսրակը:

Դիմում. Շնչաւոր և բանական առարկաների հայցական հոլովը նման է արարկանին, իսկ անշունչներինը — ուղղականին, օր. ես գիրքը (հայց. հոլ.) տուի աշակերտին (արակ. հոլ.): Ետքակները (հայց. հոլ.) բաժանեցին աշակերտներին (արակ. հոլ.). և դասից յետոյ աշակերտներին (հայց. հոլ.) արձակեցին: Նա գործարանը (հայց. հոլ.) ծախել, իսկ բանուորներին (հայց. հոլ.) արձակել է:

Իսկ եթէ առարկան շնչաւոր, բայց բանական չէ, նրա հայցականը սովորաբար նման է ուղղականին. օր. մսագործն եղը (ոչխարը, կովը) մորթել է: Եշը (հայց. հոլ.) կերել է, պոչից է խրտնում (առած):

Երբ խօսքն անորոշ առարկայի մասին է, նոյն իսկ բանական առարկայի հայցականը նման է լինում ուղղականին. օր. այսօր ես տեսայ մի աշակերտ (կամ մի աշակերտի); որը գրքեր էր առնում: Զէ կարելի ասել «տեսայ մի աշակերտին», որովհետեւ տրականի ն-ն կարող էր որոշիչ յօդ կարծուել և շփոթութիւն առաջ կը գար (առև վերէ § 21, 3, Դիմում.):

5. Գործիական հոլովը գործիրի հոլովն է, որով մի բան անում ենք, և պատասխանում է ի՞նչո՞վ, ումնո՞վ հարցերին, օր. դասդ ի՞նչո՞վ ես սովորում: — Դասս սովորում եմ տեսրակով:

6. Բացառական հոլովը առնելու (ի բաց առնելու, վերցնելու) հոլովն է և պատասխանում է ումի՞ց, ի՞նչի՞ց հարցերին, օր. ո՞ւմնից ստացար գիրքը: — Գիրքն ստացայ աշակերտից: Ի՞նչի՞ց քաշեցիր: — Բաշեցի տեսրակից:

7, Ներգոյական հոլովը մի բանի ներսը լինելու հոլովը է և պատասխանում է ումնո՞ւմ և ինչո՞ւմ հարցերին. օր. ումնո՞ւմ չկայ կեղծիք:—Այդ աշակերտում՝ կեղծիք չկայ: ինչո՞ւմ կայ ծծողական թերթ:—Տետրակում՝ կայ ծծողական թերթ: Ծերութեան հասակում՝ մարդ պէտք է հանգստանայ: Միայն պէտք է նկատել, որ այս հոլովը այնքան էլ գործածական չէ: Փոխանակ ասելու «աշակերտում», սովորաբար ասում են «աշակերտի մէջ»: Գետում=գետի մէջ, արտում=արտի մէջ ին:

ԴԻՑՈՂ. Բացի ուղղականից միւս հոլովները կոչւում են շեղ հոլովներ:

§ 22: Գոյական անուններն ունին թիւ, որը լինում է եզակի և յոգնակի. «տետրակը կապոյտ է», «աշակերտը կարդում է» նախադասութիւններում խօսքը մի հատ տետրակի և մի հատ աշակերտի մասին է: Իսկ «տետրակները կապոյտ են», «աշակերտները կարդում են» նախադասութիւններում խօսքը երկու կամ աւելի տետրակների և աշակերտների մասին է: Առաջին դէպքում տետրակ և աշակերտ գոյականները գործ են ածուած եզակի, իսկ երկրորդ դէպքում յօդնակի թւով:

ԴԻՑՈՂ. Կան նաև հաւաքական գոյականներ, որոնք ցոյց են տալիս ոչ թէ մէկ, այլ շատ անձեր կամ իրեք միասին առած, օր. Վարդանանք (=Վարդանն և իր զինակիցները), հէրանք (=հայրն իր ընտանիքով, հայրական տուն), պապոնք (=պապն և իր ընտանիքը), քեռոնք (=քեռիններն և իրենց հետ միասին ապրող ընտանիքը), զրեանքը (=զրբերը) մեղ մօտ են ին:

ԽՆԴԻԲ. Որոշել ստորեւ առաջ բերած հասուածում պատահող յատուկ և հասարակ անունները: Որոշել, թէ գոյականներն իսչ հարցերի են պատասխանում և ի՞նչ հոլովով են գործ ածուած:

Հայրը, Թաթուլը, գալիս էր, գնում, և Բարիկը լուռ էր, նոյն իսկ բնաւ չէր խօսում, ժամերով նստում էր հօր կողքին և լուռ էր: Հօր փաղաքշանքներին պատասխանում էր անտարբերութեամբ, դժկամակելով: Միայն կուզէր գնալ նրա հետ, ազա-

տուել այս անից, ուր այլիս ոչ ոք չկար, որի մօտ իր հոգին չերմանար:

§ 23: Կան չորս հոլովումներ, ըստ որոնց հոլովում են գոյական անունները: Սակայն կան սակաւաթիւ գոյականներ, որոնք չեն ենթարկւում այս հոլովումների կանոններին և ունին իրենց բացառիկ, արտուղի հոլովումը, ինչպէս այդ յետոյ կը տեսնենք:

Ըստ առաջին հոլովման հոլովող գոյականները եզակի ուղղականում բնորոշ վերջաւորութիւն չունեն: Եեղ հոլովներում նրանց հոլովական վերջաւորութիւններն են. սեռակ. ~ի, տրակ. ~ին, գործիակ. ~ով, բաց. ~ից և ներգոյակ. ~ում:

Յոգնակիում միայն աւելանում է ~եր կամ ~ներ ածանցը. իսկ ~ի, ~ին, ~ով, ~ից և ~ում հոլովական վերջաւորութիւնները մնում են անփոփոխ:

ԱՌԱՋԻՆ ՀՈԼՈՎՈՒՄ

Հոլովներ	Հարցեր	Եղակի թիւ	Յոգնակի թիւ	Եղ. թիւ	Յոգ. թիւ
Ուղղակ. հոլ.	սի, ի՞նչ	աշակերտ	աշակերտներ	զետ	զետեր
Սեռակ. հոլ.	սւմ, ի՞նչի՞ն	աշակերտի	աշակերտների	զետի	զետերի
Տրակ. հոլ.	ս՞ւմ, ի՞նչի՞ն	աշակերտին	աշակերտներին	զետին	զետերին
Հայց. հոլ.	ս՞ւմ, ի՞նչ	աշակերտին	աշակերտներին	զետ	զետեր
Գործ. հոլ.	սւմնով, ի՞նչի՞ն	աշակերտով	աշակերտներով	զետով	զետերով
Բացակ. հոլ.	ումի՞ց, ի՞նչի՞ց	աշակերտից	աշակերտներից	զետից	զետերից
Ներգոյկ. հոլ.	ումնում, ի՞նչում	աշակերտում	աշակերտներում	զետում	զետերում

ԴԻՑՈՂ. Որոշիչ յօդը շեղ հոլովերում սովորաբար չէ դըր-
ւում, օր. այն աշակերտն աշխատասէր է: Այս այն աշակերտի
(և աչ թէ աշակերտին) գիրքն է: Այս տեսրակը վերցրել եմ այն
աշակերտից (և աչ թէ աշակերտիցն) և լու:

§ 24: Միավանկ գոյականի յոգնակին ունի -եր վեր-
ջաւորութիւնը, օր. գետ—գետեր, ծառ—ծառեր, տեղ—
տեղեր, սայլ—սայլեր և այլն: Բացառութիւն է կազմում
ոռա գոյականը, որի յոգնակին է ոռաներ կամ ուներ,
որովհետեւ այս բառը սկզբում գրւում էր ըսուս, ուրեմն
երկվանկ էր: Իսկ երկվանկ և բազմավանկ գոյական-
ների յոգնակին ունի -ներ վերջաւորութիւնը, օր. փողոց
—փողոցներ, քաղաք—քաղաքներ, աշակերտ—աշակերտ-
ներ և այլն:

§ 25: Յոգնակիում -ներ վերջաւորութիւն ունին նաև
այն միավանկ գոյականները, որոնք գաղտնի վանկ և
ունին (§ 5, դիտող.), օր. մշակ—մշակներ, պսակ—պսակներ,
կտոր—կտորներ, ծնող—ծնողներ, հսկայ—հսկաներ, բլուր
—բլուրներ, տղայ—տղաներ (յ կիսաձայնն ընկնում է,
տես ստորև § 28):

Սակայն պէտք է նկատել, որ երկու բաղաձայներով
վերջացող գոյականներն երբեմն ունենում են և -եր, և
-ներ վերջաւորութիւնը, նայելով թէ նրանց վերջին բա-
ղաձայների մէջ ը կիսաձայնը ինչպէս է հնչւում:

Այսպէս արտասանում և գրում են. անդդ—անդդեր
և անդդ—անդդներ. աստղ—աստղեր և աստղդ—աստղներ.
արկդ—արկդեր և արկըդ—արկդներ. եզր—եզրեր և եզըր
—եզըներ. տարր—տարրեր և տարըր—տարըներ և այլն:

§ 26: Միավանկ գոյականների վերջից ընկած ն բա-
ղաձայնը (§ 8, դիտող. 6) յոգնակիում երեան է գալիս.
լեռ—լեռներ, ձեռ—ձեռներ, ոտ—ոտներ. մատ—մատներ,
գառ—գառներ, բեռ—բեռներ, եղ—եղներ, հարս—հարս-
ներ, և այլն:

§ 27: Բարդ գոյականի վերջին միավանկ արմատը յոգ-
նակիում ունի սովորաբար -եր վերջաւորութիւնը, եթէ ան-
շունչ առարկայ է նշանակում, օր. նշանագիր—նշանա-
գրեր, հեռագիր—հեռագրեր, ձեռագիր—ձեռագրեր, մակ-
բայ—մակբայեր, գարեհաց—գարեհացեր, անձրեաջուր
—անձրեաջրեր, զօրագունդ—զօրագնդեր, քարաժայո—
քարաժայուրեր: (Բայց ասում են նախդիր—նախդիրներ,
յետդիր—յետդիրներ, ջրհոր—ջրհորներ և լու): Իսկ եթէ շըն-
չաւոր առարկայ է նշանակում, կարող է ունենալ և -ներ և -եր
վերջաւորութիւնը, օր. մատենագիր—մատենագիրներ, ոճ-
րագործ—ոճրագործներ, բամբակագործ—բամբակագործ-
ներ. սանամայր—սանամայրեր, սանսահայր—սանսահայրեր,
ծծմայր—ծծմայրեր և այլն: Եթէ վերջին արմատը -կալ
է, յոգնակին միշտ -ներ վերջաւորութիւնն ունի, օրին.
գործուկալ—գործակալներ, մահճակալ—մահճակալներ և լու,

§ 28: Երկվանկ, բազմավանկ և գաղտնավանկ գոյա-
կանները յոգնակիում թէ ներ-ից և թէ որոշչ և
դիմորոշ յօդերից առաջ յ կիսաձայնը սղում են, օր. փե-
սայ, յոգն. փեսաներ, փեսան եկաւ. փեսաս եկաւ. երե-
խայ, յոգն. երեխաներ. երեխան հիւանդ է, երեխաս տը-
կար է, երեկոյ, յոգն. երեկոներ, այս երեկոն ես նրա
մօտ անցկացրի: Սակայն նոյն դէպքերում միավանկ բա-
ռերը կիսաձայնը չեն սղում, օր. հայ, յոգն. հայեր. հայն
եկաւ, հայս (=հայլս) այստեղ է: Խոյ, յոգն. խոյեր,
խոյը կորաւ. խոյս (=խոյլս) կորաւ, բօյ—բօյդ (=բօյլդ)
բարձր է և լու:

ԴԻՑՈՂ. 1: Քահանայ, սատանայ, լումայ, կաթսայ, շուկայ,
ամիրայ, շղթայ և ուրիշ բառեր փոխ են առնուած օտար լեզու-
ներից, իսկ օտար լեզուներում դրանց վերջում յ չկայ, այնպէս
որ հայերէնում յ-ն թիւրիմացութեամբ է գրուել: Այժմ էլ մենք
շարունակում ենք օտարներից -առով վերջացող բառեր փոխ առ-
նել, սակայն դրանց վերջը յ չենք գրում, օր. վիեննա, Մուկվա,

ակադեմիա, պրեմիա, Մարօքօ և լն: Յ-ն մենք գրում ենք այս բառերի միայն շեղ հոլովերում, օր. Վիեննայում, Մասկայից, ակադեմիայում, Մարօքօի և այն:

ԴԻՑՈՂ. 2: Ա-յով վերջացող երկվանկ և բազմավանկ գոյականները սովորական խօսակցութեան ժամանակ երեմն եղակիում ձգում են այ վերջաւորութիւնը, իսկ յոգնակիում ընդունում են շեղ վերջաւորութիւնը, օր. Ռ. երեխայ, Ս. երեխի, Տ. երեխին և լն: ,ոգն. Ռ. երեխէք, Ս. և Տ. երեխանց և լն:

§ 29: Տղայ բառը բացի սովորականից յոգնակիում ունի նաև հետևեալ ձեր. Ռ. աղէքք, Ս., Տ. և Հ. տղերանց Գ. աղերանցով և լն:

§ 30: Էշ գոյականը հոլովում է և համաձայն շեշտի կանոնին (§ 8, բ), և հակառակ նրան: Առաջին գէպքում յոգնակիում նա ընդունում է ան ածանցը. Ռ. էշ, Ս. իշի և էշի, Տ. չշին և էշին, Գ. իշով և էշով, Բ. իշից և էշից, Ն. իշում և էշում. յոգն. Ռ. իշաներ և էշեր, Ս. իշաների և էշերի և այն: Դէզ գոյականը, որ կանոնաւոր հոլովում ունի (Ս. դիզի, Տ. դիզին և լն). յոգնակիում նոյնպէս ընդունում է ան ածանցը. դիզաներ, Ս. դիզաների և այն: Այսպէս և ձու—ձուաներ, լու—լուաներ:

§ 31: Ժամանակ ցոյց տուող գոյականները եղակի սեռականում սովորաբար ունին շուայ վերջաւորութիւնը, օր. օր—օրուայ, շաբաթ—շաբաթուայ, ամիս—ամսուայ, (բայց ասում են ամսի մէկին, երկուսին...), մահ—մահուայ կամ մահուան, ժամ—ժամուայ (ժամ—ժամի—եկեղեցի), ձմեռ—ձմեռուայ, ամառ—ամառուայ, հերու—հերուայ, դիշեր—դիշերուայ, ցերեկ—ցերեկուայ, առաւոտ—առաւոտուայ, ճաշ—ճաշուայ, ժամանակուայ, անդամ—անդամուայ և լն: Գ. օրով, շաբաթով, Բ. օրից կամ օրուանից, շաբաթից կամ շաբաթուանից և լն:

§ 32: Նիա վերջացող յատուկ անունները եղակի սեռականում բացի սովորական վերջաւորութիւնից ունին

նաև շիոյ վերջաւորութիւնը, օր. Կիլիկիա—Կիլիկիայի և Կիլիկիոյ. Մուսիա—Մուսիայի և Մուսիոյ. Իտալիա—Իտալիայի և Իտալիոյ և այն:

§ 33: Ըստ առաջին հոլովում են նաև բայերից ածանցուած գոյականներն շում վերջաւորութեամբ, օր. ճնշում, անկում, մրցում, թաթախում, ընդմիջում, սոսկում, նկատում, առում, օծում, հոլովում, մեկնում, պառակտում, վերապահում, շարժում, զարդացում, քարացում և այն: Ռ. ճնշում, Ս. ճնշումի, Տ. ճնշումին և լն: Սակայն այս գոյականներն այլկերպ, գրաբառաբար ևս հոլովում են. Ռ. ճնշում, Ս. և Տ. ճնշման, Հ. ճնշում, Գ. ճնշմամբ, Բ. ճնշումից, Ն. ճնշումում: Յոգնակին կանոնաւոր է. Ռ. ճնշումներ, Ս. ճնշումների և լն:

ԴԻՑՈՂ. Գոյականները հոլովուելիս ենթարկուում են շեշտի կանոններին (§ 8 ա—ե): Սակայն այս կէտում արդի աշխարհաբառը, շորհիւ մեր անփութութեան, հեռու է մնացել մեր գասական լեզուի, դրաբառի միակերպութիւնից: Ընդհանրապէս շեշտի կանոնները ճշտիւ պահպանուած են եղակի, խախտուած յոգնակի թուում:

ա) Ու կարճ ձայնաւորը միավանկ բառերում գրեթէ միշտ, համաձայն կանոնի, սղում է, օր. փուշ—փշի, յոգն. փշեր. ջուր—ջրի, յոգն. ջրեր. գունդ—գնդի, յոգն. գնդեր. թուփ—թփի, յոգն. թփեր. սուր—սրի, յոգն. սրեր և լն: Իսկ բազմավանկ բառերի յոգնակիում նոյն ձայնաւորը, հաճառակ շեշտի կանոններին, յաճախ չէ զեղչուում, օր. սերունդ—սերնդի, բայց յոգն. սերունդներ. ժողովուրդ—ժողովրդի, յոգն. ժողովուրդներ. կրունկ—կրնկի, յոգն. կրունկներ. կրունկների կրունկի, յոգն. կրունկներ. շամփուր—շամփրի, յոգն. շամփուրներ. կերակներ—կերակրի, յոգն. կերակուրներ և լն: Մամուկ եղակի ևս մամուկի. ուկ և ուս վերջացող բառերի եղակիում ևս ուն չի վեղչուում, օր. թզուկ—թզուկի, հանելուկ—հանելուկի, հեղուկ—հեղուկի, թերուս—թերուսի և լն:

բ) Նոյնը կարելի է ասել և ի կարճ ձայնաւորի մասին, ինչպէս երեսում է հետևեալ օրինակներից. սիրտ—սրտի, յոգն. սրտեր. փիղ—փղի, յոգն. փղեր. բիբ—բրի, յոգն. բրեր. ծիտ—ծտի, յոգն. ծտեր. ծիծ—ծծի, յոգն. ծծեր. գիծ—գծի, յոգն. լիճ—լճի,

յոգն. լճեր. գին—գնի, յոգն. գներ. վիշտ—վշտի, յոգն. վշտեր ևն իսկ բազմավանկ բառերի յօգնակիում նոյն ձայնաւորը յա-ձախ, հակառակ շեշտի կանոններին, չէ սղւում, օր. ծաղիկ—ծաղ-կի, բայց յոգն. ծաղիկներ. գետին—գետնի, յոգն. գետիններ. կոկիծ—կոկծի, յոգն. կոկիծներ. լուսին—լուսնի, յոգն. լուսին-ներ. երկիր—երկրի. յոգն. երկիրներ. քրտինք—քրտնքի, յոգն. քրտինքներ. գրիչ—գրչի, յոգն. գրիչներ. աղախին—աղախնի, յոգն. աղախիններ. թռնիր—թռնրի, յոգն. թռնիրներ. ոճիր—ոճրի, յոգն. ոճիրներ. անկողին—անկողնի, յոգն. անկողիններ. բժիշկ—բժշկի, յոգն. բժիշկներ. հովիր—հովիր, յոգն. հովիրներ. (Սովին—սուխնի, յոգն. սուխ-ներ. հիմք—հիմքի, յոգն. հիմքներ):

Բացառութիւն կազմում են փի և չիչ ածանցներով վերջա-ցող գոյականները, որոնց մէջ եզակիում ևս ածանցական չի-չի չի զեղչում, օր. բարիք—բարիքի, բարիքներ. չարիք—չարիքի, չարիքներ. կարծիք—կարծիքի, կարծիքներ, հայրենիք—հայրենի-քի, հայրենիքներ. հայրիկ—հայրիկի, մայրիկ—մայրիկի, մասնիկ—մասնիկի և այլն:

գ) Նոյնը կարելի է տաել և է երկար ձայնաւորի մասին. սէր—սիրնյ. տէր—տիրնջ, դէղ—դիղի ևն: Պարտէզ—պարտիզի, յոգն. պարտէզներ. հանդէս—հանդիսի, յոգն. հանդէսներ. ասպա-րէզ—ասպարէզի, յոգն. ասպարէզներ, գոմէշ—գոմշի, յոգն. գո-մէշներ ևն: Ասկայն է ձայնաւորն ունեցող նոյնիսկ միավանկ բառերն աւելի յաճախ են խախտում շեշտի կանոնները: Սրանք եզակիում ևս է-ն յաճախ չեն սղւում, մանաւանդ երբ բառերը էր, ենք, ունք, ըէն ածանցներով են վերջանում, օր. արժէք—ար-ժէքի, անօրէնէք—անօրէնէքի, կողպէք—կողպէքի, օրէնք—օրէն-քի, անէծք—անէծքի, զէնք—զէնքի, մտածմունք—մտածմունքի, երկունք—երկունքի, հիացմունք—հիացմունքի, հայերէն—հայե-րէնի. սսերէն—սսերէնի ևն: Այլև դէմք—դէմքի, դէպք—դէպքի:

դ) Նոյնպէս ոյ երկբարբառն միշտ չէ սղւում, օր. լոյս—լոյսի և լուսի. ոյժ—ոյժի և ուժի, յոգն. ուժեր և ոյժեր. կոյս—կուսի և կոյսի, յոգն. կոյսներ. գոյն—գոյնի և գունի, յոգն. գոյ-ներ. թոյն—թոյնի և թունի, յոգն. թոյներ. յոյս—յոյսի: յոգն.

յոյսեր. համբռնյը—համբռուրի և համբոյրի, յոգն. համբոյրներ. պատրոյգ—պատրուգի և պատրոյգներ. ողջոյն ողջոյնի կամ ողջոյնի, յոգն. ողջոյններ ևն:

ե) Ես երկբարբառը նոյնպէս սղւում է եզակիում, իսկ յոգ-նակիում միշտ չէ սղւում, օր. վայրկեան—վայրկնի, բայց յոգն. վայրկեաններ. մատեան—մատենի, մատեաններ ևն. Ես երկ-բարբառը չի սղւում նաև ազգանունների վերջաւորութեան մէջ, օր. Մամիկոննեան—Մամիկոննեանի, Մամիկոննեա-նից. Ախուրեան, Ախուրեանի ևն: Նա չի սղւում նաև գրաբառ բայածականում, օր. անցեալ—անցեալի—անցեալներ. կորուսեալ—կորուսեալի—կորուսեալներ ևն:

զ) Շեշտի կանոնը նոյնպէս խախտում է, նրբ թիւրիմա-ցութիւն կարող էր պատահել օր. հին—հնի, բայց հուն—հունի, երկինք—երկնքի, բայց երկունք—երկունքի:

ինդիր: Որոշել ստորև առաջ բերած հատուածում այն գո-յականները, որոնք հոլովուած են ըստ առաջին հոլովման. ցոյց տալ այն փոփոխութիւնները, որոնք առաջացել են գոյականների մէջ շնորհիւ շեշտի և որոշիչ յօդի:

Բարիկը նստած մնաց սառը թմբի վրայ, թթենու տակ, որ ցնցում էր ստոերը և մազում նրա գլխին ձիւնի մանրիկ թեր-թիւները, երեխան երկար մնաց այդպէս նստած՝ ապա գլուխը ձեռքերի մէջ առաւ, սիրաը փղձկաց ահագին, անձար վշտից, որ նրա փոքրիկ կուրծքը պարտիկ չէր կարողանում, և զառը, զառը հեկեկաց: Արցունքը թափւում էր կոյր աչքերից, քամին լիզում էր նրա պղտոր կաթիւները և ձիւնը վերեկց մաղւում էր, մաղ-ւում էր նրա գլխին...

ԵՐԿԲՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 34: Բատ երկբորդ հոլովման հոլովուող գոյական-ներն եզակի ուղղականում ունին չի բնորոշ վերջա-ւորութիւնը, որը եզակի շեղ հոլովներում փիխուում է ողլի, օր. թշնամի—թշնամու, թշնամուն. պատանի—պատանու, պատանուն ևն:

Երկբորդ հոլովումն առաջնից տարբերում միմիայն

եղակիում: Յոգնակիում նա առաջին հոլովումից ոչնչով չէ տարբերում:

Հոլովներ	Հարցեր	Եղակի թիւ	Յոգնակի թիւ	Եղ. թիւ	Յոգ. թիւ
Ուղղակ. հոլ.	ով, ի՞նչ	թշնամի	թշնամի	այդի	այլն, այլում
Սեռակ. հոլ.	ում, ի՞նչի՞ն	թշնամուն	թշնամուն	այզու	այլն, այլում
Տրակ. հոլ.	ում, ի՞նչի՞ն	թշնամուն	թշնամինիրի	այդի	այլն, այլում
Հայց. հոլ.	ում, ի՞նչ	թշնամուն	թշնամինիրի	այդի	այլն, այլում
Գործ. հոլ.	ումով, ի՞նչով	թշնամով	առաջին, թշնամինիրի	այզով	այլն, այլում
Բացառ. հոլ.	ումից, ի՞նչից	թշնամուց	այդիցից, այդինիրի	այզուց	այլն, այլում
Ներդրյակ. հոլ.	ումում, ի՞նչում	թշնամում	թշնամում	այզում	այլն, այլում

§ 35: Այսպէս հոլովում են պատանի, աղաւնի, գիւղացի, բորենի, հոգի, աշակերտունի, այգի, թթենի, կենդանի, ոսկի, գերանդի, ջորի, գօտի, գինի, քամի, գուլորշի, ասորի, անգլիացի, Փրանսիացի են: Շուշի, Նուխի, Անի, Արշակունի, Բագրատունի, Արծրունի և այն:

§ 36: Միավանկ գոյականները՝ ծի, թի վերջաւորութիւնը շեղ հոլովներում պահում են. օր. այգի—այզու, բայց ձի—ձիու, թի—թիու (և ոչ թէ ձու կամ թու): Սոյն գոյականները յոգնակիում յաճախ ընդունում են ան ածանցը. ձիեր և ձիաներ. թիեր և թիաներ (Համեմ. § 30)

§ 37: Բայի անորոշ եղանակը (օր. կարդալ, գրել են), իբրև գոյական, հոլովում է ըստ այս հոլովման, օր. Ո. կարդալ, Ս. կարդալու, Տ. կարդալու, Հ. կարդալ, Գ. կարդալով, Բ. կարդալուց, Ե. կարդալում: Յոգնակի չունի:

§ 38: Կաշի գոյականը սեռականում ունի, բացի սովորականից, յաճախ նաև -ովի վերջաւորութիւնը. Ա. կաշու, Տ. կաշուին, Գ. կաշուով, Բ. կաշուից, Ն. կաշուում: Յոգնակին կանոնաւոր է. Ո. կաշիներ, Ս. կաշիների են:

§ 39: Որդի բառը յոգնակիում բացի սովորականից հոլովում է երբեմն այսպէս ևս. Ո. որդկերք, Ս. և Տ. որդկերանց, Գ. որդկերանցով, Բ. որդկերանցից, Ն. որդկերանցում:

§ 40: Ժամանակ ցոյց տուող գոյականները եղակի սեռականում ունին սովորաբար -ուայ վերջաւորութիւնը (§ 31), օր. տարի—տարուայ, կիրակի—կիրակուայ, երկուշաբթի—երկուշաբթուայ, շաբաթ—շաբաթուայ են: Յոգնակին կանոնաւոր է. Ո. տարիներ, Ս. տարիների են:

§ 41: Ամուսին բառն այս հոլովման տակ է գնում, թէպէտե նրա եղ. ուղղականն ոի-ով չի վերջանում: Ո. ամուսին, Ս. ամուսնու, Տ. ամուսնուն, Հ. ամուսնուն, Գ. ամուսնով, Բ. ամուսնուց, Ն. ամուսնում: Յոգնակին կանոնաւոր է. Ո. ամուսիններ, Ս. ամուսինների են:

§ 42. Եղ. սեռականում ու վերջաւորութիւն ունին նաև մի քանի ուրիշ անուններ, օր. մէկմէկու, իրարու, մարդու են, որոնք իբենց տեղում առաջ կը բերուին:

Խնդիր: Որոշել, թէ ստորև առաջ բերած հատուածում որ գոյականներն ըստ առաջին և որոնք ըստ երկրորդ հոլովման են հոլովում: Ցոյց տալ այն փոփոխութիւնները, որոնք առաջացել են գոյականների մէջ չնորդիտ շեշտի տեղափոխութեան:

Թաթուլը յանկարծ գլուխը վեր բարձրացրեց: Գասպարը նայեց նրան և մնաց սոսկումից քարացած: Մահուան գունատութիւնը ծածկել էլ նրա գէմքը, աշքերը լայնացած և բորբոք, բրերը անշարժ, ինչպէս ապակի, շրթունքները դողդոջուն, և մի ցաւոտ, չարագուշակ ժղիտ, որից Գասպարի հոգին դողդողաց...

Արդէն երեկոյ էր. եկեղեցու զանգի ձայնը հնչւեց մեղմ լալագին դողդոջունով, ինչպէս միշտ՝ նա հաւատացեալներին կանչում էր աղօթքի:

ԵՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 43: Բատ այս հոլովման հոլովւում են շութին վերջաւութիւն ունեցող ածանցականները, օր. գիտութիւն, բարութիւն, չարութիւն, գեղեցկութիւն, տպագրութիւն սրբութիւն, պղծութիւն և այլն:

Իհարկէ սրանք ևս միայն եզակիում ունին տարբեր հոլովում: Յոգնակիում հոլովւում են ըստ առաջին հոլովման:

Հոլովներ	Հարցեր	Եզակի թիւ	Յոգնակի թիւ
Ուղղ. հոլ.	ի՞սչ	գիտութիւն	
Սեռ. հոլ.	ի՞նչի	գիտութեան	
Տրակ. հոլ.	ի՞նչին	գիտութեան	
Հայց. հոլ.	ի՞նչ	գիտութիւն	
Գործ. հոլ.	ի՞նչով	գիտութեամբ	
Բաց. գոլ.	ի՞նչից	գիտութիւնից	
Ներգ. հոլ.	ի՞նչում	գիտութիւնում	

ԴԻՑՈՂ. Յատուկ անունները հոլովւում են եզակիում ևս առաջին հոլովման. Քրիստոսի յարութեան տօնը, բայց Յարութիւնի գիրքը:

ՉՈՐՐՈՐԴ ՀՈԼՈՎՈՒՄ

§ 44: Բատ այս հոլովման հոլովւող գոյականներն եզակի սեռականում ունին ան վերջաւորութիւնը. դառ-

դառան, մուկ—մկան, նուռ—նուան և այլն: Այս բառերը գրաբառում վերջանում են նով, որն աշխարհաբառում նախ ը է դարձել, ապա բոլորովին ընկել է (§ 8, դիտող. 6): Աղուած ն-ն յոդնակիում լոյս է ընկնում. գառներ, մկներ, նոներ, ծնկներ են (շեշտի կանոնները պահպանուած են, § 8 ա):

Իհարկէ այս հոլովումն ևս միայն եզակիում է տարբերում առաջին հոլովումից:

Հոլով.	Հարցեր	Եղ. թիւ	Յ. թիւ	Եղ. թիւ	Յ. թիւ	Եղ. թիւ	Յ. թիւ
Ուղղ.	նով, ի՞նչ	թոռ	լիշտյու	մուկ		ծունկ	
Սեռ.	նում, ի՞նչի՞ն	թոռան	լիշտյուն	մկան		ծնկան	
Տրակ.	նում, ի՞նչի՞ն	թոռան	(մկան)	մկան		ծնկան	
Հայց.	նում, ի՞նչ	թոռան	լուսակիւն	ծունկ		ծունկ	
Գործ.	ումնով, ի՞նչով	թոռանով	մկնով			ծնկնով	
Բաց.	ումնով, ի՞նչից	թոռանից	մկնից			ծնկնից	
Ներգ.	ումնում, ի՞նչում	թոռանում	մկնում			ծնկնում	

§ 45: Այսպէս հոլովում են ձուկ, գուռ, եղ, քեռ, թոռ, լեռ, կուռ, ճուռ: Էրիկ (=մյշ), Ա. Տ. Հ. էրկան, Գ. էրկանով, Բ. էրկանից: Հիմ, Ա. հիման:

ԴԻՑՈՂ. Այս հոլովման տակ գնացող գոյականները եզակիում ևս կարող են ըստ առաջին հոլովման հոլովուել:

§ 46: Բատ չորրորդ հոլովման են հոլովում նաև մանուկ, գարուն և աշուն երկանկ գոյականները. Ա. և Տ. մանկան, գարնան, աշնան. Հ. մանկան, գարուն, աշուն. Գ. մանկանով: —, —, Բ. մանկանից, գարնանից, աշ-

Նանից: Յոգն. կանոնաւոր է. մանուկների ելն: Մանուկ բառն իբրև յատուկ անուն եզակիում և հոլովւում է ըստ ա. հոլովմ. Ս. Մանուկի, Տ. Հ. Մանուկին ելն:

ԱՐՏՈՒՂԻ ՀՈԼՈՎՈՒՄ¹⁾

§ 47: Կան մի քանի գոյականներ, որոնք չեն ենթարկում յիշուած չորս հոլովումներից ոչ մէկի կանոններին և առանձին, արտուղի հոլովում ունին: Այդ գոյականներն են. հայր, մայր, եղբայր, քոյր, անոն, ծնունդը, Աստուած, շոն, տոն, մարդ, տիկին, տանտիկին, կնիկ, աղջիկ, մահ, սէր, ընկեր, աներ, լինոյ, երեխոյ, իրիկոն, կայսր, դուստր:

Հարկ է նկատել, որ այս գոյականների մեծագոյն մասն ևս արտուղի հոլովում ունի միայն եզակիում: Իսկ յոգնակիում սրանց մեծագոյն մասը հոլովում է կանոնաւոր կերպով ըստ առաջին հոլովման:

§ 48: Հայր, մայր, եղբայր գոյականները միատեսակ հոլովում ունին: Ո. հայր, մայր, եղբայր. Ս., Տ. և Հ. հօր, մօր, եղօր. Գ. հօրով, մօրով, եղօրով. Բ. հօրից, մօրից, եղօրից: Յոգնակին կանոնաւոր է. Ո. հայրեր, մայրեր, եղբայրներ. Ս. հայրերի, մայրերի, եղբայրների և այլն:

Բարդ բառերը. նախահայր, վանահայր, սանահայր, Տիրամայր, նախամայր, վանամայր, ծծմայր, հօրեղբայր, մօրեղբայր ելն հոլովում են նոյն եղանակով. Ս., Տ. և Հ. նախահօր, նախամօր և այլն:

Դիմո՞ջիշեալ բառերի նուազականները հոլովում են կանոնաւոր կերպով ըստ առաջին հոլովման. Ո. հայրիկ, մայրիկ եղբայրիկ. Ս. հայրիկի, մայրիկի, եղբայրիկի ելն:

§ 49: Քոյր, Ս. Տ. Հ. քրոջ, Գ. քրոջով, Բ. քրոջից:

Յոգնակին կանոնաւոր է: Ո. քոյրեր, Ս. քոյրերի ելն: Բարդ բառերը. հօրաքոյր, մօրաքոյր հոլովում են նոյն եղանակով:

Դիմո՞ջ. նուազականները քոյրիկ կամ քոյրիկ եղակիում ևս հոլովում են կանոնաւոր կերպով ըստ առաջին հոլովման. քուրիկի, քուրիկին ելն:

§ 50: Անոն, Ս. Տ. անուան, Հ. անուն, Գ. անունով (անուամբ), Բ. անունից: Յոգնակին կանոնաւոր է. Ո. անուններ, Ս. անունների ելն:

§ 51: ծնունդ, Ս. Տ. ծննդեան, Հ. ծնունդ, Գ. ծննդով, Բ. ծննդից: Յոդնակին կանոնաւոր է. Ո. ծնունդներ, Ս. ծնունդների ելն:

§ 52: Տէր, Ս. Տ. տիրոջ, Գ. տիրոջով, Բ. տիրոջից: Յոգնակին կանոնաւոր է: Ո. տէրեր, Ս. տէրերի ելն:

Նոյն եղանակով հոլովում են նաև բարդ բառերը: Իսկ տէրտէր բառը թէ եզակիում և թէ յոգնակիում հոլովում է կանոնաւոր կերպով ըստ առաջին հոլովման. Ս. տէրտէրի, Տ. և Հ. տէրտէրին ելն:

§ 53: Ո. Աստուած, Ս. Աստ(ու)ծու, Տ. և Հ. Աստ(ու)ծուն, Գ. Աստ(ու)ծով, Բ. Աստ(ու)ծուց (Աստուածանից): Յոգնակին (երբ խօսքը կոքերի մասին է) կանոնաւոր է. Ո. աստուածներ, Ս. աստուածների ելն:

§ 54: Շոն, տոն. Ս. շան, տան, Հ. շան, տուն, Գ. շ(ա)նով, տ(ա)նով, Բ. շ(ա)նից, տ(ա)նից: Յոգնակին կանոնաւոր է: Ո. շներ, տներ, Ս. շների, տների, Տ. շներին, տներին ելն:

Այսպէս հոլովում են և բարդ բառերը. գայլաշուն, դաստուն, դեղատուն ելն: Ս. Տ. դաստան, դեղատան, դայլաշան ելն:

Դիմո՞ջ. 1: Շնիկ և տնակ նուազականները հոլովում են կանոնաւոր կերպով ըստ առաջին հոլովման. Ս. շնիկի, տնակի, Տ. շնիկին, տնակին ելն:

1) Разносклонение.

ԴԻՑՈՂ. 2. ՄԵԾԱՏՈՒՆ ԵՂԱԿԻՈՒՄ ՀՈԼՈՎԼՈՒՄ Է ԻՆՉԱՓԷՍ ՄՈՒՆ
ԲԱռը. յոդն. սովորաբար՝ մեծատուններ, Ս. մեծատունների ևն:

§ 55: ՄԱՐԴ. Ս. մարդու, Տ. չ. մարդուն, Գ. մարդով, Բ. մարդուց, Ն. մարդում: Յոդն. Ո. մարդիկ, Ս. չ. մարդկանց, Գ. մարդկանցով, Բ. մարդկանցից, Ն. մարդկանցում:

Բարդ բառերն, օր. տղամարդ, մանկամարդ, հոլովլում
են նոյն եղանակով. Ս. տղամարդու, մանկամարդու, Տ,
չ. տղամարդուն, մանկամարդուն ևն:

ԴԻՑՈՂ. Վերոյիշեալ բառերն եղակիում երբեմ հոլովլում
են կանոնաւոր կերպով. Ս. մարդի, Տ. չ. մարդին ևն:

§ 56: Կին. Ս. Տ. կնոջ, Գ. կնոջով, Բ. կնոջից,
Ն. կնոջում: Յոդն. Ո. կանայք, Ս. Տ. կանանց, Գ.
կանանցով, Բ. կանանցից, Ն. կանանցում:

Այսպէս հոլովլում են և առնակին, տէրտէրակին բարդ
բառերը: Իսկ տիկին և տանտիկին բառերն եղակիում հո-
լովլում են նոյն եղանակով, իսկ յոգնակիում երկրորդ
վանկի ա ձախնաւորը սղում են: Յոդն. Ո. տիկնայք,
տանտիկնայք, Ս. Տ. տիկնանց, տանտիկնանց, Գ. տիկ-
նանցով, տանտիկնանցով, Բ. տիկնանցից, տանտիկնան-
ցից: Այլև պէտք է նկատել, որ տիկին և տանտիկին բա-
ռերն յոգնակիում հոլովլում են նաև կանոնաւոր կերպով
ըստ առաջին հոլովման. Ո. տիկիններ, տանտիկիններ, Ս.
տիկինների, տանտիկինների, Տ. չ. տիկիններին, տանտի-
կիններին ևն:

§ 57: Կնի՛կ, աղջի՛կ. Ս. կնկայ, աղջկայ, Տ. չ. կնկան,
աղջկան, Գ. կնկանով, աղջկանով, Բ. կնկանից, աղջկա-
նից, Ն. կնկանում, աղջկանում: Յոգնակին կանոնաւոր է.
Ո. կնիկներ, աղջիկներ, Ս. կնիկների, աղջիկների ևն:
Վերջին բառն երկրորդ և երրորդ յոգնակի ձև ևս ունի.
Ո. աղջկերք և աղջկունք, Ս. Տ. չ. աղջկերանց և աղջ-
կանց ևն:

§ 58: ՄԱՐԴ. Ս. մահուայ կամ մահուան, Տ. մահուան,
չ. մահ, Գ. մահով կամ մահուանով. Բ. մահից կամ մա-
հուանից, Յոգնակին կանոնաւոր է. մահեր, մահերի ևն:

§ 59: Ո. Աէր, Ս. սիրու կամ սիրոյ, Տ. սիրուն կամ
սիրոյն, չ. սէր, Գ. սիրով, Բ. սիրուց: Յոգնակի չունի:
ԴԻՑՈՂ. Այսպէս և ասում են Մուշ, Ս. Մշոյ և Մշու:

§ 60: Ընկեր, աներ, Ս. Տ. ընկերոնց, աներոնց.
Գ. ընկերով, աներով, Բ. ընկերից կամ ընկերոջից, անե-
րից կամ աներոջից: Յոգնակին կանոնաւոր է. Ո. ընկեր-
ներ, աներներ, Ս. ընկերների, աներների ևն: Սակայն
պէտք է նկատել, որ առաջին գոյականն եղակիում ըստ
առաջին հոլովման ևս հոլովլում է. Ս. ընկերի, Տ. չ.
ընկերին ևն: Նոյնպէս տալ (=էրկան քոյթը) Ս. տալի
և տալոջ. Տ. չ. տալին և տալոջ ևն:

§ 61: Հինդ գոյականն, ընդհակառակը, եղակիում կա-
նոնաւոր, իսկ յոգնակիում արտուղի հոլովլում ունի. Եղ.
Ս. լնդի. Տ. լնդին ևն. յոդն. Ո. լնդերք, Ս. լնդերքի,
Տ. լնդերքին ևն:

§ 62: Երեկոյ, իրիկուն: Ս. երեկոյի կամ երեկոյեան,
իրիկուայ կամ իրիկուան, Տ. երեկոյին կամ երեկոյեան,
իրիկուան, չ. երեկոյ, իրիկուն, Գ. երեկոյով, իրիկուով,
Բ. երեկոյից, իրիկուանից: Յոգնակին կանոնաւոր. Ո. ե-
րեկուներ (յ կիսածայնը գեղչւում է, տ. § 28) իրիկուն-
եր, Ս. երեկուների, իրիկուների ևն:

ԴԻՑՈՂ. Երեկոյեան և իրիկուան ձեերը ածականի նշանա-
կութիւն են ստացել. Երեկոյեան ժամ, աղօթք:

§ 63: Կայսր, զուատը Ս. Տ. չ. կայսեր, զստեր, Գ.
կայսրով, զստրով, Բ. կայսրից, զստրից: Յոդն. Ո.
կայսրներ, զուստրներ Ս. կայսրների, զուստրների ևն:

Սակայն պէտք է նկատել, որ նոյն բառերն եղակիում
նաև հոլովլում են կանոնաւոր կերպով, ըստ առաջին
հոլովման. Ս. կայսրի, զստրի, Տ. չ. կայրին, զստրին ևն:

§ 64: Արին, անկին, սիւն. Ս. արեան, անկեան, սեան, Հ. արիւն, անկիւն, սիւն, Գ. արիւնով, անկիւնով, սիւնով, Բ. արիւնից, անկիւնից, սիւնից: Յոգնակին կանոնաւոր է. արիւններ, անկիւններ են: Սակայն այս գոյականների նոյն իսկ եզ. Ս. և Տ. հոլովները կանոնաւոր են. արիւնի, անկիւնի են:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԽՆԴԻՐ

1. Գաւառաբարբառում յոգնակի սեռականն երբեմն վերջանում է -ու-ով, փոխանակ ի-ի. իսկ եզ. և յոգն. բացառականը -է-ով, փոխանակ չից-ի: Օր. աշակերտներու, թշնամիներու, հայերու, թոռներու են: Աշակերտէ, աշակերտներէ. թշնամիէ, թշնամիներէ, հայէ, հայերէ, թոռներէ են:

2. Արդէն յիշեցինք (§ 8, դիտող. 6), որ աշխարհիկ լեզուն ձգտում է պարզութեան և միակերպութեան: Սակայն տակաւին աշխարհաբառում գործ են ածւում գրաբառ ձեւեր, օր. աշակերտք—աշակերտաց, երեխայք—երեխայոց, տղայք—տղայոց և այլն:

Այսպէս և Վարդանանք, հէրանք, պապոնք, քեռոնք հաւաքանները (§ 22, դիտող.) հոլովում են գրաբառաբար. Ս. Տ. Վարդանանց, քեռոնց, պապոնց են:

Այսպէս և ասում են Վարդանի և Վարդանայ, Տրդատի և Տրդատայ, Աստուածածնի և Աստուածածնայ տօն, Հոգեգալստեան տօն, Ծննդեան տօն, ժողովրդի և ժողովրդեան համար, Սևանայ լիճ, Վանայ ծով: Իսկ հայք, յոյնք, սուսք, լեհք և նման բառերի յոդն. սեռականը ածականի նշանակութիւն է ստացել, օր. հայոց լեզու, սուսաց գրականութիւն են:

3. Գրաբառի ազդեցութեանն են վերագրելի և տնէ տուն, դռնէ դռւն, փողոցէ փողոց, երկրէ երկիր, օրէցօր, տարէցտարի են ձեւերը: («Ման եմ գալիս աշխարհէ աշխարհ, գեղէ գեղ, սարէ սար, տնէ տուն»):

ԽՆԴԻՐ: Որոշել, թէ ստորև առաջ բերած հատուածում պատահող գոյականներն ըստ մը հոլովման են հոլովում: Արդեօք պահպանուած են շեշտի, եղակի և յոգնակի թւերի կանոնները: Կան

այս հատուածի մէջ ըստ արտուղի հոլովման գնացող գոյականները: Որո՞նք են դրանք:

Ահազին, անակնկալ հարուածից թաթուլը շշմեց. կնոջը չէին թաղում, այլ իրեն՝ թաթուլին: Դադաղի յետկից քայլում էր անգիտակից ու անմիտ. մթագնած աչքերի հայեացը ոտների տակ՝ քայլում էր, ու չգիտէր, թէ ուր, ինչնւ... Միայն գերեզմանի փոսի առաջ, երբ մի բուռ հողը տուին նրան կնոջը սառը դիակի վերայ ցանելու, յանկարծ՝ ասես կարմրած շամփուրներ մխեցին ուղեղի մէջ, նա անօրինակ, ոչ մարդկային ձայնով ձչաց, հողն իր զիկին ցանեց. ծնկները ծալւեցին և փոռւեց խոնաւ հողակոյափ վրայ:

Նրան առւն բերին անդգայ. երկար հիւանդ պառկեց:

Երբ վերկացաւ անկողնից, օրերով նստում էր ծառի տակ լուս ու անշարժ, փայտով խաղում էր ոտների առաջ, և գիշերները գնում էր թաւալում, տրորում Մարանի գերեզմանի վերայ և մինչև լոյս՝ նրա մեղմ հեծկլտանքը հնչւում էր գիշերային լուս խաղաղութեան մէջ:

ԱՌԱԿԱՆ ԱՆՈՒՆ¹⁾

§ 65: Բարի մարդը բարի գործեր է անում: Թիֆլիս քաղաքը մեծ տներ և լայն փողոցներ ունի: Հայրը որդուն ընծայեց մի թանկագին մատանի: Երէկուայ զբօսանքը բոլորիս յոգնեցրեց: Նա ուկէ ժամացոյց ունի:

Ինչպիսի՝ մարդ, ինչպիսի գործեր: Ինչպիսի՝ տներ, փողոցներ, մատանի, ժամացոյց: Ո՞ր զբօսանքը: Պատասխանել այս բոլոր հարցերին:

Վերոյիշեալ նախագասութիւններում ստորագծած բառերը կոչւում են ածական անուններ: Ուրեմն ածականը բանամաս է, որը միանալով գոյականի հետ, ցոյց է տալիս նրա յատկութիւնը կամ որակը և ճանաչւում է ինչպիսի, որպիսի, ո՞ր հարցերով:

1) Прилагательное имя.

ԽՆԴԻԲ: Որոշել ստորև առաջ բերած հատուածներում պատահող գոյական և ածական անունները:

Խնչու արցունք ցայտում են
Քու սէդ, հովարտ աչքերից,
Խնչու արագ փախչում են
Այդ հարազատ ափերից:
Մշտագալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջրին
Ճկուն ոստն ու տերեւ
Թռն բաց անեն տապ օրին:

Հասան լեռնային վտակին, որ իջնում էր նեղ, անտառապատ ձորակով: Աշնանային անձրեներից յորդացած, փոքրիկ վտակը դարձել էր մի գետակ: Նա որոտում էր, մոմուում էր, գարկուելով նեղ ափերին և ծառերի մերկ արմատներին:

§ 66: Արշակն աշխատասէր է. Պետրոսն աւելի աշխատասէր է. իսկ Տիգրանը շատ աշխատասէր է: Կարապետը քաջ է. Սարգիսն աւելի քաջ է. իսկ Արամը շատ քաջ է:

Արդեօք Արշակը, Պետրոսն և Տիգրանը հաւասարապէս աշխատասէր են. Կարապետը, Սարգիսն ու Արամը հաւասարապէս քաջ են:

§ 67: Խնչպէս վերև առաջ բերած օրինակներից տեսնում ենք, ածականները ցոյց են տալիս ոչ միայն առարկաների յատկութիւնը կամ որակը, այլև յատկութեան կամ որակի զանազան աստիճանները: Վերջին դէպրում նրանք ընդունում են աւելի, շատ, իսկստ, սաստիկ, չափազանց, յոյժ բառերը (մակրայերը): Աշխատասէր մարդ, աւելի աշխատասէր մարդ, շատ աշխատասէր մարդ. խելօք մարդ, աւելի խելօք մարդ, շատ (սաստիկ, չափազանց) խելօք մարդ. լաւ այդի, աւելի լաւ այդի, շատ (խիստ, սաստիկ, չափազանց) լաւ այդի են:

Ածականն իր սկզբնական ձեռվ ցոյց է տալիս գոյականի որակի սովորական կամ որական աստիճանը¹⁾ (բարի

մարդ, մեծ տուն, լայն փողոց ելն). աւելի մակրայի հետ ցոյց է տալիս գոյականի որակի համեմատական կամ բաղդատական աստիճանը¹⁾ (աւելի բարի մարդ, աւելի մեծ տուն ելն). իսկ շատ, սաստիկ, չափազանց ելն մակրայերի հետ նոյն յատկութեան կամ որակի գերագոյն կամ գերազական աստիճանը²⁾ (շատ բարի մարդ, շատ մեծ տուն ելն):

§ 68: Ածականի համեմատութեան աստիճաններն³⁾ արտայայտում են հետեւեալ եղանակով:

1. Ածականի բաղդատական աստիճանը կարող է արտայայտուել.

ա) Բացառական հոլովով, օր. շունը կատուից մեծ է, նա քեզանից ուժեղ է: (Բայց ասում են նաև «շունը կատուից աւելի մեծ է», «նա քեզանից աւելի ուժեղ է»):

բ) Քան, քանթէ բառերի (շաղկապների) միջոցաւ, օր. շունը մեծ է, քան (քան թէ) կատուն. նա ուժեղ է, քան (քան թէ) դու: (Ասում են նաև. շունն աւելի մեծ է, քան կատուն. նա աւելի ուժեղ է, քան թէ դու):

2. Մի քանի ածականների բաղդատական և գերադրական աստիճանները կարող են արտայայտուել զոյն ածանցի միջոցաւ, օր. մեծ—մեծագոյն, լաւ—լաւագոյն, բարձր—բարձրագոյն, վեհ—վեհագոյն, նոր—նորագոյն, տկար—տկարագոյն են:

ԴԻՑՈՂ. 1: Մեծագոյն նշանակում է և «աւելի մեծ», և «սաստիկ մեծ». լաւագոյն նշանակում է և «աւելի լաւ», և «շատ լաւ» և այլն:

ԴԻՑՈՂ. 2: Գոյներ արտայայտող ածականներում այս ածանցը յաճախ համեմատութեան աստիճաններ չի արտայայտում, օր. վարդագոյն թշեր=վարդի գունով թշեր:

1) Сравнительная степень. 2) Превосходная степень. 3) Степени сравнения.

1) Положительная степень.

3. Ածականի գերադրական աստիճանը կարող է արտայայտուել.

ա) ամենաշառադրով, օր. ամենամեծ, ամենալաւ, ամենաբարի, ամենաշխատասէլ են:

բ) ածականի կրկնութեամբ, օր. մեծամեծ, չարաչար: Դիմուլ. Սակայն պէտք է նկատել, որ ածականի կրկնութիւնն երբեմն լոկ յոդնական կամ հաւաքական իմաստ ունի, օր. նոր-նոր կամ նորանոր փաստեր, մեծ-մեծ խնձորներ, մանր-մանր ձկներ են:

§ 69: Վերև տեսանք, որ բազմաթիւ ածականներ համեմատութեան աստիճաններ ունին: Այդպիսի ածականները կոչում են աստիճանական կամ բուն ածականներ: Սակայն կան և անաստիճան ածականներ, այսինքն այնպիսիներ, որոնք համեմատութեան աստիճաններ չունին, օր. արծաթէ (արծաթեայ) ժամացոյց, ոսկէ (ոսկեայ) մանեակ, քարէ (քարեայ) տուն, երէկուայ զբոսանք, այսօրուայ հանդէս, հայրական տուն են: Զի կարելի տաել «աւելի», «սաստիկ» արծաթէ ժամացոյց, «աւելի», «սաստիկ» երէկուայ զբոսանք, «խիստ» հայրական տուն են:

§ 70: Աստիճանական ածականները զանազանում անաստիճաններից նաև նըստով, որ նուազական ձեեր ևս ունին, օր. փոքր—փոքրիկ, խեղճ—խղճուկ, հաստ—հաստիկ, հաստեկ, նեղ—նեղիկ, փափուկ—փափիկ, փափկասուն, փոքր—փոքրիկ—փոքրաւուն, չաղ—չաղիկ, պատիկ—պատիկ, կոկ—կոկիկ, կոկիկ են:

Դեղին—դեղնաւուն, կարմիր—կարմրաւուն, երկար—երկարաւուն են:

§ 71: Բազմաթիւ գոյականներ, գործ ածուելով ուրիշ գոյականների հետ, ածականի իմաստ են ստանում, օր. Սև ծով և ծով (ինչպիսի՞ն) ցաւեր: Պինդ քար և քար (ինչպիսի՞ն) սիրտ: Պլազան հուր և հուր (ինչպիսի՞ն) տենչեր: Անձրև եկաւ և անձրև (ինչպիսի՞ն) օրը հաւերին ջուր տուող շատ կը լինի: Առաջին նախադասութիւններում ծով,

քար, հուր, անձրև, հայր գոյականներ են, իսկ երկրորդներում—ածականներ:

§ 72: Ինչպէս յիշուեցաւ (§ 64, ընդհ. գիտ. 2), հայք, ոռուք, յոյնք, լեհք, թուրքք ելն գրաբառային յոգնակիներից կաղմաւում են հայոց, ոռուաց, յունաց, լեհաց, թուրքաց ելն ածականները:

§ 73: Ածականը գոյականից միշտ նախադաս է և չի հոլովւում, օր. լաւ մարդ, լաւ մարդու, լաւ մարդիկ, լաւ մարդկանց. մեծ տուն, մեծ տներ, մեծ տներից են:

Բայց երբ ածականը գործ է ածուում միայնակ, գոյականի իմաստով, այն ժամանակ նա իբրև գոյական հոլովւում է ըստ առաջին հոլովման, օր. խաւար (ինչպիսի՞ն) սենեկի մէջ գտնուել և խաւարի (ինչի՞ն) մէջ գտնուել. բարին (=բարի բանը) սիրել և չարից (=չար բանից) զգուշանալ են:

Դիմուլ. Երբեմ մակրիր ածականը գոյականից յետաղաս է և այս գէպքում նա հոլովւում է, իհարկէ ըստ առաջին հոլովման. օր. Տիգրան Մեծ, Ս. Տիգրան Մեծի, Տ. Հ. Տիգրան Մեծին են: Այսպէս ասում են նաև Յովլ երանելի, Ղեռնդ երէց. Ս. Յովլ երանելու, Ղեռնդ երէցի են:

ԽՆԴԻԲ: Որոշել ստորև առաջ բերած հատուածում. ա) բոլոր աստիճանական և անաստիճան ածականները. բ) իբրև գոյական գործ ածուած ածականները. գ) կաղմել աստիճանական ածականների գրական, բաղդադական և գերադրական աստիճանները:

Զմոռանալ, որ ածականները ճանաչում են ո՞ր, որպիսի՞ն, ինչպիսի՞ն հարցերով:

Ննջարանի թանձր վարագոյների բացուածքից թափանցող աշնանային արևի շողերը շառագունել էին սենեկի կիսախաւարն ու պատերը և զունաւոր կիսաստուերով գողգողում էին կահ-կարսաբիների վրայ:

Երիտասարդ կինը՝ խորունկ մտածմունքի մէջ, անշարժ պառկած էր շրեղ, փափուկ անկողնում իր մտախոն ու վշտոտ հայեացքը ծաղկանկար առաստաղին յառած: Նրա սկ ու փար-

թամ մազերը ալիքաւոր ու քմահաճ ծալքերով փոռուի էին բարձերի սպիտակութեան վրայ՝ ինչպէս մութ ու կալարուն ամպը լեռան ձիւնապատ կատարին:

Մետաքսէ վարդագոյն շապիկը, բաց թողնելով նրա երկար մարմարէ պարանոցն ու ձիւնաթոյր լանջը, ակնապարար վայելչութեամբ ծածկում էր կուրծքը:

ԹԻԱԿԱՆ ԱՆՈՒՆ¹⁾

§ 74: Զեռքն ունի հինգ մատներ: Այս աշակերտը հինգերորդ դասարանումն է: Նրա հայրը յիսուն տարեկան է:

Գրեցէք հինգ, հինգերորդ և յիսուն բառերը թւերով:
Հինգ, հինգերորդ, յիսուն թւերի կամ թւական անուններ են:

Ուրեմն թւական անունը բանամաս է, որ թւի տեղ է գործ ածւում: Թւական անունները ցոյց են տալիս առարկաների թիւը՝ կամ քանակութիւնը և կարգը կամ դասը: Առաջին դէպքում թւականը կոչւում է քանակական²⁾ և ճանաչւում է քանի, որքա՞ն հարցերով, օր. մէկ մարդ, երկու, երեք մարդ, իսկ երկորդ դէպքում թւականը կոչւում է դասական³⁾ և ճանաչւում է ո՞ր, ո՞րերորդ հարցերով, օր. առաջին մարդը, երկորդը, երրորդ մարդը:
Խնդիր: Հարցեր տալով որոշել թէ ստորև առաջ բերած թւականներից որո՞նք քանակական են:

Մէկ, եօթ, քսաներորդ, քսանուհինգ, երրորդ, իններորդ, չորս, չորրորդ, երեսուն, հինգերորդ, վաթսուն, յիսուն:

Կազմեցէք հետեւեալ քանակական թւականներից դասականներ. մէկ (մի, մին), երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթ, տասնուերկու, տասնուչորս, հարիւր, հազար:

§ 75: Միաւորները տամնեակների, իսկ տասնեակները հարիւրեակների հետ միանում են ոչ միայն ու, այլև եւ շաղկապով, օր. տասնումէկ և տասնեւմէկ, հարիւրութսան և հարիւրեւթսան: Բայց եթէ միաւորը սկսում է ձայնաւո-

րով, այն ժամանակ միացուցիչ շաղկապն երեմն բաց է թողնւում. տասներկն, տասներեք, տասնեօթ, տասնութ, տասնինն:

§ 76: Քանակական թւականներից են հաւաքականները. հնգեակ, եօթնեակ, տասնեակ, իշարիւրեակ ևն, և մասնականները. կէս, քառորդ, մի երրորդական ևն:

§ 77: Երկու, երեք, չորս և միւս թւականներից յետոյ գոյականը կարող է գործ ածւել և եղակի, և յողնակի թւով, օր. երկու տետրակ և երկու տետրակներ. տաս ծառ և տաս ծառեր. քսան խնձոր և քսան խնձորներ և այլն:

§ 78: Թէ քանակական և թէ դասական թւականները, գործ ածւելով իբրև ածականներ, գոյականներից առաջ են գրւում և չեն հոլովւում, օր. ձեռքի հինգ մատներն անհաւասար են: Զեռքի հինգ մատներից ամենափոքը մկոյթն է: Զեռքը հինգ մատներով էլ աշխատում է: Այդ հինգերորդի դասարանն է: Սրանք հինգերորդ դասարանի աշակերտներ են: Մենք պատահեցանք մի խումբ մարդկանց:

Դիմուն. Դասական թւականը, իբրև մակդիր, գոյականից յետապաս է և հոլովւում է ըստ առաջին հոլովման, օր. Գէորգ Չորրորդ. Ս. Գէորգ Չորրորդի. Տ. Հ. Գէորգ Չորրորդին ևն:

Բայց երբ թւականները գործ են ածւում գոյականաբար, գոյականների իմաստով, հոլովւում են ըստ առաջին հոլովման, օր. նրանք հինգ եղբայր են. հնգին էլ ճանաչում եմ: Երկու պարտապան ունիմ, առաջնից փողս ստացել եմ, երկորորդից դեռ չեմ ստացել:

Դիմուն. Թւականը գործ ածւելով գոյականի իմաստով, կարող է յողնակի թիւ ևս ունենալ, օր. այդ աշակերտը շարունակ հնգեր է ստանում, հնգերով է փոխում:

§ 79: Բոլոր թւականներն էլ հոլովւում են ըստ ա-

1) Числительное имя. 2) Количественное. 3) Порядковое.

ուաջին հոլովման, ենթարկուելով շեշտի կանոններին (§ 8),
օր. Ռ. երեք, չորս, հինգ. Ս. երեքի, չորսի, հնգի. Տ.
երեքին, չորսին, հնգին ևն:

ԴԻԾՈՂ. 1. Մէկ քանակականը հոլովուելիս է երկար ձայ-
նաւորը չէ սղում, Ս. մէկի. Տ. մէկին ևն:

ԴԻԾՈՂ. 2. Երկու քանակականը թէ հոլովուելիս և թէ
դիմորոշ յօդերից առաջ երկու ձայնաւորների մէջ բարեհնչութեան
համար ընդունում է և տառը. Ս. երկսի կամ երկուսի (փոխա-
նակ երկը-ի, երկու-ի), Տ. երկսին կամ երկուսին ևն:

Օրինակներ. Երկսի միջից սև կատու է անցել. Մենք երկ-
սով ուսումնարան գնացինք, երկսով էլ վերադարձանք: Նրանք
երկուսն էլ այստեղ են: Դուք երկուսի էլ մեղաւոր էք: Մենք
երկուսս էլ քաղցած ենք:

ԽՆԴԻԲ: Ստորև առաջ բերած հատուածում ո՞ր թւականները
գործ են ածուած իբրև ածականներ և որո՞նք իբրև գոյականներ:
Ի՞նչից է այդ երկում: Արդեօք շեշտի կանոնները պահպանուած են:

Լութիւն տիրեց. Երկսով էլ տիրեցին... Անտառի խորքից
գուրս եկաւ մի կին, երկու փոքրիկ աղջիկների հետ. Երեքով էլ
նիհար, գունատ և ցնցոտիների մէջ: Իւրաքանչիւրը փէշի մէջ մի
ինչ որ բան ունէր փաթաթած, երեկի արմտիք, և ուսին ծառի
մի-մի չոր ճիւղ... Անցան. հաղիւ մի քանի քայլ հեռացած, նրանց
առաջը փակեց անտառի ծեր պահպաննր: Երեք խեղձերը կանգ
առան և լութեամբ նայում էին խստապէմ ծերունուն:

— Դարձեալ դժուք... ասաց պահապանը զայրոյթով և մօտե-
ցաւ փոքրիկ աղջիկներից մէկին ու թափով քաշեց նրա ձնով
ճիւղը: Երեխան բարձրածայն հեկեկաց: Սուրէնը նրանց մէջ
նիտեց:

— Լսեցէք, բարեկամ, ես ձեզ շատ եմ ինդրում չվշտացնել
այս խեղձերին. Թնդ տանեն, մեծ բան չէ այդ երեք ճիւղը:

— Զգիտէք, թէ սրանք որքան են նեղացնում ինձ, մէկ չէ,
երկու չէ, հարիւրներ են, և ամեն օր...

— Ես մտածում եմ այն կնոջ և այն երկու աղջիկների մա-
սին, որ տեսանք քիչ առաջ:

ԴԵՐԱՆՈՒՆ¹⁾

§ 80. Վարդանը հիւանդ էք: Վարդանը պառկած էք
անկողնում: Բժիշկը Վարդանին այցելելով, Վարդանի հա-
մար գեղատում գրեց:

Լաւ հայերէն իմացողը կարժղ է միւնոյն բառը այսքան
կըկնեւ:

Վերև յիշած մտքերը կարելի է արտայայտել աւելի
կոկիկ և վայելուչ ձեռվ, առանց կրկնութիւնների.

Վարդանը հիւանդ էք. նա պառկած էք անկողնում.
Բժիշկը նրան այցելելով, նրա համար գեղատում գրեց:

Այստեղ նա, նրան և նրա բառերը գործ են ածուած
Վարդան անուան տեղ: Եթէ վերջինս յիշուած չինէր, ա-
ռաջին երեք բառերն էլ ոչ մի որոշ նշանակութիւն չէին ու-
նենայ և մենք չէինք հասկանայ, թէ խօսքն ուժ մասին
է: Բայց որովհետեւ Վարդան անուանը յիշուած է, նա, նրա
և նրան բառերն էլ նշանակութիւն են ստանում: Այս բա-
ռերը կոչւում են ղեղանուններ:

Ուրեմն գերանունը բանամաս է, որը սեպհական
նշանակութիւնից զուրկ լինելով, գործ է ածուում անուան
տեղ: Այդ անուանը կարող է լինել գոյական կամ ածա-
կան: Դերանունը գործ ածւելով գոյական կամ ածական
անուան տեղ, ստանում է գոյականի կամ ածականի նշա-
նակութիւն: Իբրև գոյականներ, նրանք իմացւում են ո՞վ
և ի՞նչ հարցերով, օր. նա պառկած է. նրանք պառկած
են: Իսկ իբրև ածականներ իմացւում են ո՞ր հարցով, օր.
այս հիւանդը, այս ծառը, այն ծառը, այն մարդը ևն:

§ 81. Դերանունները լինում են:

1. Անծնական, որոնք են. ես, դու, նա, դա, ուս:

2. Փոխաղարձ, որոնք են. իրար, միմեանց, մէկմէկու:

3. Ստացական, որոնք են. իմ, քո (քու), նրա, դրա,

սրա, իր, մեր, ձեր, նրանց, դրանց, սրանց, իրենց, ում։ Ստացական գերանունները պատկանելութիւն են ցոյց տալիս, այսինքն որ մի առարկայ միւսի ստացուածքն է կազմում, օր. նա իմ՝ եղբայրն է, այս քո փայտն է։

ԴԻՑՈՂ. 1. Ստացական գերանուններից յետոյ որոշիչ յօդը (§ 9) միշտ դրւում է, օր. իմ գիրքը, քո գիրքը, նրա գիրքը, մեր գիրքը են։

ԴԻՑՈՂ. 2. Իմ, քո ստացականների տեղ անխտիր գործ են ածւում ս, դ դիմորոշ յօդերը (§ 9). իմ գիրքը կորաւ=գիրքս կորաւ. քո գիրքը կորաւ=գիրքդ կորաւ. Վերջին նամակումդ (=քո վերջին նամակում) դրում ես, որ...

4. Ծուցական, որոնք են. այս, այդ, այն (էս, էդ, էն, տես § 8, դիտ. 2). Առյն, դոյն, նոյն։ Ծուցական գերանունները ցոյց են տալիս այն առարկան, որի մասին խօսքն է. այս ծառը մեծ է. այդ ծառը փոքր է. այն ծառը հաստ է. այն մարդիկ ուրախ են. այդ ծառերը մեծ են։

ԴԻՑՈՂ. 1. Սրանք գործ ածուելով գոյականներից առաջ, ածականաբար, իհարկէ չեն հոլովւում, օր. այս տղան, այդ տղան, այս տղայի, այդ տղայի են։ Սակայն իբրև գոյական գործածուելիս ևս ցուցական գերանուններն անհալովելի են և այս դէպքում նրանց տեղ գործ են ածւում սա, դա, նա անձնական գերանունների շեղ հոլովները, օր. այդ (=այդ բանը) նրան վիրաւորեց. դրանից (=այդ բանից) նա վիրաւորուեց։ Այս մասին (=սրա մասին) յետոյ կը խօսենք։

ԴԻՑՈՂ. 2. Այս, այդ, այն ցուցականներն հոլովուած են հետևեալ դրաբառ դարձուածներում. այսուամենայնիւ, այդուամենայնիւ, այնուամենայնիւ։

5. Հարցական, որոնք են. ո՞վ, ի՞նչ, ո՞ր, քանի՞, որքա՞ն, ինչպիսի՞, որպիսի՞ են։

ԴԻՑՈՂ. Եթ հարցական գերանունները գործ են ածւում առանց հարցերի, կոչուած են յարաբերական գերանուններ, օր. ես գիտեմ, թէ ո՞վ է լալիս։ Ես գիտեմ, թէ ի՞նչն է հոսում։ Ամեն ոք գիտէ, թէ նա ինչպիսի՞ հրէշ է են։

6. Որոշիչ, որոնք ածականաբար գործ ածուելով, առարկան որոշում են։ Սրանք են. ամեն (ամէն), ամենայն, ամենքը, բոլոր, ինքը (ինքն), իրաքանչիւր են։ Օր. ամէն մարդ իր արարքների համար պատավիանատու է։ Օրէնքի առաջ մենք բոլորս էլ հաւասար ենք։

7. Անորոշ, որոնք են. ոմն, ոքմին, մէկնուարէկը, ոչ ոք, ոչ մի, այս ինչ, այն ինչ ինչ որ, ոչինչ, ո՛րեւէ, մի քանի են։ Անորոշ գերանունները ցոյց են տալիս առարկանների անորոշութիւնն և կամ բոլորովին ժիտում են նրանց։

ԴԵՐԱՆՈՒԽՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 82. Անձնական դերանուններ. ես, դու, նա, դա, սա։

Հոլով.	Հարցեր	Առաջին դէմք		Երկրորդ դէմք		Երրորդ դէմք	
		Եղ. թիւ Յոդն. թ.					
Ո.	նվ	ես	մենք	դու	դուք	նա	նրանք
Ո.	նւմ	իմ	մեր	քո (քու)	ձեր	նրա	նրանց
Տ.	նւմ	ինձ	մեզ	քեզ	ձեզ	նրան	նրանց
Հ.	նւմ	ինձ	մեզ	քեզ	ձեզ	նրան	նրանց
Գ.	ումնով	ինձանով	մեղանով	քեղանով	ձեղանով	նրանով	նրանցով
Բ.	ումնից	ինձանից	մեղանից	քեղանից	ձեղանից	նրանից	նրանցից
Ն.	ումնում	ինձանում	մեղանում	քեղանում	ձեղանում	նրանցում	

ԴԻՑՈՂ. 1. Երրորդ դէմքն ունի ոչ թէ մէկ, այլ երեք անձնական գերանուններ. նա, դա, սա։ Վերջին երկուսը հոլովում են ճիշտ այնպէս, ինչպէս նա-ն. Ո. դրա, սրա. Տ. զրան, սրան են։ Յոդն. Ո. դրանք, սրանք. Ս. Տ. զրանց, սրանց և այն։ Նա գերանունը գործ է ածւում հեռաւոր, դա մօտիկ, սա ամենամօտիկ անձնաւորութեան տեղ։

ԴԻՏՈՂ. 2: Առաջին և երկրորդ դէմքի գերանունների Գ., Բ. և Ն. հոլովակը առ աճանաւորը յաճախ զեղչում է: Փոխանակ ինձանով, ինձանից, ինձանում, մեղանով, մեղանից, մեղանում ասում և զրում են. ինձնով, ինձնից, ինձնում, մեղնով և լու: Փոխանակ քեղանով, քեղանից, քեղանում, ձեղանով, ձեղանից, ձեղանում ասում և զրում են. քեղնով, քեղնից, քեղնում. ձեղնով և լու:

ԴԻՏՈՂ. 3: Երբ, դէմքի գերանուան մէջ երբեմն գրաբառի ուս պահպանում է. փոխանակ նրա, նրան, դրա, դրան, սրա, սրան և լու երբեմն ասում և զրում են. նորա, նորան և լու, դրա դորան... սորա, սորան... Յոզն. նորանք, նորանց և լու, դորանց... սորանք, սորանց... Յոզնակիում սակաւ գործ են ածում նաև գրաբառ ձեհը. Ո. նորա, Ս. Տ. նոցա, Բ. նոցանից, Գ. նոցանով և լու:

§ 83: Փոխադարձ դերանուններ. միմեանց, իրար, մէկմէկու: Սրանք ուղղական հոլով չունին: Ս. Տ. և Հ. միմեանց, իրար (իրարու), մէկմէկու. Գ. միմեանցով, իրարով, մէկմէկով. Բ. միմեանցից, իրարից, մէկմէկուց:

§ 84: Ստացական դերանուններ. իմ, քո, նրա, մեր, ձեր և լու: Երբ ստացական գերանունը գոյականից նախադաս է, այսինքն գործ է ածւում ածականաբար, այն ժամանակ նա չի հոլովւում, օր. իմ գիրքը, իմ գրքի, քո գիրքը, քո գրքում, նրա գիրքը, նրա գրքերը, մեր գիրքը, մեր գրքերը և լու:

Բայց եթէ ստացականը գործ է ածւում առանց գոյականի, այսինքն գոյականի տեղ, գոյականաբար, նա հոլովւում է և ունի յոզնակի թիւ ևս, օր. իմ կովը դաշտումն է, իսկ քոնը (=քո կովը) կորել է: Իմ կովերը դաշտումն են, իսկ քոննը (=քո կովերը) կորել են: Այսպիսով իմ, քո, մեր, ձեր ստացականներից կազմւում են՝ իմոնը, քոնոնը, մերոնք, ձերոնը, յոզնակի գոյական-ստացականները, որոնք հոլովւում են այսպէս. Ս. Տ. իմոնց, քոնոնց, մերոնց, ձերոնց, Գ. իմոն-

ցով, քոնոնցով, մերոնցով և լու, Բ. իմոնցից, քոնոնցից, մերոնցից և լու:

ԴԻՏՈՂ. 1: Ստացական-գոյականը միշտ ընդունում է որոշիչ յօդը, և այս գէպքում ևս բարեհնչութեան համար ձայնաւորի և կիսաձայնի մէջ ընկնում է ն բաղաձայնը. քոնը (փոխանակ քո-ը), նրանը (փոխանակ նրա-ը):

ԴԻՏՈՂ. 2: Որոշիչ յօդը նոյն եղանակով ընդունում է նաև ստացական-ածականը, եթէ նա գոյականից յետաղաս է. օր. այս իմ գիրքն է, բայց այս գիրքը իմն է. այս ըր գիրքն է, բայց այս գիրքը քոնն (փոխ. քո-ը, քո-ն-ը) է. այս նրա գիրքն է, բայց գիրքը նրանն (փոխ. նրա-ը, նրա-ն-ը) է:

§ 85: Հարցական դերանուններ. ո՞վ, ի՞նչ, ո՞ր, քանի՞, որքա՞ն և լու:

Հոլով.	Եղակի թ.	Յոզն. թ.	Եղակի թ.	Յոզն. թ.	Եղակի թիւ	Յոզն. թիւ
Ո.	ո՞վ	նկըեր	ո՞ր	որո՞նք	քանի՞	քանիսնե՞ր
Ս.	ո՞ւմ	—	որի՞ն	որո՞նց	քանիսի՞ն	քանիսների՞ն
Տ.	ո՞ւմ	—	որի՞ն	որո՞նց	քանիսի՞ն	քանիսների՞ն
Հ.	ո՞ւմ	—	որի՞ն	որո՞նց	քանիսի՞ն	քանիսների՞ն
Գ.	ումնո՞վ	—	որո՞վ	որոնցնո՞վ	քանիսո՞վ	քանիսներո՞վ
Բ.	ումնի՞ց	—	որի՞ց	որոնցի՞ց	քանիսի՞ց	քանիսների՞ց
Ն.	ումնո՞ւմ	—	որո՞ւմ	որոնցնո՞ւմ	քանիսո՞ւմ	քանիսներո՞ւմ

ԴԻՏՈՂ. 1: Ինչ հոլովւում է ըստ առաջին հոլովման. Ս. ինչի. Տ. ինչի՞ն և լու. յոզն. Ո. ինչեր. Ս. ինչերի և լու: Սակայն ումանք այս բառը հոլովելիս սահպանում են շեշտի կանոնները, որով և ստացւում է. Ս. ընչիք, Տ. ընչին, Հ. ինչ, Գ. ընչով և լու. Յոզն. Ո. ընչեր, Ս. ընչերի և լու:

ԴԻՑՈՂ. 2: Քանի գերանունը ն որոշից յօդից և հոլովական վերջաւորութիւններից առաջ ընդունում է ս տառը. ժամի քանին է: Այս հացը քանիսի՞ համար է:

§ 86: Որոշից դերանուններից միայն ինըը (ինըն) գերանունն ունի արտուղի հոլովում: Մնացածները հոլովում են ըստ առաջին հոլովման:

Հոլով.	Եպակի թիւ	Յոզնակի թիւ
Ո.	ինըը (ինըն)	ինքեանք ինքները (ն) իրանք, իրենք
Ա.	իրան, իրեն, իւր, իր	իրանց, իրենց
Տ.	իրան, իրեն, ինքեան	իրանց, իրենց
Չ.	իրան, իրեն, ինքեան	իրանց, իրենց
Գ.	իրանով, իրենով	իրանցով, իրենցով
Բ.	իրանից, իրենից	իրանցից, իրենցից

ԴԻՑՈՂ. Այս գերանունն իբրև ածական անձնական գերանուան հետ գործ ածուելիս միշտ յետաղասուում և ընդունում է դիմորոշ յօդը. Ես ինքս, դու ինքդ, նա ինքը, մենք ինքներս, դուք ինքներդ, նրանք ինքները: Յաճախ ասում են. ինքն ըստ ինքեան հասկանալի է:

§ 87: Անորոշ դերանուններից ոմն եզակիում չէ հոլովում: Իսկ յոզնակիում հոլովում է այսպէս. Ո. ոմանք, Ա. Տ. Չ. ոմանց, Գ. ոմանցով, Բ. ոմանցից: Մնացած գերանունները հոլովում են ըստ առաջին հոլովման: Միքանի հոլովում է այնպէս, ինչպէս քանի հարցական գերանունը (տես վերև § 85, դիտ. 2):

ԽՆԴԻԲ: Որոշել ստորև առաջ բերած հատուածներում բոլոր անձնական, փոխադարձ, ստացական են գերանունները: Որոշել ածականաբար և գոյականաբար գործ ածուած բոլոր գերանունները:

Լաց լինել... ինչու, դրանով իր զաւակը չի փրկուի. անիծել, ում և ում անունով, վերեւում ու ներքեւում էլ ոչինչ չկայ, որի անունով արտասանուած խօսքը կայծակի պէս շանթէր... Ո՞վ է նա, Աստուած, թէ մի ուրիշ ոյժ, աւելի հզօր, աւելի անողորմ, քան ինքն Աստուած.. .

Թաթուլը կծուեց, ծնկներն իրար սեղմեց...
—Գանազար, սուտ է, ասաց Թաթուլը ատամների արանքից:
—Ի՞նչը, վարպետ:
—Ամեն բան, աշխարհը, արեւ, երկինք, ես, դու, մարդիկ,
հոգի, հաւատ, ողջ սուտ է, սուտ է, սուտ է...

Բ Ա Յ 1)

§ 88: Ես հիմա կարդում եմ: Ես երէկ կարդում էի: Ես էգուց կը կարդամ: Դու հիմա գրում ես: Դու երէկ գրում էիր: Դու էգուց կը գրես: Նա հիմա խօսում է: Նա երէկ խօսում էր: Նա էգուց կը խօսի: Մենք հիմա կարդում ենք և այն:

Այս նախագասութիւններում կարդալ, գրել և խօսել բառերը ցոյց են տալիս գործողութիւն՝²⁾ և կոչւում են ըայեր: Ուրեմն բայրը բանամաս է, որ գործողութիւն է ցոյց տալիս:

ԽՆԴԻԲ: Որոշել և ստորագծել ստորև առաջ բերած ստանաւորի մէջ պատահող բոլոր անունները (գոյական, ածական անուններ և գերանուններ) և բայերը:

Գնա, իմ որդեակ, աշխարհս անցիր,
Պանծակի անուն Մեծի գու ստացիր:
Ու գնած որդին, շատ քրտինք թափեց,
Մեծ հարստութիւն, մեծ զանձ ժողովեց,
Ու գարձաւ հօրը, ասաց պարծանքով.
—Հայր իմ, այժմ մեծ չիմ քու կարծիքով:

Վերև առաջ բերած օրինակներից տեսնում ենք, որ գործողութիւնը կարող է կատարուել զանազան ժամա-

1) Գլագոլ. 2) Դեյտվի.

նակ՝ ներկայում (ես հիմա կարդում եմ, գրում եմ, խօսում եմ), անցեալում (ես երէկ կարդում էի, գրում էի, խօսում էի) և ապագայում (ես էզուց կը կարդամ, կը գրեմ, կը խօսեմ): Ուրեմն բայերն ունին երեք ժամանակներ՝ ներկայ¹⁾, անցեալ²⁾ և ապացնի³⁾:

Դիմուլ. 1: Անցեալն էլ երկու տեսակ է լինում. անցեալ անկատար⁴⁾, օր. ես խօսում էի, կարդում էի, գրում էի, և անցեալ կատարեալ⁵⁾, օր. ես խօսեցի, կարդացի, գրեցի:

Դիմուլ. 2: Ապանի ժամանակի կազմիչն է կը կամ կու մասնիկը, օր. ես կը կարդամ կամ կու կարդամ, դու կը գրես կամ կու գրես, նա կ'ասէ (փոխանակ կը ասէ, կու ասէ) են:

§ 89: Նոյն օրինակներից տեսնում ենք, որ բայերն երեք դէմքեր (առաջին, երկրորդ և երրորդ դէմք) և երկու թւեր (եզ. և յոգն.) ունին. (ես կարդում եմ, մենք կարդում ենք. դու կարդում ես, դուք կարդում էք. նա կարդում է, նրանք կարդում են):

Դիմուլ. Շատ բայեր -ոտ- ածանցն ընդունելով, յոգնական իմաստ են արտայայտում, օր. նստել—նստոտել կանգնել—կանգնոտել, սպանել—սպանոտել, կախել—կախոտել, պատառել—պատառոտել, հանել—հանոտել են: Օր. նրանք նստոտել են:

§ 90: Արշակը զարթնելով, անկողնից վերկացաւ, երեսն ու ձեռները լրաց, մազերը սանրեց և գնաց ուսումնարան: Նոյնը կարելի է ասել և հետեւեալ ձեռվ.

Արշակը զարթնելով, անկողնից վերկացաւ, լրացուց, սանրուեց և գնաց ուսումնարան:

Այս նախադասութիւններում զարթնել, վեր կենալ, լոււանալ, սանրել և գնալ բառերը բայեր են, որովհետեւ գործողութիւն են ցոյց տալիս: Սակայն նրանք միատեսակ գործողութիւն չեն ցոյց տալիս: Լուանալ և սանրել ցոյց են տալիս, որ գործող անձի (ենթակայի) գործողութիւնն անցնում է մի ուրիշ առարկայի պայմանութիւնում:

1) Настоящее время. 2) Прошедшее время. 3) Будущее вр. 4) Прошедшее несовершенное. 5) Прошедшее совершенное.

Ժեռները լուաց, մազերը սանրեց): Այսպիսի բայերը կոչւում են ներգործական¹⁾: Զարթնել, վեր կենալ և զնալ բայերը ցոյց են տալիս, որ գործող անձի (ենթակայի) գործողութիւնը հէնց իր մէջ էլ մնում է, առանց ուրիշ առարկայի անցնելու (Արշակն ինքն իրան, ինքնարբերար զարթնեց, վերկացաւ, գնաց): Այսպիսի բայերը կոչւում են չէզոր²⁾:

Իսկ լրացուել և սանրուել բայերը ցոյց են տալիս, որ գործող անձի (ենթակայի) գործողութիւնն անդրադառնում է հէնց իր վերայ (Արշակը լրացուեց և սանրուեց =Արշակն իր երեսն և ձեռները լրաց, իր մազերը սանրեց): Այսպիսի բայերն էլ կոչւում են անդրադառն³⁾:

Անդրադառձ բայերից պէտք է զանազանել կրատրական և փոխարած բայերը⁴⁾: Կրատրական բայը ցոյց է տալիս, որ ենթական ոչ թէ գործում, այլ մի ուրիշ առարկայից գործողութիւն է կրում, ենթարկում է ուրիշ գործողութեանը, օր. քաջը սպանուեց թշնամու գընդակից: Սպանուել բայը կրատրական է:

Փոխարած բայը ցոյց է տալիս մի գործողութիւն, որ ենթականերից փոխարածաբար իրար է անցնում, օր. կարօտ եղբայրները զրկախանութեցան և համբուրութեցան:

Ուրեմն հինգ տեսակ (հինգ սեռի⁵⁾) բայեր կան. ներգործական, չէզոք, կրատրական, անդրադառձ և փոխադառձ:

Դիմուլ. 1: Ներգործական բայերի կարգին պատկանում են նաև անցողական կամ գրդական բայերը, որոնք ցոյց են տալիս, որ ենթական դրդում է մի երկրորդ անձի մի բան անելու, օր. ուտեցնել (=ուտել տալ), խմեցնել (=խմել տալ), խօսեցնել (=խօսել տալ), կարդացնել (=կարդալ տալ), տանել տալ, բերել տալ են:

Դիմուլ. 2: Չէզոք բայերն երբեմն ներգործական բայերի

1) Действительные глаголы. 2) Средние глаголы. 3) Возвратные глаголы. 4) Страдательные и взаимные глаголы. 5) Ան—залогъ.

նշանակութիւն ևս ունենում են: Օր. «Էս անցայ կամըջից» և «Ես անցայ կամուրջը»: Առաջին նախադասութեան մէջ անցնել չէզոք է, իսկ երկրորդում—ներգործական, որովհետև նրա գործողութիւնն անցել է «կամուրջ» բառին:

ԽՆԴԻԲ: Որոշել ստորև առաջ բերած հատուածներում պատահող բայերի սեռը. ո՞ր բայերն են ներգործական, անցողական, որոնք չէզոք, անդրադարձ և փոխադարձ:

Թաթուլը բարկացաւ, շտապեցրեց ձիուն, առաջ անցաւ, դուրս եկաւ արձակ դաշտ...

Մի երեխայ փոշու մէջ կորած ճեինք քշում էր երկու կով անցած նախրին հասցնելու... Մի սայլ էլ ճռնչում էր մօտակայ բրի յետեռում, որտեղից մի նապաստակ թռաւ, ճամբան կտրեց շեշտակի, և կորաւ բամբակի արտերում...

ԽՆԴՊՐԸ շարունակում էր, ամենքը հարրած էին. ոմանք մոմոռում էին, ուրիշները ճշում. կային՝ որ համբուրուում էին, պարում, մոմոռում, լալիս անմտօրէին...

Աշուղ Սարհագը նուագում էր.

«Հազար ու մի նեղութիւնով այգի անկեցի.

Դաւաճանի ձեռքը դիպաւ՝ ծաղիկներս թափուեցին...

§ 91: Կարդալ, վեր կենալ, լուանալ, լուացուել, սպանել, սպանուել ելն բայի սկզբնական ձեերն են, որոնք միմիայն գործողութիւն են ցոյց տալիս: Բայց թէ բըր, ում ձեռքով, ինչ եղանակով է կատարուում գործողութիւնը, այդ բայի սկզբնական ձեր, որը կոչւում է անորոշ եղանակ¹), չէ ցոյց տալիս: Այս բոլորն արտայայտելու համար բայի սկզբնական ձեր, անորոշ եղանակը, փոփոխում է (խոնարիւում է), և այս փոփոխութիւնը կոչւում է խոնարհում²):

ԴԻՑՈՂ. 1: Անորոշ եղանակն ունենում է հետեւել վերջաւորութիւնները, -ալ, -ել, -իլ և -ուլ, օր, կարդալ, աղալ, գրել, բոնել, հանդիպել, սրտնեղել, կալնել (կալնուլ) հենուլ: -իլ վերջաւորութիւնը յատուկ է չէզոք, կրաւորական, անդրադարձ և փոխադարձ բայերին, օր. սրտնեղիլ, կտրիլ (քար կտրիլ), սպա-

նուիլ, սանրուիլ ելն: Սակայն այս բայերն ևս շատ յաճախ իլ վերջաւորութեան տեղ ընդունում են -ել վերջաւորութեւնը, (կարել, սպանուել, սանրուել), որը յատուկ է ներգործական բայերին:

ԴԻՑՈՂ. 2: Կրաւորական, անդրադարձ և փոխադարձ բայերի բնորոշ ածանցը (լծորդը) կամ սեռանիշն է ու ձայնաւորը, որը վերջին ժամանակներս կովկասահայ հեղինակներից ոմանք փոխել են լ-ի, իսկ ոմանք էլ վ-ի, օր. սպանուել, սպանւել, սպանվել, սանրուել, սանրուել սանրվել. համբուրուել, համբուրւել համբուրվել ելն:

ԴԻՑՈՂ. 3: Բայի անորոշ եղանակն ե' բայի, և անուան նշանակութիւն ունի: Իբրև անուն նա հոլովում է (§ 37):

§ 92: Բացի անորոշ եղանակից բայն ունի 1, հրամայական եղանակ¹), օր. կարդա, մի կարդար. գրիր, մի գրիր. լուա, մի լուանար. լուացուիր, մի լուացուիր ելն: 2, սահմանական եղանակ²), որը որսշ, սահմանուած, գործողութիւն է արտայայտում, օր. ես կարդում եմ, ես կարդում էի, ես կարդացի, ես կը կարդամ. ես գրում եմ, ես գրում էի, ես գրեցի ելն: Ինչպէս այս օրինակներից երեւում է, սահմանական եղանակն երեք ժամանակ ունի՝ ներկայ, անցեալ և ապանի: Վերջապէս 3, պայմանական կամ ստորադասական եղանակ³), որն ոչ թէ որոշ, այլ պայմանական, որոշ պայմաններից կախուած գործողութիւն է արտայայտում, օր. եթէ բժիշկը հասնի, հիւանդը կ'ազատուի (չի մեռնի). եթէ բժիշկը հասնէր, հիւանդը կ'ազատուէր (չէր մեռնի): Այստեղ հասնի, հասնէր ձեերը, ինչպէս տեսնում ենք, պայմանական գործողութիւն են արտայայտում: Այս օրինակներից երեւում է, որ պայմանական կամ ստորադասական եղանակն երկու ժամանակ ունի, ապանի (եթէ հասնի) և անցեալ անկատար (եթէ հասնէր); Անցեալ անկատարը կը, կու կազմիչներով կազմում է պայմանականի անցեալ ապանին, օր. վերո-

1) Неопределённое наклонение. 2) Спряжение.

1) Новелльное наклонение. 2) Изъявительное наклонение. 3) Соглагательное наклонение.

յիշեալ նախադասութեան մէջ «կ'ազատուէր»:

ԽՆԴԻԲ: Որոշել ստորև առաջ բերած բայերի եղանակներն և ժամանակները:

Թէ իմ ալեոր հերքս սկսային,
Ոյժս ինձ հետ գար, կտրիճ դառնայի,—
Նեոյդ ձի նստած, պեխս ոլորած,
Չեսս թուր առած ես դաշտ կ'երթայի...
Կ'ասէի հայոց օրիորդներին.
Ծախեցէք հագի ձեր թանկ շորերը,
Թողէք պատմուծանք, զարդ, մարգարիտներ,—
Ժանդոտած ու գուլ են մեր թրերը:
Տուէք բենեղեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը,
Վիրակապ հիւսէք գուք ձեր մազերից.—
Այսպէս յայտնեցէք գուք մեզ ձեր սէրը:

§ 93. Բայերից գոյանում են դերբայերը¹⁾ և բայածականները²⁾: Օր. նա ուզում է ջրհորից ջուր հանել: Նա ջրհորից ջուր է հանել: Ջրհորից ջուր հանող տղան անյայտացել է: Դու ջրհորից ջուր ես հանելու: Ջրհորից հանելու ջուրը վճիտ է: Ջրհորից ջուր հանելու գոյլը ծակ է: Մշակները ջրհորից ջուր հանելով խօսում էին: Ջրհորից ջուր հանելիս գժբախտութիւն պատահեց: Ջրհորից հանելի (—հանելու) ջուրը վճիտ էր. իսկ ջրհորից հանած ջուրը պղտոր է:

Ինչպէս վերոյիշեալ օրինակներից տեսնում ենք, հանել անորոշ եղանակից, որը պատասխանում է ի՞նչ անել հարցին, գոյացել են հետեւեալ եօթ ձեւերը. հանել (եմ, ես...), հանող, հանելու, հանելով, հանելիս, հանելի, հանած, որոնք պատասխանում են զանազան հարցերի: Նա ի՞նչ է արել: —Նա ջրհորից ջուր է հանել: Ո՞ր տղան է անյայտացել: —Ջրհորից ջուր հանող տղան է անյայտացել: Դու ի՞նչ

1) Ճեռիչածիա. 2) Отлагольный прилагательный, или причастія.

ես անելու: — Ջուր եմ հանելու: Ո՞ր գոյլն է ծակ: — Ջուր հանելու դոյլը: Ի՞նչ անելով էին խօսում մշակները: — Մշակները խօսում էին ջրհորից ջուր հանելով: Ե՞րբ, ի՞նչ անելիս գժբախտութիւն պատահեց: — Ջրհորից ջուր հանելիս: Ո՞ր ջուրն էր վճիտ: — Ջրհորից հանելի (—հանելու) ջուրը: Ո՞ր ջուրն է պղտոր: — Ջրհորից հանած ջուրը:

Ինչպէս այս օրինակներից տեսնում ենք, յիշուած եօթ ձեւերից երկուսն և բայի, և ածականի իմաստ ունին: Դրանք են, հանելու և հանած. Ջրհորից ջուր եմ հանելու, ջրհորից ջուր եմ հանած (—ջուր եմ հանել). Նախադասութիւններում հանելու և հանած ձեւերը բայի իմաստ ունին, ուստի և կոչւում են դերբայեր: Իսկ «Ջրհորից հանելու (—հանելի) ջուրը վճիտ էր, իսկ ջրհորից հանած ջուրը պղտոր է» նախադասութիւններում հանելու (—հանելի) և հանած ածականներ են, որովհետեւ իմաստով միացած են գոյականի հետ և ճանաչւում են ո՞ր հարցով: Մնացած ինչպէս ձեւերից երեքը. հանել (է), հանելով, հանելիս գուտ բայի իմաստ ունին, ուստի և գուտ գերբայեր են: Իսկ երկուսը, հանող և հանելի գուտ ածականի իմաստ ունին, ուստի և կոչւում են բայածականներ:

ԴԻՑՈՂ. 1: Ի-ով վերջացող բայածականները յաճախ ընդունում են ք տառը, մանաւանդ երբ գոյականի իմաստով են գործ ածւում, օր. ուտելի (—ուտելու) հաց և ուտելիք, խմելի (—խմելու) ջուր և խմելիք, ստանալի (—ստանալու) դրամ և ստանալիք և այլն:

ԴԻՑՈՂ. 2: Կրաւորական, անդրադարձ և փոխադարձ բայերը, գերբայերն և բայածականները կազմելիս իհարկէ պահպանուում է ու սեռանիշը կամ լծորդը (§ 91, դիտող. 2): Ուրեմն հանուել բայից կը գոյանան հանուող, հանուելու, հանուելով, հանուելի, հանուելիս, հանուած բայածականներն և գերբայերը:

ԽՆԴԻԲ: Որոշել հետեւեալ հատուածում պատահող գերբայերն և բայածականները. որոշել բոլոր գերբայերի, բայածականների սեռը, եղանակներն և ժամանակները:

Կինը չկար. շունն սպանուած, երեխան վիզը ծռած, և յետոյ մի պատոս հեղեղ իր պատիւն առաջ արած, քշում էր գիւղի փողոցներով, գարշահուութիւն տարածելով ամեն կողմ...

Բակը մտաւ Գասպարի հետ, նայեց տանը, ուր կատարուել էր իր պատւի անարգանքը, ու ներս չգնաց:

Գասպարը կանգնած էր կողքին համբ կտրած. նրա ծնօտը դողողում էր և շնչառութեան փոխարէն կրծքից լսում էր խուլ դրնդիւն...

Գասպարը մտածում էր, ինչպէս վրէժինդիր լինել, ում գանգը փշրել իր դժբախտ գարպետին մի փոքը մխիթարելու համար...

Թաթուլի համար էլ անելիք չկար. ամեն ինչ արուած էր, ամեն ինչ ասուած էր... Թաթուլը կծկուեց, ծնկներն իրար սեղմեց, բայց մնաց նստած, միշտ գլուխը սղմած թաթերի մէջ:

ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

§ 94: Մի բայ խոնարհելու համար պէտքէ իմանալ նրա անորոշ եղանակն և անցեալ կատարեալը¹⁾, որովհետեւ այս երկսից կազմւում են մնացած բոլոր ձեերը:

§ 95: Բայց նախ հարկ է ծանօթանալ բուն էական կամ լծորդ ըայի հետ, որովհետեւ սրա լծորդութեամբ կազմւում են, սակաւ բացառութեամբ, բոլոր բայերի ներկան և անցեալ անկատարը:

Էական բայի անորոշ եղանակն է ել, որն անգործածական է: Այս բայն ունի միայն սահմանական եղանակի ներկայ և անցեալ անկատար ժամանակները:

1) Իսկ բայի անորոշ եղանակը, կարեոր դէպքերում նաև անցեալ կատարեալը, մեղ ցոյց է տալիս բառարանը: Աշխարհիկ լեզուի բառարան մենք դեռ չունինք, սակայն այդ կարիքը լրացնում է մեր կազմած «լիակատար հայուս բառարանը»:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

ՆԵՐԿԱՅ

անցեալ անկատար

Եղակի թիւ	Ցոգնակի թիւ	Եղակի թիւ	Ցոգնակի թիւ
Ես եմ	մենք ենք	Ես էի	մենք էինք
դու ես	դուք էք	դու էիր	դուք էիր
նա է	նրանք են	նա էր	նրանք էին

Միւս էական բայն է լինել (ա. § 122):

§ 96: Գիտենալով էական բայի խոնարհումը, հեշտութեամբ կարելի է իմանալ միւս բոլոր բայերի¹⁾ սահմանական եղանակի ներկան և անցեալ անկատարը: Այս ժամանակների համար բայերը, սակաւ բացառութեամբ, կազմւում են -ում վերջաւորութեամբ մի բայաձեւ, որն և լծորդում է էական բայի հետ: Աղ-ալ, հասկան-ալ, մօտեն-ալ, գը-ել, փախչ-ել ևն բայերից կազմւում են աղ-ում, հասկան-ում, մօտեն-ում, գը-ում, փախչ-ում բայաձերը, որոնք, ինչպէս ասացինք, լծորդուելով էական բայի հետ, կազմւում են սահմ. եղանակի ներկայ և անց. անկատար ժամանակները:

Մահմ. ներկայ, ես աղում եմ, հասկանում եմ, մօտենում եմ, փախչում եմ: Դու աղում ես, հասկանում ես ելս. նա աղում է, հասկանում է ելս: Մենք աղում ենք, հասկանում ենք ելս: Դուք աղում էք, հասկանում եք ելս: Նրանք աղում են, հասկանում են ելս:

Մահմ. անց. անկատար, ես աղում էի, հասկանում էի, մօտենում էի ելս: Դու աղում էիր, հասկանում էիր, մօտենում էիր ելս: Նա աղում էր, հասկանում էր, մօտենում էր ելս: Մենք աղում էինք, հասկանում էինք ելս:

ԽՆԴԻՔ: Կազմել ուզել, ապրել, ստանալ, հարցնել, տեսնել բայերի սահմանական եղանակի ներկան և անցեալ անկատարը:

1) Բացառութիւններ կան, որոնց հետ յետոյ կը ծանօթանանք:

§ 97: Այժմ տեսնենք, թէ ինչպէս են կազմւում բայերի միւս ձևերը:
Անորոշ եղանակից կազմւում են.

ա) Սահմանական և պայմանական եղանակների ավանդնին:
ՍԱՀՄ. ԵՂ. ԱՊ. կ'աղամ, կ'աղաս, կ'աղայ. կ'աղանք, կ'աղաք, կ'աղան: կը հասկանամ, կը հասկանաս, կը հասկանայ. կը հասկանանք, կը հասկանաք, կը հասկանան են:

ՊԱՅՄ. ԵՂ. ՆԵՐԿ. կամ Ս.ՊԱ.ՌՆ. եթէ աղամ, եթէ աղաս, եթէ աղայ. եթէ աղանք, եթէ աղան, եթէ աղան:

ՊԱՅՄ. ԵՂ. ՀԱՍԿԱՆԱՄ, ԵԹԷ ՀԱՍԿԱՆԱՍ են:

բ) Պայմանական եղանակի անցեալ անկատարը կամ անցեալ ասպանին, օր. եթէ աղայի, եթէ աղայիր, եթէ աղար. եթէ աղայինք, եթէ աղայիք, եթէ աղային: Եթէ գրէի, եթէ գրէիր են:

Այս ձևերն անցեալ անկատար են, եթէ պայմանական շաղկապների հետ են միանում. ապառնի են, եթէ կը (կ), կու ապառնու կազմին են ընդունում, օր. եթէ ես քո ասածը հասկանայի, քեզ չէի նեղացնի: Ես քո ասածը կը հասկանայի, եթէ ինձ չը խանգարէին:

գ) Հրամայական արգելականը. մի աղ-ար, մի աղ-աք. մի գրիր, մի գրէք. մի հանիր, մի հանէք. մի գտնիր, մի գտնէք են:

դ) Անկատար դերբայը. աղալով, հասկանալով, հանելով են. աղալս, հասկանալս, գրելս են:

ե) Ապառնի դերբայը կամ ըայածականը. աղալու, հասկանալու, հանելու, գտնելու, հասկացնելու են:

զ) Միւս ըայածականը ի վերջաւորութեամբ. աղալի, հասկանալի, հանելի, գտնելի են:

է) -ԵՂ-ՈՎ վերջացող բայերի ներկայ ըայածականն և կրատրական ձեւը. օր. հանել, բայած. հանող, կրաւ. հանուել. գրել, բայած. գրող, կրաւ. գրուել. գտնել, բայած. գտնող, կրաւ. գտնուել. փախչել, բայած. փախչող:

§ 98: Այժմ անցնենք անցեալ կատարեալին: Այս ձևը կազմելու համար աչքի առաջ պէտք է ունենալ, թէ բայը քանի ածանց ունի. մէկ, թէ երկու կամ աւելի: Օրինակի համար վերցնենք հան-ե-լ և գտ-ն-ե-լ բայերը: Սրանցից առաջնի միակ ածանցը բայի ե լծորդն է. իսկ երկրորդը բացի ե լծորդից ունի և ն ածանցը: Ուստիև առաջին բայի անցեալ կատարեալը լինում է հան-ե-ցի, իսկ երկրորդինը գտ-այ: Աղ-ա-լ լոկ լծորդ ունի (ա ձայնաւորը) և անց կատ. կը լինի աղ-ա-ցի. իսկ հասկ-ան-ա-լ բացի ա լծորդից ունի և ան ածանցը, ուստի և նրա անցեալ կատարեալը լինում է հասկ-աց-այ. մօտ-են-ա-լ-մօտեցայ, խաչ-ե-լ-խաչ-եցի, կանչ-ե-լ-կանչ-եցի: Բայց փախ-չ-ե-լ-փախայ, թռ-չ-ե-լ-թռ-այ են:

§ 99: Անցեալ կատարեալից կազմւում են:

ա) -ԱԼ-ՈՎ վերջացող բայերի ներկայ ըայածականը, օր. աղ-ացի, բայած. աղաց-ող. հասկաց-այ, բայած. հասկաց-ող. մօտեցայ, բայած. մօտեց-ող են:

բ) Նոյն բայերի կատարեալ դերբայը և ըայածականը, օր. աղացի - աղաց-ել եմ, աղաց-ած եմ, աղաց-ած աղուն. հասկացայ - հասկաց-ել եմ, հասկաց-ած եմ, հասկաց-ած բան և այլն:

գ) Նոյն բայերի կրատրականը. աղացի, կրաւ. աղաց-ուել, հասկացայ, կրաւ. հասկաց-ուել են:

դ) Բոլոր բայերի սուն հրամայականը, օր. աղացի - աղա (ցն ընկնում է), աղաց-էք. հասկացայ - հասկաց-ի՛ր, հասկաց-էք. հանեցի - հան-ի՛ր (-եց-ը ընկնում է), հանեց-էք. գտայ - գտ-ի՛ր, գտ-էք. հասկացը - հասկացը-ո՛ւ, հասկացը-էք. փախայ - փախ-ի՛ր, փախ-էք են:

Այս բոլոր նախագիտելիքներից յետոյ այժմ ծանօթանանք նախ կանոնաւոր ներգործական և չեզոք բայերի խոնարհման աղիւսակի հետ:

§ 100. Ներգործական եւ չէղոր բայերի
թրական խոսքակի

Անորոշ եղանակ	Ա. աղ-ա-լ	2. հասկ-ան-ա-լ (մօտ-են-ա-լ)	3. հան-ե-լ	Անորոշ եղանակ եղանակ					
				Ա. ա-մ-	2. ան-ա- (-են-ա-)	3. ե-	4. ա-ն-ի-լ	5. հասկ-աց-ն-ե-լ (մօտ-եց-ն-ե-լ)	6. փախ-չ-ե-լ (փախ-չ-ի-լ)
Անորոշ եղանակ	ներկայ	աղում եմ աղում ես աղում է	հասկան-ում եմ հասկանում ես հասկանում է	հան-ում եմ հանում ես հանում է	ներկայ	աղում էի աղում էիր աղում էր	հասկան-ում էի հասկանում էիր հասկանում էր	հասկացն-ում եմ հասկացնում ես հասկացնում է	փախչ-ում եմ փախչում ես փախչում է
Ա. ա-մ-	ան-կա- տար	աղում էի աղում էիր աղում էր	հասկան-ում էի հասկանում էիր հասկանում էր	հան-ում էի հանում էիր հանում էր	ան-կա- տար	աղացի աղացիր աղաց	հասկացայ հասկացար հասկացաւ	հանեցի հանեցիր հանեց	փախչում էի փախչում էիր փախչում էր
2. ան-ա- (-են-ա-)	ապառնի	կ'աղամ կ'աղաս կ'աղայ	կը հասկանամ կը հասկանաս կը հասկանայ	կը հանեմ կը հանես կը հանէ	ապառնի	գտայ գտար գտաւ	հասկացրի հասկացրիր հասկացրեց	փախայ փախար փախաւ	
3. ե-	անց. անկ. կմ ապառ.	աղայի աղայիր աղար	հասկանայի հասկանայիր հասկանար	հանէի հանէիր հանէր	անց. անկ. կմ ապառ.	կը գտնեմ կը գտնես կը գտնէ	կը հասկացնեմ կը հասկացնես կը հասկացնէ	կը փախչեմ կը փախչես կը փախչի	
4. ա-ն-ի-լ	ներկ. կմ ապառնի	աղամ աղաս աղայ	հասկանամ հասկանաս հասկանայ	հանեմ հանես հանէ	ներկ. կմ ապառնի	գտնեմ գտնես գտնէ	հասկացնեմ հասկացնես հասկացնէ	փախչեմ փախչես փախչի	
5. հասկ-աց-ն-ե-լ (մօտ-եց-ն-ե-լ)	անց. անկ. կմ ապառ.	գտնէի գտնէիր գտնէր	հասկացնէի հասկացնէիր հասկացնէր	գտնէի գտնէիր գտնէր	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացնէի հասկացնէիր հասկացնէր	փախչէի փախչէիր փախչէր	
6. փախ-չ-ե-լ (փախ-չ-ի-լ)	Հրամ. եղան.	գտիր	հասկացրնւ	գտիր	Հրամ. եղան.	հասկացրնւ	փախիր		
Դելբայեր	անորոշ անկատար	աղալով աղալիս	հասկանալով հասկանալիս	հանելով հանելիս	անորոշ անկատար	գտնելով գտնելիս	հասկացնելով հասկացնելիս	փախելով փախելիս	
Կատար.	կ'աղացել(եմ...) կ'աղացած(եմ...)	հասկացել (եմ...) հասկացած (եմ...)	հանել (եմ...) հանած (եմ...)	կ'աղացել(եմ...) կ'աղացած(եմ...)	կ'ատար.	գտել (եմ...) գտած (եմ...)	հասկացըել (եմ...) հասկացըած (եմ...)	փախել (եմ...) փախած (եմ...)	
Ապառնի	աղալու(եմ...) աղալու(եմ...)	հասկանալու (եմ...) հասկանալու(եմ...)	հանելու (եմ...)	ապառնի	գտնելու(եմ...)	հասկացնելու(եմ...)	փախելու(եմ...)		
Բայածակ	ներկայ կատար. ապառնի	աղացող աղացած աղալու աղալի	հասկացող հասկացած հասկանալու հասկանալի	անորդ կատար. ապառնի	գտնող գտած գտնելու գտնելի	հասկացնող հասկացըած հասկացնելու հասկացնելի	փախող փախած փախելու փախելի		

կանոնաւոր խոնարհման աղիւսակը
նաև թիւնում

Անորոշ եղանակ	4. գտ-ն-ի-լ	5. հասկ-աց-ն-ե-լ (մօտ-եց-ն-ե-լ)	6. փախ-չ-ե-լ (փախ-չ-ի-լ)	Անորոշ եղանակ եղանակ			
				Ա. ա-ն-ի-լ	2. ան-գն-ի-լ (-եց-ն-ի-լ)	3. հան-ե-լ	4. գտ-ն-ի-լ
Անորոշ եղանակ	ներկայ	գտնում եմ գտնում ես գտնում է	հասկացնում եմ հասկացնում ես հասկացնում է	ներկայ	գտնում էի գտնում էիր գտնում էր	հասկացնում էի հասկացնում էիր հասկացնում էր	գտնում եմ գտնում ես գտնում է
Ա. ա-ն-ի-լ	կատար.	գտնում էի գտնում էիր գտնում էր	հասկացնում էի հասկացնում էիր հասկացնում էր	կատար.	գտայ գտար գտաւ	հասկացրի հասկացրիր հասկացրեց	փախչում էի փախչում էիր փախչում էր
2. ան-գն-ի-լ (-եց-ն-ի-լ)	ապառնի	գտնէի գտնէիր գտնէր	հասկացնէի հասկացնէիր հասկացնէր	ապառնի	գտնէի գտնէիր գտնէր	հասկացնէի հասկացնէիր հասկացնէր	փախչէի փախչէիր փախչէր
3. հան-ե-լ	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացընեմ հասկացընես հասկացընէ	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացընեմ հասկացընես հասկացընէ	փախչի
4. գտ-ն-ի-լ	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացընեմ հասկացընես հասկացընէ	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացընեմ հասկացընես հասկացընէ	փախչի
5. հասկ-աց-ն-ե-լ (մօտ-եց-ն-ե-լ)	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացընեմ հասկացընես հասկացընէ	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացընեմ հասկացընես հասկացընէ	փախչի
6. փախ-չ-ե-լ (փախ-չ-ի-լ)	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացընեմ հասկացընես հասկացընէ	դժուար	գտնէի գտնէիր գտնէր	հասկացընեմ հասկացընես հասկացընէ	փախչի

ներգործական եւ չեցոր բայերի
Դ ր ա կ ա ն ի ս ո ւ գ ն ա կ ի

Անորոշ եղանակ	Ա. աղ-ա-լ	2. հասկ-ան-ա-լ (մօտ-են-ա-լ)	3. հան-ե-լ
		-ան-ա- (-են-ա-)	-ե-
Անձացներ	-ա-	-ան-ա- (-են-ա-)	-ե-
Ներկայ	աղ-ում ենք աղում էք աղում են	հասկանում ենք հասկանում էք հասկանում են	հանում ենք հանում էք հանում են
ան կ ե ա լ	ան- կա- տար	աղում էինք աղում էիք աղում էին	հասկանում էինք հասկանում էիք հասկանում էին
ան կ ա -	ան- կա- տար	աղացինք աղացիք աղացին	հասկացանք հասկացաք հասկացան
ապառնի	կ'աղանք կ'աղաք կ'աղան	կը հասկանանք կը հասկանաք կը հասկանան	կը հանենք կը հանէք կը հանեն
Պայման. եղ.	ներկ. կմ ապառնի	աղանք աղաք աղան	հասկանանք հասկանաք հասկանան
անց. անկ. կմ ապառ.	աղայինք աղայիք աղային	հասկանայինք հասկանալիք հասկանային	հանէինք հանէիք հանէին
Հրամ. եղան.	աղացէք	հասկացէք	հանեցէք
Դերբայեր	անորոշ անկատար կատար. ապառնի	Խնչպէս եղակիում	
Բայաձակ	ներկայ կատար. ապառնի	Խնչպէս եղակիում, աւելացնելով յոդնակիի վերջաւորութիւնները	

կանոնաւոր խոնարհման աղիւսակը
ն ա լ ի ս ո ւ մ
թ ի ւ

Անորոշ եղանակ	4. գո-ս-ե-լ	5. հասկ-աց-ն-ե-լ (մօտ-եց-ն-ե-լ)	6. փախ-չ-ե-լ (փախ-չ-ե-լ)
	-ո-լ-	-աց-ն-ե- (-եց-ն-ե-)	-չ- (-չ-ի-)
Անորոշ եղանակ	ներկայ	գտնում ենք գտնում էք գտնում են	հասկացնում ենք հասկացնում էք հասկացնում են
Ածանցներ	ան- կա- տար	գտնում էինք գտնում էիք գտնում էին	հասկացնում էինք հասկացնում էիք հասկացնում էին
ան կ ե ա լ	ան- կա- տար	գտանք գտաք գտանան	հասկացրինք հասկացրիք հասկացրին
ան կ ա -	կա- տար	կը գտնենք կը գտնէք կը գտնեն	կը հասկացնենք կը հասկացնէք կը հասկացնեն
ապառնի	ապառնի	կը գտնենք կը գտնէք կը գտնեն	կը փախենք կը փախէք կը փախեն
Պայման. եղ.	ներկ. կմ ապառնի	գտնենք գտնէք գտնեն	հասկացնենք հասկացնէք հասկացնեն
անց. անկ. կմ ապառ.	աղայինք աղայիք աղային	գտնէինք գտնէիք գտնէին	հասկացնէինք հասկացնէիք հասկացնէին
Հրամ. եղան.	գտէք	հասկացրէք	փախէք
Դերբայեր	անորոշ անկատար կատար. ապառնի	Խնչպէս եղակիում	
Բայաձակ	ներկայ կատար. ապառնի	Խնչպէս եղակիում, աւելացնելով յոդնակիի վերջաւորութիւնները	

§ 101: Կան մի շարք բայեր -ան-ե- ածանցներով, ո-
րոնք աշխարհաբառում -ան- ածանցն երբեմն ձգում են,
երբեմն ոչ: Այսպէս զործ են ածում կառուցանել և կա-
ռուցել, մատուցանել և մատուցել, բեկանել և բեկել,
բուծանել և բուծել, ուսուցանել և ուսուցել, հատուցա-
նել և հատուցել, ապացուցանել և ապացուցել, զիջանել
և զիջել, մուծանել և մուծել, զեկուցանել և զեկուցել,
յարուցանել և յարուցել (քնանալ և քնել) են: Արանց սահմ.
եղանակի ներկան և անց. անկատարը կազմւում են սո-
վորաբար երկու ձևերից ևս. կառուց(ան)ում եմ, կառու-
ց(ան)ում ես ելն. կառուց(ան)ում էի, կառուց(ան)ում էիր
են: Անց. կատարեալն է. կառուցի, կառուցիր, կառոյց.
կառուցինք, կառուցիք, կառուցին կամ թէ՝ կառուցեցի,
կառուցեցիր, կառուցեց. կառուցեցինք են: Հրամ. կա-
ռուցիր, կառուցէք: Դերբ. կատար. կառուցել (եմ...), կառու-
ցած (եմ...), բայած, կատար. կառուցած:

ԲԱՅԱՍԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 102: Բացասական խոնարհումը կազմւում է դրա-
կանից չ բացասչի (բացասական մակրայի) օգնութեամբ,
որի ժամանակ էական բայն իր տեղը փոխում է:

Դրական խոնարհում

Բացասական խոնարհում

Ս ա հ մ ա ն ա կ ա ն ե ղ ա ն ա կ

ներկայ

աղում եմ

աղում ես

է

աղում ենք

աղում են

ներկայ

չեմ աղում

չես աղում

չէ կմչի աղում

չենք աղում

չէք աղում

չեն աղում

անց. անկ.

աղում էի

աղում էիր

աղում էր

աղում էինք

աղում էիք

աղում էին

անց. անկ.

չէի աղում

չէիր աղում

չէր աղում

չէինք աղում

չէիք աղում

չէին աղում

Անորոշ եղանակ՝ չաղալ, չհասկանալ, չհանել, չգտնել, չհա-
կացնել, չփախչել:

Խնդիր, կաղմել միւս խոնարհումների բացասական ներկան
և անցեալ անկատարը:

անց. կամ

աղացի

աղացիր

աղաց

աղացինք

աղացիք

աղացին

անց. կամ

չաղացի

չաղացիր

չաղաց

չաղացինք

չաղացիք

չաղացին

Ս ա ռ ը ա դ ա ս ա կ ա ն ե ղ ա ն ա կ

ներկայ կամ ապանի

աղամ

աղաս

աղայ

աղանք

աղաք

աղան

ներկայ կամ ապանի

չաղամ

չաղաս

չաղայ

չաղանք

չաղաք

չաղան

անց. անկ. կամ ապ.

աղայի
աղայիր
աղար
աղայինք
աղայիք
աղային

անց. անկ. կամ ապ.
չաղայի
չաղայիր
չաղար
չաղայինք
չաղայիք
չաղային

ԽՆԴԻՐ: Կազմել միւս խոնարհումների ստորադ. եղանակի ներկան կամ ապառնին և անցեալ անկատարը կամ ապառնին:

ԴԻԾՈՂ. 1: Բացասական ձևերում երթեմն ապաթարցը (1) գրւում է. չաղացի կամ չ'աղացի. չաղամ կամ չ'աղամ են:

ԴԻԾՈՂ. 2: Էական բայը իր տեղը փոխում է նաև հարցական դերանուններից յետոյ, օր. ի՞նչ ես անում, ի՞նչ էիր անում:

§ 103: Բացասական խոնարհման ապառնին կազմւում է դարձեալ էական բայի օվնութեամբ, առանց կը և կու մասնիկների մասնակցութեան: Այս ապառնու բայաձերը բայի անորոշ եղանակն է, որի վերջին տառը (լ) յաճախ փոխում է յ կիսաձայնի:

Դրական խոնարհում

կ'աղամ
կ'աղաս
կ'աղայ
կ'աղանք
կ'աղաք
կ'աղան

Բացասական խոնարհում

չեմ աղայ*
չես աղայ*
չի աղայ*
չենք աղայ*
չէք աղայ*
չեն աղայ*

ԽՆԴԻՐ: Կազմել միւս խոնարհումների բացասական ապառնին:

*) Ասում են նաև չեմ աղաւ, չես աղաւ, չի աղաւ են: Այս դէքքում անորոշ եղանակի մեջը միշտ գառնում է վիլ, օր. չեմ հանիլ, չես հանիլ են, չեմ գտնիլ, չես գտնիլ են. չեմ փախչիլ, չեմ հասկացնիլ են:

ԴԻԾՈՂ. Հրամայական-արգելականը կազմւում է մ'ի՛ բացասական մակրայի օվնութեամբ. մ' աղար, մ' աղաք. մ' հասկանար, մ' հասկանաք. մ' հանիր, մ' հանէք են (ասում են նաև մ' աղաւ, մ' հասկանալ, մ' հանիլ, մ' գտնիլ, մ' հասկացնիլ, մ' փախչիլ),

ԿՐԱԼՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

§ 104: Մենք տեսանք, թէ ի՞նչպէս է կազմւում կրաւորական բայի անորոշ եղանակը. աղ-ալ, հասկան-ալ, հան-ել, գտն-ել և նման ներգործական բայերից կազմւում են աղաց-ու-ել, հասկաց-ու-ել, հան-ու-ել և գտն-ու-ել կրաւորականները (տես վերև, § 97, է և § 99, գ):

Ի՞նչպէս տեսնում ենք, կրաւորականում բոլոր բայերն էլ ունին մել վերջաւորութիւնը, որն մել ևս գառնալ կարող է (վերոյիշեալ ձևերը գրւում են նաև աղաց-ու-ել, հասկաց-ու-ել հան-ու-ել գտն-ու-ել): Այս պատճառաւ կրաւորական բայերը խոնարհում են այնպէս, ի՞նչպէս վերջաւորութիւն ունեցող ներգործականները: Վերջիններից նրանք զանազանում են միմիայն ու սեռանշով, ի՞նչպէս ստորև առաջ բերած օրինակները ցոյց են տալիս:

Սահմանական եղանակ

ՆԵՐԿԱՅ աղաց-լ-ում* եմ, հասկաց-լ-ում* եմ, հան-լ-ում* եմ, գտն-լ-ում* եմ են:

ԱՆՑԵԱԼ ԱՆԿ. աղաց-լ-ում* էի, հասկաց-լ-ում* էի, հան-լ-ում* էի, գտն-լ-ում* էի են:

ԱՆՑ. ԿԱ. աղաց-ու-եցի, հասկաց-ու-եցի, հան-ու-եցի, գտն-ու-եցի են:

ԱՊԱ. կ'աղաց-ու-եմ, կը հասկաց-ու-եմ, կը հանու-եմ, կը գտն-ու-եմ են:

*) Երբ չ ու միմնաց հանդիպում են, նրանցից առաջինը դառնում է ւ, այնպէս որ աղաց-ու-ու-մ եմ, հասկաց-ու-ու-մ եմ են: Են ձևերը գառնում են աղաց-լ-ում եմ, հասկաց-լ-ում եմ են:

Պայմանական եղանակ

ՆԵՐԿ. կամ ԱՊ. Եթէ աղաց-ու-եմ, եթէ հասկաց-ու-եմ, եթէ հան-ու-եմ, եթէ գտն-ու-եմ և լին

ԱՆՑ. ԱՆԿ. կամ ԱՊ. Եթէ աղաց-ու-էի, եթէ հասկա- ց-ու-էի, եթէ հան-ու-էի, եթէ գտն-ու-էի և լին:

Հրամայական եղանակ

Աղաց-ու-իր, մի աղաց-ու-իր. հան-ու-իր, մի հան-ու-իր և լին:
Դերբայեր

Աղաց-ու-ելով, հասկաց-ու-ելով, հան-ու-ելով և լին. ա- ղաց-ու-ելիս, հասկաց-ու-ելիս, հան-ու-ելիս և լին. աղաց-ու-ել եմ, աղաց-ու-ած եմ և լին:

Բայաձականներ

Աղաց-ու-ող, հասկաց-ու-ող, հան-ու-ող և լին. աղա- ցու-ած, հասկաց-ու-ած, հան-ու-ած և լին:

§ 105: Արդէն յիշուեցաւ (§ 91, դիտ. 1), որ չէզոք քայերից շատ-շատերն ունենում են շել և շիլ վերջաւո- րութիւնները, օր. վաստակել և վաստակիլ, հանդիպել և հանդիպիլ, պատահել և պատահիլ, բազմել և բազմիլ, կատաղել և կատաղիլ, տիրել և տիրիլ, հաւանել և հաւանիլ և լին և լին: Ըստ այսմ և սրանց անցեալ կատարեալն երկու տեսակ վերջաւորութիւն ունի. շեցի և շեցայ. հանդիպեցի, հանդիպեցիր, հանդիպեց. հանդիպե- ցինք, հանդիպեցիք, հանդիպեցին (հանդիպիլ ձեից) և հան- դիպեցայ, հանդիպեցար, հանդիպեցաւ. հանդիպեցանք, հանդիպեցաք, հանդիպեցան (հանդիպիլ ձեից):

§ 106: Անդրադարձ և փոխադարձ քայերը նոյն վեր- ջաւորութիւնն ունին, ինչոր կրաւորականները (§ 91, դիտ. 2), ուստի և սրանք խոնարհում են ձիշտ այնպէս, ինչոր վերջիններս:

Այստեղ ևս պէտք է նկատել, որ կրաւորական, ան- դրադարձ և փոխադարձ քայերն ունին - ել և - իլ վերջաւ- որութիւնները, օր. սպանուել և սպանուիլ, սանրուել և սանրուիլ, գրկախառնուել և գրկախառնուիլ և լին: Ըստ այսմ և սրանց անցեալ կատարեալն ես երկու տեսակ վերջաւորու- թիւն ունի. շեցի և շեցայ, սպանուեցի, սպանուեցիր, սպա- նուեց և սպանուեցայ, սպանուեցար, սպանուեցաւ և լին, սանրուեցի, սանրուեցիր, սանրուեց և սանրուեցայ և լին, գրկախառնուեցինք և գրկախառնուեցանք և լին

ԽՆԴԻԲ: Խոնարհել ստորև առաջ բերած հատուածի մէջ պա- տահող բոլոր քայերը, որոնք գնում են յիշուած Յ կանոնաւոր խոնարհումների տակ:

Թաթուլը կամացուկ մօտեցաւ որդուն, ծունկ չոքեց առաջը, զգուշութեամբ յետ քաշեց աչքերի վրայից ծածկոցը ու մասց պա- ղած: Աչքերն ըստ երեսյթին առողջ էին, միայն բբերը լայնա- ցել էին ու սև ինչորէս գիշեր, պատել էին, ամբողջ գունդը: Մա- սուկը նայում էր վեր, քաց աչքով ու չէր թարթում. հայելը ա- րագութամբ ձիռքը տարաւ բերեց նրա աչքերի առաջ, երեխան ընաւ չթարթեց. մատը շիշտակի մեկնեց գեպի բբերը մի քանի բնաւ չեղանակի կոպերը մնացին անշարժ, քարացած, երեխան անգամ, դարձեալ կոպերը մնացին անշարժ, քարացած, երեխան ոչինչ չէր զգում, չէր տեսնում. այն սև սքանչելի թերթերունք- ները, որոնք թաթուլի գողարիկ երազների ու յուշերի հետ էին խաղացել, այժմ քարացած մուգ փրփրի պէս եղերում էին այս զոյտ մեռած լճակները, ուր իշխում էր յաւիտենական գիշերը, որ այլև երբէք, երբէք չպիտի յուղուէր գեղանի թարթիչների հմայիչ հովհարումով:

Զէ կարելի տեսնել և չհիանալ այդ առողջ, կենդանի մըշ- տագուարթ ժողովրդով: Նա երբէք չէ թառամում, որպէս իր ծը- մակների մշտականաչ կիպարիսը: Նա երբէք չէ ծերանում, որպէս թառուաների գարեւոր եղենին: Հզօր կուրծքը մերկ, զօրաւոր բազուկները հոլանի, զլխին թաղիքեայ կոնածե քոլոզը զրած և բազուկները հոլանի, զլխին թաղիքոյն թաղիքնակներ փաթաթած, որոնց ծայրերը ուկեզոյն մազերի գիսակների հետ թափում են լայն թիկունքի հագին, հագին մի կարճ քաղախայ (բաճկոնակ)...— դուք կտեսնէք զրայիշը

Ոշտունեաց լեռների այս զաւակին, որ երկայն նիզակ ձեռքին թեթև վագրի նման անցնում է մի ապառաժից դէպի միւսը:

ԱՐՏՈՒՂԻ ԽՈՆԱՐՀՈՒԹ¹⁾

Արտուղի (անկանոն) խոնարհում ունին սակաւաթիւ բայեր, որոնք խոնարհուելիս շեղում են մեզ յայտնի կանոններից: Ստորև այբբենական կարգով առաջ ենք բերում այդ բայերի խոնարհումը:

§ 107: Անել, անց. կատ. ածեցի, ածեցիր, ածեց. ածեցինք ևն, և ածի, ածիր, ածաւ. ածինք, ածիք և այն: Հրամ. բուն՝ ածա, ածէք (սակաւ ածիր, ածեցէք): Միւս ձեռը կանոնաւոր են (օր. հրամ. արդ. մի ածիր, մի ածէք. Սահմ. անց. անկ. ածում էի, ածում էիր ևն. ապան. կ'ածեմ, կ'ածես ևն. դեր. ածել եմ, ածած եմ, ածելու եմ. բայած. ածող. ածած):

§ 108: Անել, անց. կատ. արի, արիր, արաւ. արինք, արիք, արին և արեցի, արեցիր, արեց ևն: Հրամ. բուն՝ արա, արէք: Միւս ձեռը կանոնաւոր են (օր. հրամ. արգել. մի անիր, մի անէք. սահմ. անց. անկ. անում էի, անում էիր ևն. սահմ. ապան. կ'անեմ, կ'անես ևն. դեր. կատ. արել եմ, արած եմ. դեր. ապ. անելու. բայած. ներկ. անող, անց. արած): Պէտք է նկատել «Աստուած մի արասցէ (=Աստուած չանէ) դարձուածքը»:

§ 109: Անցնել, I. անցնել կամ անցնիլ (գրաբ. անցանել) անց. կատ. անցայ, անցար, անցաւ. անցանք, անցաք, անցան. հրամ. անցիր, անցէք: Կազմել միւս ձեռը: II. (գրաբ. անցուցանել) անց. կատ. անցըի, անցըիր, անցըից (զարհուրելի գիշեր անցըից: Տես Ահարոն. Մոխ. տակից, եր. 19). անցըինք, անցըիք, անցըին. հրամ. անցըն, ան-

ցըէք. դերը. կատ. անցըել, անցըած (եմ, ես...). բայած. ներկ. անցնող. անց. անցըած: Կազմել միւս ձեռը:

§ 110: Անել, անց. կատ. առայ, առար, առաւ. առանք, առաք, առան: Հրամ. առ, առէք: Կազմել միւս ձեռը:

§ 111 Ասել, անց. կատ. ասեցի, ասեցիր, ասեց. ասեցինք, ասեցիք, ասեցին (աւելի յաճախ. ասացի, ասացիր, ասացինք, ասացիք, ասացին): և ասի, ասիր, ասաւ. ասինք, ասիք, ասին: Հրամ. ասա, ասացէք.

Կազմել սրա մնացած բոլոր ձեռը:

§ 112: (Արժել), սահմ. ներկ. և անց. անկ. գրաբառաբար. արժեմ, արժես, արժէ. արժենք, արժէք, արժեն. արժէի, արժէիր ևն: Միւս ձեռը լրացնում է արժենալ բայը. անց. կատ. արժեցայ, արժեցար ևն. հրամ. արժեցի, արժեցէք: Կազմել միւս ձեռը:

§ 113: Բերել, անց. կատ. բերի, բերիր, բերաւ (ոմկ. էրեր). բերինք, բերիք, բերին կամ բերեցի, բերեցիր, բերեց. բերեցինք, բերեցիք, բերեցին. հրամ. բեր, բերէք: Կազմել միւս ձեռը:

ԴԻՆՈՂ. Մտաբերել, մակաբերել ևն բարդ բայերն ունին սովորաբար միայն երկրորդ ձեռ. մտաբերեցի, մտաբերեցիր ևն. հրամ. մտաբերի, մտաբերեցէք ևն:

§ 114: Գալ, սահմ. ներկ. գալիս եմ, գալիս ես, գալիս է. գալիս ենք, գալիս էք, գալիս են: Անց. անկատ. գալիս էի, գալիս էիր ևն: Անց. կատ. եկայ, եկար, եկաւ. եկանք, եկաք, եկան. հրամ. եկ (կամ արի), եկէք: Կազմել միւս ձեռը:

ԴԻՏՈՂ. Սահմանականի ներկան և անց. անկատարը նոյն եղանակով կազմում են նոյնպէս լալ և տալ բայերը. լալիս եմ, լալիս ես, լալիս է. լալիս ենք ևն: Տալիս եմ, տալիս ես ևն: Ուրեմն այս երեք միավանկ բայերը սահմ. եղ. ներկան և անցեալ անկատարը կազմում են ոչ թէ ում -ով վերջացող բայածի, այլ անկատար դերբայի օգնութեամբ:

1) Разноспряженie.

§ 115: (Գիտել) խոնարհւում է գրաբառաբար. սահմ. ներկ. գիտեմ, գիտես, գիտէ. գիտենք, գիտէք, գիտեն: Անց. անկ. գիտէի, գիտէիր, գիտէր. գիտէնք, գիտէիք, գիտէին: Անց. կատ. պիտի լինէր գիտեցայ, շիտեցար են, բայց անգործական է: Անց. կատարեալը լրացնում է իմանալ բայը: Դերբ. կատար., բայած, գիտեցած: Միւս ձեերը չունի, անորոշ եղանակն էլ անգործածական է: ՏԵս ստորև գիտենալ:

ԴԻԾՈՂ. Ռամկաբար ասում են նաև՝ չեմ գիտում, չես գիտում են (փոխն. չգիտեմ, չգիտես են):

§ 116: Գիտենալ սահմ. ներկայ և անց. անկ. չունի. պայմ. ներկ. կամ ապ. գիտենամ, գիտենաս, գիտենայ. գիտենանք, գիտենաք, գիտենան. պայմ. անց. անկ. կամ ապ. գիտենայի, գիտենայիր, գիտենար. գիտենայինք, գիտենայիք գիտենային: Անց. կատ. չունի: Հրամ. արդ. մի գիտենար, մի գիտենաք. գերբ. անորոշ՝ գիտենալով:

§ 117: Դառնալ, անց. կատ. դարձայ, դարձար, դարձաւ, դարձանք, դարձաք, դարձան և ռամկաբար դառայ, դառար, դառաւ. դառանք, դառաք, դառան: Հրամ. դարձէր. դարձէք: Կազմել միւս ձեերը:

§ 118: Դնել, անց. կատ. դրի, դրիր, դրաւ. դրինք, դրիք, դրին կամ դրեցի, դրեցիր, դրեց. դրեցինք, դրեցիք, դրեցին: Հրամ. դիր, դրէք (դրեցէք): Կրաւ. դրուել, և դնուել: Կազմել միւս ձեերը:

§ 119: Ելնել, անց. կատ. ելայ, ելար, ելաւ, ելանք, ելաք են: Հրամ. ել, ելէք:

§ 120: Թողնել, անց. կատ. թողի, թողիր, թողեց (ռմկ. էթող). թողինք, թողիք, թողին կամ թողեցի, թողեցիր, թողեց. թողեցինք, թողեցիք, թողեցին: Հրամ. թնդ, թողէք: Կրաւ. թողնուել: Կազմել միւս ձեերը:

§ 121: Լալ, սահմ. ներկ. և անց. անկ. տես վերև § 114, գիտող. անց. կատ. լացի, լացիր, լացեց. լացինք,

լացիք, լացին, և կամ լացեցի, լացեցիր, լացեց. լացեցինք, լացեցիք, լացեցին (սակաւ՝ լացայ, լացար են): Հրամ. լացիր, լացէք: Դերբ. կատ. լացիւ, լացած: Կրաւ. լացուել: Բայած. ներկ. լացող, անց. լացած: Կազմել միւս ձեերը:

§ 122: Լինել, սահմ. ներկ. և անց. անկ. կամոնաւոր է. լինում եմ, լինում ես են. լինում էի, լինում էիր են: Անց. կատ. եղայ, եղար, եղաւ. եղանք, եղաք, եղան. հրամ. եղիր, եղէք: Կազմել միւս ձեերը:

§ 123: Լուսնալ, անց. կատ. լուացի, լուացիր, լուաց. լուացինք, լուացիք, լուացին. հրամ. լուած, լուացէք: Կրաւ. լուացուել: Կազմել միւս ձեերը:

§ 124: Խնդրել, սահմ. ներկ. առաջին դէմք՝ խնդրում եւ և գրաբառաբար խնդրեմ: Միւս ձեերը կամոնաւոր են, օր. խնդրում ես, խնդրում է, խնդրում ենք են:

§ 125: Ժնել, անց. կատ. ժնեցի և գրաբ. ժնայ:

§ 126: (Կալ), սահմ. ներկ. կամ, կաս, կայ, կանք, կապ, կան. անց. անկ. կայի, կայիր, կար. կայինք, կայիք, կային: Անց. կատ. կացայ, կացար, կացաւ. կացանք, կացաք, կացան: Հրամ. կաց. կոցէք: Հրամ. արդ. չունի: Դերբ. կատ. կացել, կացած: Բայած. ներկ. կացող, անց. կացած: Միւս գերբայերն և բայածականները պակասում են: Մնացած ձեերը կամոնաւոր են:

§ 127: Կալնել, կալնով, անց. կատ. կալայ, կալար, կալաւ. կալանք են. հրամ. կալ, կալէք: Կրաւ. կալնուել: Կազմել միւս ձեերը:

§ 128: Կարաւ սահմ. ներկ. կարամ, կարաս, կարայ. կարանք են: Անց. կատ. կամոնաւոր է. կարացի, կարացիք, կարացիր են: Հրամ. չունի: Այլ բայ է կարել:

§ 129: Կարծել, ներկ. առաջին դէմք՝ կարծում եմ և գրաբառաբար կարծեմ: Միւս ձեերը կամոնաւոր են, կարծում ես, կարծում է, կարծում ենք, կարծում էք են.

§ 130: (Կարել), կարենալ: Վերջին բայից գործածական է միայն պայմանական եղանակը: Ապառնի: կարենամ, կարենաս և լն. անց. անկ. կարենայի, կարենայիր ևն: Առաջին բայից սահմ. ներկ. կարում եմ, կարում ես ևն: Սահմ. անց. անկ. կարում էի, կարում էիր ևն:

§ 131: կենալ, անց. կատ. կեցայ, կեցար, կեցաւ. կեցանք, կեցաք, կեցան: Հրամ. կեցիր, կեցէք: Դերբ. անց. կեցել, կեցած. բայած. ներկ. կենող և կեցող. անց. կեցած: Կազմել միւս ձեւերը:

ԴԻՏՈՂ. Վեր կենալ սուս կենալ, զգոյշ կենալ ևն. բաղադրեալ բայերի անց. կատարեալը յաճախ լինում է. վեր կացայ, սուս կացայ ևն: Հրամայականը. վեր կաց, սուս կաց ևն:

§ 132 Յուսալ, սահմ. ներկ. գրաբառաբար. յուսամ, յուսաս, յուսայ. յուսանք, յուսաք, յուսան: Անց. անկ, չունի: Անց. կատ. կանոնաւոր է. յուսացի, յուսացիր ևն:

§ 133 Նստել, անց. կատ. նստեցի, նստեցիր, նստեց ևն. և նստայ, նստար, նստաւ. ևն.

§ 134 Ուզել և ուզենալ, առաջին բայը կանոնաւոր է, իսկ երկրորդը սահմ. ներկայ չունի. անց. կատ. ուզեցի (ուզել բայից), և ուզեցայ (ուզենալ բայից):

§ 135 Ունիլ, ունել սահմ. ներկ. և անց. անկ. գրաբառաբար. ունիմ, ունիս, ունի. ունինք, ունիք, ունին. անկ. ունէի, ունէիր, ունէր. ունէինք, ունէիք, ունէին: Միւս ձեւերն այս բայը չունի: Սրան պակասող ձեւերը լրացնում է ունենալ բայը, որ կանոնաւոր կերպով խոնարհում է ըստ ենա խոնարհման, օր. անց. կատ. ունեցայ, ունեցար ևն:

§ 136 Ուտել, անց. կատ. կերայ, կերար, կերաւ. կերանք, կերաք, կերան: Հրամ. կեր, կերէք: Կրաւ. ուտուել: Կազմել միւս ձեւերը:

§ 137 Սկսել, անց. կատ. սկսեցի, սկսեցիր, սկսեց ևն. և սկսայ, սկսար, սկսաւ ևն.

138 Տալ, սահմ. ներկ. և անց. անկ. տես 114 դիտող. անց. կատ. տուի, տուիր, տոււաւ (ոմկ. էրետ). տուինք, տուիք, տուին, կամ տուեցի, տուեցիր, տուեց, տուեցինք, տուեցիք, տուեցին: Հրամ. տուէք, դերբ. կատ. տուել, տոււած. բայած. ներկ. տուող. անց. տոււած: Կրաւ. տրուել:

§ 139 Ցենել, անց. կատ. տարայ, տարար, տարաւ. տարանք, տարաք, տարան: Հրամ. տար, տարէք. Կրաւ. տարուել: Կազմել միւս ձեւերը:

§ 140 Ցեսնել, անց. կատ. տեսայ, տեսար, տեսաւ. ևն. Հրամ. տես, տեսէք. կը. տեսնուել: Կազմել միւս ձեւերը:

§ 141 Ցանկալ, սահմ. ներկ. գրաբառաբար. ցանկամ ցանկաս, ցանկայ. ցանկանք ցանկաք ևն. Սահմ. անց. անկատարը գործածական չէ: Այս ժամանակը մեզ տալիս է ցանկանալ բայը, որ բոլոր ժամանակներն էլ ունի: սահմ. ներկ. ցանկանում եմ, ցանկանում ես ևն. անց. անկ. ցանկանում էի, ցանկանում էիր ևն. անցեալ կատ. ցանկացի (ցանկալ բայից) և ցանկացայ (ցանկանալ բայից):

§ 142 Վերջապէս կան մի շարք գրաբառ բայեր, որոնցից սովորաբար միայն անորոշ եղանակն է գործ ածւում աշխարհաբառում: իսկ մնացած ձեւերի համար աշխարհաբառն ունի յատուկ բայեր: Այս բայերիցն են՝ բանալ (աշխ. բացել), թանալ (աշխ. թացել), մարտնչել (աշխ. կոռուել), փոլթալ (աշխ. շտապել), բառնալ (աշխ. վերցնել), համբառնալ, ամբառնալ ևն: Վերջին երեք բայերը գրաբառում թէ ներգործական և թէ չէզոք նշանակութիւն ունին: Աշխարհաբառում գործ են ածւում չէզոք նշանակութեամբ, օր. Արշակունեաց հարստութիւնը բարձաւ 426 թւին. Քրիստոս երկինք համբարձաւ ևն:

ԲԱՂԱԴՐԵԱԼ ԲԱՅԵՐ ԵՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

143: Տալ, գալ, գնալ, ընկնել, մտնել, ածել, տա-

նել, բերել և ուրիշ բազմաթիւ պարզ բայերից գոյականի և ուրիշ բանամասերի կապակցութեամբ կազմւում են բաղադրեալ բայերը։ Օր. լոյս տալ (լուսաւորել), պար գալ (պարել), կուլ տալ (կլանել), մօտ գալ (մօտենալ) են։

Բաղադրեալ բայերը խոնարհուում են պարզ բայերի պէս, միայն թէ ներկայում և անցեալ անկատարում էական լծորդն իր տեղը փոխում է։ Օր. «տալիս եմ, տալիս ես, տալիս է» են։ բայց «լոյս եմ տալիս, լոյս ես տալիս, լոյս է տալիս» են։ «տալիս էի, տալիս էիր, տալիս էր» և «լոյս էի տալիս, լոյս էիր տալիս, լոյս էր տալիս» են։

§ 144 Բայերի խոնարհման աղիւսակում (§100) մենք ծանօթացանք բայերի պարզ ժամանակների հետ։ Պարզ ժամանակներից դերբայերի և էական բայերի լծորդութեամբ կազմւում են բաղադրեալ ժամանակները, ինչպէս այդ երեսում է հետեւեալ օրինակներից։

Ա. ն ց ե ա լ ա ն կ ա տ ա ր

պարզ	բաղադրեալ
հանում էի	հանում* եմ եղել
հանում էիր	հանում* ես եղել
հանում էր ելն։	հանում* է եղել ելն։

Ա. ն ց ե ա լ կ ա տ ա ր ե ա լ

պարզ	բաղադրեալ
հանեցի	հանել եմ
հանեցիր	հանել ես
հանեց ելն։	հանել է ելն։

*.) Ասում են նաև «հանելիս եմ եղել», «հանելիս ես եղել», «հանելիս է եղել» ելն։

Ա պ ա ռ ն ի

Պարզ

կը հանեմ 1, հանելու եմ 2, հանում** կը լինիմ 3, հանած կը լինիմ կը հանես հանելու հս հանում** կը լինիս հանած կը լինիս կը հանէ ելն հանելու է ելն հանում** կը լինի հանած կը լինի

ԽՆԴԻԲ. Կազմել միւս խոնարհումների բաղադրեալ ժամանակները։

Մ Ա Կ Բ Ա Յ 1)

§ 145, ա) Ես (Երբ) եղէկ աշխատում էի, իսկ (Երբ) այսօր հանգստանում եմ։ Հիմա (Երբ) ես զբաղուած եմ, իսկ (Երբ) վաղն ազատ կը լինիմ։ Նա (Երբ) առաջ լաւ էր, իսկ (Երբ) այժմ՝ հիւանդացել է։ Նախ լսիր, ապա պատասխանիր։ Նա (Երբ) վաղոց է պատկուել, իսկ նրա եղայրը (Երբ) նորերս պատկուեց։

բ) Այստեղ (սրտեղ, սւը) մարդիկ լալիս, իսկ այստեղ (սրտեղ, սւը) ծիծաղում են, լուրսը (սւը) ցուրտ է, իսկ ներսը (սւը) տաք է։

գ) Նա քեզ հետ խօսում է (ի՞նչպէս) բարեկամնաբար, իսկ գու նրան պատասխանում ես (ի՞նչպէս) թշնամաբար։ Չիւն է գալիս (ի՞նչպէս) փաթիլ-փաթիլ, անձըն է գալիս (ի՞նչպէս) կաթիլ-կաթիլ։ Նա քեզ հետ (ի՞նչպէս) լաւ, իսկ ինձ հետ (ի՞նչպէս) վատ վարուեց։ Քոյրն եղօրը (ի՞նչ աստիճանի, ի՞նչպէս) սաստիկ սիրում է, իսկ եղբայրը քրոջը (ի՞նչ աստ., ի՞նչպէս) սաստիկ տառում է։

դ) Սաստիկ (ի՞նչ աստիճանի) ագան և սաստիկ (ի՞նչ աստիճանի) շուայլ մարդիկ (ի՞նչպէս) հաւասարապէս գժբախտ են։ Նա շատ (ի՞նչ աստիճանի) խելօք և շատ (ի՞նչ աստ.)

*) Ասում են նաև «հանելիս կը լինիմ, հանելիս կը լինիս, հանելիս կը լինի» և այլն։

1) Նարքու։

աշխատասէր մարդ է, իսկ նրա եղբայրն նրանից (ի՞նչ ասու.) աւելի խելօք և աւելի աշխատասէր է:

Ի՞նչ իմաստ են արտայայտում վերոյիշեալ նախադասութիւնների մէջ ստորագծած բառերը: Ի՞նչ բանամասերի հետ են միանում նրանք իմաստով և ի՞նչ հարցերով են ձանաչւում:

§ 146 Վերոյիշեալ նախադասութիւնների մէջ ստորագծած բառերը կոչւում են մակրայը բանամասէ, որը իմաստով միանալով միամասութիւնների մէջ ամսականի հետ, ցոյց է տալիս գործողութեան եղանակ, ժամանակ, տեղ, յատկութեան կամ որակի չափ կամ աստիճանն և ձանաշւում է Երբ, որտեղ, ի՞նչպէս, ի՞նչքան, ի՞նչ աստիճանի հարցերով:

§ 147 Նա (ի՞նչպիսի) լաւ մարդ է: Նա քեզ հետ (ի՞նչպէս) լաւ վարուեց: Նա (ի՞նչպիսի) վատ մարդ է: Նա քեզ հետ (ի՞նչպէս) վատ վարուեց: Միաձայն (ի՞նչպիսի) երգեցողութիւնն այնքան ժողովուրդ չէ գրաւում, որքան (ի՞նչպիսի) քառածայնը, Փողովը նրան (ի՞նչպէս) միաձայն նախադան ընտրեց: Ինձ մօտ կանգնած (ո՞ր) մարզը հեռացաւ: Նա այդ թուղթը կանգնած (ի՞նչպէս) գրեց: Նա (ի՞նչպիսի) նոր մարդ է: Նա (Երբ) նոր է եկել:

Ի՞նչ բանամասերի հետ են միացել լաւ, վատ, միաձայն, քառածայն, կանգնած, նոր բառերը այս նախադասութիւնների մէջ:

Բազմաթիւ ածականներ անփոփոխ կերպով գործ են ածւում իբրև մակրայեր: Իբրև ածականներ նրանք իմաստով միանում են գոյականի հետ և ձանաչւում են ի՞նչպիսի հարցով (լաւ, վատ մարդ, կանգնած մարդ, միաձայն, քառածայն երգեցողութիւն): Իսկ իբրև մակրայեր նրանք իմաստով միանում են բայի և ածականի հետ և ձանաչւում են ի՞նչպիսի հարցով (լաւ, վատ վարուել, միաձայն, քառածայն երգել, կանգնած գրել):

Դիմում. 1: Աստիճանական ածականներն (§ 69) իբրև մակրայ

գործ ածւելով կարող են ունենալ համեմատութեան աստիճաններ, օր. նա քեզ հետ վատ, իսկ ինձ հետ աւելի վատ վարուեց:

Դիմում. 2: Սակայն բոլոր ածականներն էլ անփոփոխ կերպով իբրև մակրայեր գործ ածւել չեն կարող: Շատերը նրանցից մակրայօրէն գործ ածւելիս միանում են կերպ, նղանակ գոյականների գործիական հոլովի հետ, օր. «նա պատշաճաւոր պատասխան տուեց» և «նա պատշաճաւոր կերպով (եղանակով) պատասխանեց»: Նա լորին երիտասարդ է» և «նա խոհեմ՝ կերպով (եղանակով) պատասխանեց իր հակառակորդին»:

Ի՞նչի՞ր, Որոշել ստորև առաջ բերած հատուածում բոլոր մակրայերն և ածականները: Զմոռանալ, որ մակրայը իմաստով միանում է բայի կամ ածականի հետ, իսկ ածականը՝ գոյականի հետ:

Բարիկը մի քանի անգամ փորձեց համոզել հօրը, որ իրան տանի հետը, ուր և լինի, հայրը չնասկացաւ, ու երեխան դարձեալ մնաց լքուած, վշտարեկ սրտով, մենակ մատնուած խորթ մօր կապոյտ աչքերի փայլին, որոնք հալածում էին նրան:

Բարիկը մաշտում էր, գունատում, նրա փոքրիկ հոգին մխում էր լսելեայն և զգում էր, ի՞նչպէս մի ահագին աղէտ քայլ առ քայլ մօտենում է...

Մի օր երեկոյեան, երբ արդէն մութը կոփել էլ աշխարհը ու նա տուն գարձաւ, իրենց բակում մօր հետ կանգնած խաւարանկիւնում մի մարդ տեսաւ, մի փոքրիկ, նիհար մարդ, որ հագին չուխայ ունէր, արծաթապատ խէնջար, սպիտակ մորթէ գլխարկ, երկարավիզ կօշիկներ: Բարիկը կանգ առաւ քարացած ու նայում էր. մարզը վայրկինապէս ծածկուեց կատուի զգուշութեամբ, մինչդեռ շունը կատաղօրէն ձգձգում էր շղթաները, ծառանում էր պուկուելու համար դէպի անծանօթը:

ՆԱԽԳԻՐ ԵՒ ՅԵՏԳԻՐ¹⁾

§ 148, ա) Բողոք առ Եւրոպա: Նա եկաւ մինչեւ տուն: Յայտարարել, ի գիտութիւն հասարակութեան: Մենք զընում էինք լէպի այգին: Առանց կրակի չէ կարելի կերա-

1) Предлогъ и послѣдлогъ

կուր եփել։ Բոլոր հիւրեղն եկել էին, բացի մէկից։ Ըստ
իսկ այդ սխալ է, ըստ քեզ—ոչ։ Ըստ երեսյթին այդպէս է։

բ) Գիրքը սեղանի վերայ է: Նա մեղքն ինձ վերայ է ձգում: Մերունին պատանու հետ զբանում էր: Մեր տունը եկեղեցու մօտ է: Մայրն աղջկայ համար շոր է կարել:

Ի՞նչ բանամասեր են առ, մինչեւ, դէպի, առանց, բացի,
ըստ, վերայ, հետ, մօտ, համար բառերը: Ունին նրանք առան-
ձին վերցրած սեպհական նշանակութիւն, թէ ոչ:

§ 149. Կան բառեր, որոնք առանձին վերցրած նշանակութիւն չունին, սակայն նախադասութեան մէջ գործ ածուելիս իրենցից առաջ կամ յետոյ պահանջում են անպատճառ որևէ է հոլով և ցոյց են տալիս նախադասութեան անդամների փոխադարձ յարաբերութիւնը միմեանց հետ։ Այդպիսի բառերը կոչւում են նախդիրներ կամ յետղիրներ։ Նախդիրներ կոչւում են նրանք, որոնք իրենց պահանջած հոլովից առաջ են դրւում, օր. բողոք առ Եւրոպա. իսկ յետղիրներ նրանք, որոնք իրենց պահանջած հոլովից յետոյ են դրւում, օր. գիրքը սեղանի վերայ է։

Դիմումը, 1. Նախդիրները պահանջում են հայցական հոլով. Բացառութիւն կազմում են առանց, բացի և ըստ նախդիրները, որոնցից առաջինը պահանջում է սեռական, երկրորդը բացառական, իսկ երրորդը արական հոլով: Եթէ առաջին նախդիրի պահանջած հոլովը անձնական գերանուն է, վերջինս գրւում է տրական հոլովով, օր. առանց հացի, բայց առանց ընկ, առանց ինձ (և ոչ թէ առանց քո, առանց իմ):

Դիմուլ. 2: Յետքիրները պահանջում են սեռական հոլով, օր. սեղանի վերայ, սեղանի տակ, սեղանի առաջ և ին. ծծոլականը տեղակի մէջ է. խօսքը նրա մասին է են: Միայն պէտք է նկատել, որ առաջին և երկրորդ դէմքի անձնական գերանուն-ները իբրև խնդիր յետքիրների դրւում են և սեռական, և տրա-կան հոլովով, այնինչ երբորդ դէմքի անձնական գերանունը դըր-ւում է միմիայն սեռական հոլովով: Այսպէս ասում են, ինձ մօտ և իմ մօտ, ընդ մօտ և ըստ մօտ, բայց նրա մօտ, ըստ դէմ և ընդ դէմ, ծեր դէմ և ծեր դէմ. բայց նրա դէմ են.

Բացառութիւն կազմում են առաջ և յետոյ յետդիրները:
Երբ խօսքը տեղի մասին է, առաջ յետդիրը պահանջում է
սեռական հոլով, օր. աթոռը դրած է սեղանի առաջ: Իսկ երբ
խօսքը ժամանակի մասին է, նոյն յետդիրը պահանջում է բացա-
ռական հոլով, օր. սեղանից առաջ աթոռները գուրս տարան: Այդ
դէպքից յետոյ նրան չեմ տեսել:

Սակայն այս յետպիհներն իբրև մակրայեր եւ գործ են
ածւում, օր, ես նրան տեսայ երկու օր առաջ: Մի շաբաթ յետոյ
ես գիւղ պիտի զնամ:

Դիմութիւնների և յետպիրների մէջ կայ այն տարբերութիւնը, որ առաջինները փոփոխւում (հոլովում) են, իսկ եղանակը—ոչ. օք. գիրքը սեղանի վերայ է: Սեղանի վերայի գիրքն իմն է. գիրքը սեղանի վերայից վերցրի: Մենք անցնում էինք գիրզի մօտից կամ գիրզի մօտով են.

ԴԻԾՈՂ, 4: ԱՆՃՆԱԿԱՆ ՊԵՐԱՆՈՒՆԿԵՐԸ ԻՐԵԿ ԽՆԳԻԲՆԵՐ ՅԵՄ-
ՊԵՐՆԵՐԸ յաճախ փոխարինուում հետ գիմորոշ յօդերով, օր. հետի
(=պեղ հետ, քո հետ) ո՞վ եկաւ. հետներոյ (==ձեր հետ, ձեզ հետ)
մվրեր եկան: Վերադառնք, հետներս (==մեղ հետ, մեր հետ)
բերելով շատ գրքեր: Այդ երգը վրաս (==ինձ վրայ, իմ վրայ)
տխոսոթեն է բերում և այն:

ինդիք: Արոշել ստորև առաջ բերած հատուածներում պատահող նախդիրները, յետիիրները և իրենց պահանջած հոլովները:

Փողոց երկար էր, գալարում վիշապի պէս ձգում-թագում
էր ընդարձակ գաշտերի մէջ. Հեռում աղջիկների մի խումբ էր
երեսում, որոնք շտապում էին դէպի բամբակի արաերը: Նրանց
յետեկից թաթուլին աւելի մօտ, գնում էր մի կիս—Սօնան, որի
ամուսինը երկու տարի առաջ զոհ էր գնացել աւազակների գեն-
դակին: Այնուհետև Սօնան դարձել էր հէրանց և ապրում էր իր
մօր մօտ...

Նա քայլում էր առանց յետ և այլու և ըստ երսոյթիս աչ-
խառում էր համակարգութիւն...

Թաթուլը շարունակում էր աւելի և աւելի ուշազբը սայսու կնոջ թիկունքին, նրա հարուստ զստերին, որոնց վրայ ծփում էր հսամաշ շրջազգեստը... Թաթուլն սկսում էր ինքն իրեն չարաշալ իր այդ հետաքրքրութեան համար...

Եթ օր յի ոսոյ Թաթուլն եկաւ. օջախի աւելածը կատարուալ

էր... Բարիկին թողեց Ասրհատի մօտ, բակը մտաւ Գասպարին հետ, լուս նստեց թթենու տակ...

Զին կանգնած էր քիչ հեռու, երկու ընկելները սակայն անուշադիր էին դէպի նրան:

Ը Ս Ղ Կ Ա Պ¹⁾

§ 150. Մատիտն եւ գրիչը սեղանի վերայ են: Քոյր ու եղբայր գնացին ուսումնարան: Ես կարդում եմ, իսկ դու գրում ես:

Ի՞նչ բանամասեր են եւ, ու, իսկ բառերը: Ունին նրանք առանձին վերցրած նշակութիւն, թէ ոչ:

Վերև ստորագծած բառերը. եւ, ու, իսկ կոչւում են շաղկապներ: Նրանք առանձին վերցրած նշանակութիւն չունին, սակայն նախադասութեան մէջ շաղկապում՝ են միմեանց հետ վերջինիս համանման անդամները: Նրանք կարող են միմեանց հետ շաղկապել նաև ամբողջ նախադասութիւններ: Ահա մի քանի շաղկապներ ես. որ, եթէ, թէստ, իսկ, էլ, այլ, բայց, սակայն, արդ, թէ, ես (=ե+այս), նաեւ (=նա+ե), թէեւ (=թէ+ե), որովհետեւ ելն.

151. Մակրայը շաղկապի նշանակութիւն ունի, երբ մի նախադասութիւն կապում է միւսի հետ, օր. «դու ե՞րբ եկար ինձ մօտ» և «երբ դու ինձ մօտ գաս, այն ժամանակ ամէն բան կիմանաս»: Առաջին նախադասութեան մէջ երբ մակրայ է, իսկ երկրորդի մէջ— շաղկապ:

ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԶԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ²⁾

§ 152. Մենք ծանօթացանք ութ բանամասերի հետ, որոնցից չորսը անուններ էին (զոյական անուն, ածա-

կան անուն, թւական անուն և դերանուն), հինգերորդը բայն էր, վեցերորդը մակեայը, եօթներորդը նախդիրը կամ յետդիրը, իսկ ութերորդը շաղկապը:

Կայ և մի իններորդ բանամաս, որը կոչւում է միջարկութիւն կամ ձայնարկութիւն: Միջարկութիւնները բացականչութիւններ են, որոնք արտայայտում են զանազան զգացմունքներ. վիշտ, տրտմութիւն, սրտնեղութիւն (օր. ախ, էհ, աւաղ, վաշ, ծփ, ոհ, վայ, ափսոս), երկիւղ (այ, էյ, օյ), զարմանք (վայ, վույ, օհօ), ցակութիւն (երանիթէ, էլոնէկ), ոչը գուրգուրանք (օր. ես քեզ սմասաղ, հոգի ջան, քեզ զուրբան), զայրոյթ (օր. անկցի, թռւհ) են.

1) Союзъ.

2) Междометие.

ՅԱԽԵԼՈՒԱԾ

Վերլուծութեան օրինակ

ՕՐՈՐՈՅԻ ԵՐԳ

Արի, իմ սոխակ, թող պարտէզ, մէրին,
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.
Բայց նա լալիս է, դու, սոխակ, մի գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Եկ, արեղաձագ, թող արտ ու արօտ,
Օրօրէ տըղիս, քընի է կարօտ.
Բայց նա լալիս է, դու, ձագնալ, մի գալ,
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ:

Թող դու, տատրակիլ, քու ձագն ու բունը,
Վուվույով տըղիս բեր անուշ քունը.
Բայց նա լալիս է, տատրակիլ, մի գալ,
Իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ:

Կաչաղակ ճարպիկ, գող, արծաթասէր,
Շահի զրուցով որդուս քունը բեր.
Բայց նա լասիս է, կաչաղակ, մի գալ,
Իմ որդին չուզէ սովորաքար դառնալ:

Թող որսըդ, արի, քաջասիրտ բազէ,
Քու երգը գուցէ իմ որդին կ'ուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լոեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ:

Վերլուծել արևէ ոտանաւոր կամ ուրիշ զրական գործ
նշանակում է բացատրել նրանց բովանդակութիւնն և այն
քերականական կանոնները, որոնցով նրանք գրուած են:

Վերև առաջ բերած ոտանաւորի մէջ բանաստեղծը
հինգ այլաբանական պատկերներով բացատրում է օրօրոցի
մանկան ապագայ կոչումը: Մանուկը լալիս է, ուստին
մայրը կարգով կանչում է սոխակին, արեղաձագին (ար-
տուտին), տատրակիկին և կաչաղակին, որպէսզի սրանցից
առաջին երկուսն իրենց քաղցր երգերով, երրորդն իր
թախծալից վուվույով, իսկ չորրորդն իր ճարպիկ շահասի-
րական զրոյցներով մանկան քունը բերին: Սակայն մա-
նուկն այս չորս թաչուններից էլ երես է գարձնում:

Այն ժամանակ մայրը կանչում է քաջասիրտ բազէին:
Երբ բազէն գալիս է, մանուկը լուսում և պատերազմական
երգերի ձայնով քնում է:

Վերոյիշեալ 5 թաշուններն այլաբանօրէն ներկայաց-
նում են 5 գանազան կոչումների տէր մարդկանց. աշ-
խարհիկ հոգևորականին (սոխակ), կուսակրօն արեղային
(արեղաձագ), լալկան սգաւորին (տատրակիկ), ճարպիկ
առևտրականին (կաչաղակ) և քաջ զինուորին (բազէ): Սրան-
ցից միմիայն վերջինս, քաջասիրտ բազէն է դուք գալիս
մանկանը, որը չցանկանալով դառնալ ոչ հոգեորական, ոչ
լալկան սգաւոր և ոչ էլ առևտրական, ուզում է քաջ զի-
նուոր դառնալ:

Պ ա տ կ ե ր ա ս ս ա ջ ի ն

Առաջին նախադասութիւնն է. «Արի, իմ սոխակ»: Սա
թէև պակասաւոր, սակայն ընդարձակ նախադասութիւն
է (ինչու, տ. § 12): Պակասաւոր է, որովհետեւ գլխաւոր ան-
դամներից մէկը (ենթական) պակասում է (պիտի լինէր.
«Արի դու, իմ սոխակ»: Ի՞նչ բանամաս է արի բառը. Ի՞նչ
սեփ բայ է նա. Ինչպէս է նրա անորոշ եղանակը (§ 114).
Ի՞նչ հոլով է իմ սոխակ (տ. § 21, դիտող): Կոչական հոլո-
վը միշտ ստորակէտների մէջ է առնւում: Ի՞նչ բանամասեր
են իմ սոխակ բառերը: Ինչպիսի՞ անուն է վերջինս. յա-

տոնել, թէ հասարակ (տ. § 19). որ հոլովման տակ է գնում սա:

Երկրորդ նախադասութիւնն է. «Ծո՞ղ պարտէզ, մէրին»: Ի՞նչ սեռի բայ է Ծո՞ղ. ինչպէս է նրա անորոշ եղանակը (§ 120). Ի՞նչ բանամասեր են պարտէզ, մէրի բառերը: Վերջին բառը գրաբառի մայրի բառն է, որ աշխարհաբառում դարձել է մէրի (տ. § 8, դիտող. 2): Ի՞նչ է նշանակում մէրի: Հոլովել այս բառը:

Երկրորդ նախադասութիւնն է. «տաղերով քոն ընթ տղիս աշերին»: Ի՞նչ հոլով է տաղերով, ի՞նչ թւով է: Ի՞նչ սեռի բայ է ընթ. ինչպէս է նրա անորոշ եղանակը (§ 113): Ի՞նչ հոլով է տղիս (տ. § 28, դիտող. 2): Ինչպէս է այս գոյականի յոգնակին (տ. § 29): Ի՞նչ հոլով է աշերին:

Չորրորդ նախադասութիւնն է. «Ծայց նա լալիս է»: Ի՞նչ բանամաս է բայց (տես § 150): Ի՞նչ բանամաս է լալ (§ 121): Ի՞նչ բանամաս է նա. հոլովել այս բառը:

Հինգերորդ նախադասութիւնն է. «ղու, սոխնակ, մի՛ զալ»: Ի՞նչ բանամաս է ղու, հոլովել այս բառը: Ի՞նչ եղանակ է մ'ի՛ զալ: Կարելի՞ է ասել. մ'ի՛ զար (§ 103 դիտող. 1): Ի՞նչ բանամաս է մ'ի՛:

Վեցերորդ նախադասութիւնն է. «իմ որդին չուզէ տիրացու ղանալ»: Ի՞նչ բանամաս է որդի. որ հոլովման տակ է գնում: Ինչպէս է այս գոյականի յոգնակի թիւը (§ 39): Ինչպիսի յօդ է ն (§ 8, 3, դիտող 1): Չուզէ=չէ ուզում: Ի՞նչ բանամաս է տիրացու բառը: Սա ինչպիսի բառ է. պարզ, բարդ, թէ ածանցաւոր: Խոսարհել ղանալ բայց (տ. § 117):

Պ ա տ կ ե ր ե ր կ ր ո ր դ

Առաջին նախադ. «Ե՛կ արեղածնալ», —պակասաւոր և համառօտ նախադասութիւնն է: Ի՞նչպէս կը ինի բայի անորոշ եղանակը (տ. § 114): Արեղածազը արտուտ երգեցիկ թոշունն է, որ անտառազուրկ գաշտերում և արօտներում է ապրում: Ինչպիսի բառ է սա. պարզ, թէ բարդ:

Երկրորդ նախադ. «Ծո՞ղ արտ ու արօտ» —պակասաւոր, բայց ընդարձակ նախադասութիւնն է (ինչու, տ. § 12). Ի՞նչ բանամաս է ու: Ի՞նչ հոլովներ են. արտ, արօտ: Սրանք նախադասութեան մէջ ինչպիսի անդամներ են. գլխաւոր, թէ խադասութեան մէջ ինչպիսի անդամներ են կոչւում արանք (տ. § 12): Երկրորդական. ինչ տեսակբառեր են կոչւում արանք (տ. § 12):

Երրորդ նախադ. «Օրօրէ տղիս», —պակասաւոր նախադասութիւնն է, որովհետեւ գլխաւոր անդամներից մէկը (մըրը) բաց է թողնուած (պիտի լինէր «օրօրէ ղու տղիս»): Ի՞նչպիսի նախադասութիւնն է. համառօտ, թէ ընդարձակ. ինչ հոլով է տղիս (§ 28 դիտող. 2). Ի՞նչ յօդ է ս (տ. § 21, 3, դիտող. 2): Կարելի՞ է ասել «Օրօրէ իմ տղին (տ. 83, 3, դիտող. 2):

Չորրեր. նախադ. «Քնի է կարօտ», —համառօտ պակասաւոր նախադասութիւնն է: Ի՞նչ հոլով է քնի (§ 21, 3, դիտող. 1): Ի՞նչպէս է այս գոյականի ուղղական հոլովը. քունը ինչու դարձել է քնի (տ. § 8, ա):

Հինգերորդ նախադ. է «Ծայց նա լալիս է», վեցերորդը «ղու, ծազն'մ, մի՛ զալ», որոնց մասին խօսել ենք: Ի՞նչպիսի ձեւ է ծազում (տ. § 18):

Պ ա տ կ ե ր ե ր կ ր ո ր դ

Շուաջին նախադ. «Ծո՞ղ ղու, տատրակի՛կ, քու ծազն ու քունը»: Ի՞նչպիսի նախադ. է սա. համառօտ, թէ ընդարձակ, պակասաւոր, թէ լրիւ: Ի՞նչ ձեւ է տատրակիկ (տ. § 18): Ի՞նչ բանամաս է քու: Արգեօք ունի քուն գոյականն աւելի հին ձեւ (տ. § 8, դիտող. 3):

Երկրորդ նախադ. «Վովույով տղիս ընթ անոշ քունը»: Ի՞նչպիսի նախադասութիւնն է. Ի՞նչ հոլով է վովույով, ի՞նչպէս կը լինի այս գոյականի ուղղական հոլովը: Սրա ուղղականն է վովույով, որն իմաստով միջարկութիւնն է (տ. § 152): Այսպիսի ձայնով է երգում տատրակը, որով և յիշրափի սպաւորի տպաւորութիւնն է գործում: Շեղ հոլովներում այս գոյականը ընդունել է յ թարմատարը (համեմատել § 28, դիտող. 1): Ի՞նչ հոլով է տղիս (տ. § 21, 3, դիտող. 2): Ի՞նչ բանամաս է անոշ բառը: Ի՞նչ բանամա-

մաս է սգաւոր: Ի՞նչպիսի՞ բառ է սա, պարզ, բարդ, թէ ածանցաւոր: Ո՞ր գոյականից է առաջ եկել այս ածականը (§ 8, ա):

Պ ա տ կ ե ր չ ո ր ը ո ր դ

Առաջիննախաղ. «կաշաղակ ճարպիկ, զող, արծաթասէր, շահի զրուցով որդուս քունը բե՛ր»:— Կաշաղակն այստեղ ճարպիկ առետրականի խորհրդանշանն է: Այս թռչունը շատ կայտառ և շատախօս է: Սիրում է փայլուն բաներ գողանալ և տանել իր բունը, որը շինում է բարձր ծառերի գագաթներին: Կաշաղակի ճուտը բռնուելով, շատ հեշտութեամբ ընտանենանում և սովորում է երգել ու խօսել:

Ի՞նչ բանամասեր են ճարպիկ, զող (տ. § 71), արծաթասէր: Ի՞նչպիսի՞ ածականներ են սրանք, աստիճանականն, թէ անսատիճան: Կազմել սրանց բաղդատական և գերազրական աստիճանները. Ի՞նչպիսի՞ բառ է վերջինս. պարզ, թէ բարդ: Ի՞նչ հոլով է զրուցով. Ի՞նչպէս է սրա ուղղականը. ինչո՞ւ ոյ երկբարբառն ու է դարձել (տ. § 8, գ). Ի՞նչ հոլով է որդուս: Սովորաբար նշանակում է վաճառական:

Պ ա տ կ ե ր հ ի ն գ ե ր ո ր դ

Առաջնախաղ. «Թնդ որսդ, (բազէ)». Երկր. նախ. «արի», բաջափրտ բա՛զէ»:— Բազէն իբրև քաջասիրտ, յափշտակող թռչուն պատերազմի խորհրդանշանն է: Հին ժամանակները բազէն կրթելով, որսալ էին տալիս ճագարներ, վայրենի սագեր, բաղեր ելն.

Ի՞նչ հոլով է որսդ. Ի՞նչպիսի՞ յօդ է դ (§ 81, 3, գիտող. 2). Ի՞նչ բանամաս է քաջասիրտ: Սա ի՞նչպիսի՞ ածական է. աստիճանականն, թէ անսատիճան (§ 69). Կազմել այս ածականի բաղդատական և գերազրական աստիճանները:

Քու երգը զուցէ իմ որդին կ'ուզէ: Քու կամ քո (§ 81, 3): Դուցէ մակբայ է: Ի՞նչո՞ւ:

Բազէն որ եկաւ=երբոր բազէն եկաւ. Ի՞նչ բանամաս է որ. մակբայ, թէ շաղկապ (տ. § 151): Որդիս լոեցաւ, ընեցաւ (տ. § 105): Սովորաբար լոել—լոեց. քնել—քնեց: Յանզի համար է բանաստեղծը գրելունցաւ, ընեցաւ: Ուազմ նշանակում է պատերազմ:



Զեռնարկս կարելի է ստանալ «Պետալոցցի» Կովկասիան
Ըսկերութեան խանութից (Тифлисъ, Михайловский проспектъ,
№ 101), ուր գանձում է պահեստը, և հեղինակից (Тифлисъ,
Коргановская ул., № 9, кв. 2):

Յ. ԴԱՂԲԱՋԵՍԻ ԱՃԽԱՏՈՒԹԻՒՆԵՐԸ

- 1) Ռուս - Հայ լիակատար բառարան, գինը 8 րուբլի, կազմած
9 րուբլի:
- 2) Հայ-Ռուս լիակատար բառարան, գինը 6 րուբլի, կազմած
6 ր. 50 կոպէկ:
- 3) Ֆրագանի Ռուս-Հայ բառարան, բաժանորդագինը 2 ր. 50
կոպ. Այս բառարանը շուտով լոյս կը տիսնէ:
- 4) Ռուսինի ինքնուսոյցներ, ա. տարի, գինը 25 կոպ., ր. տարի,
գինը 40 կոպէկ:
- 5) „Русский язык въ армянскихъ школахъ“, պատկերազարդ
շրեղ այբբենարան հայոց հկեղեցական-ծխական ուսում-
նութանների համար, գինը 20 կոպ. Շուտով լոյս կը տիսնէ
սրտ երրորդ բարեփոխած տարագրութիւնը:
- 6) Հանրագիտական բառարան, Երկնատոր, ընկարծակ: Բաժա-
նորդագինը 8 ր.
Գիմել հեղինակին հետեւալ պարզ հասցէով:

Վъ. գ. Տիֆլիսъ. А. Դագբաշյանу.

ՀՀ Ազգային գրադարան



NL0245651

6232

